Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՈՒՍԱՐԱՐ

9-10(367-368)
20.04.2014
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ❁ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ❁ Lusarar

## ԴԵՄՔՈՎ՝ ԿՐԿԻՆ ԴԵՊԻ ԳԻՐՔԸ

Վերջերս մի խումբ երիտասարդներ Արցախում հանդես են եկել ուշագրավ նախաձեռնությամբ՝ ստեղծել են գրքասերների ակումբ: Մեր օրերում ընթերցանության և առհասարակ, գրքի հանդեպ նկատելի անտարբերության պայմաններում նման ակումբ ստեղծելը ուշագրավ է նրանով, որ նախաձեռնության հեղինակները հենց երիտասարդներն են՝ պետական, հասարակական կառույցների աշխատողներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներ: Ասել է թե՝ գիրքը դեռևս չի կորցրել գիտելիքի աղբյուր լինելու նախնական նշանակությունը և հետայսու էլ շարունակելու է մնալ բոլորիս հոգեկիցն ու վստահելի խորհրդատուն:

Այն թյուր կարծիքը կա, թե համացանցը, հանդիսանալով տեղեկատվության անսպառ աղբյուր, երկրորդական պլան է մղել գիրքը: Բայց դա բնավ այդպես չէ: Աշխարհում այսօր տպագրվում են ավելի շատ գրքեր, քան հրատարակվել է 20, 30 տարի առաջ, ընդ որում, լույս են տեսնում ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից գրողների երկեր: Այս առումով Երևանում արդեն գրահրատարակչական իսկական բում է սկսվել, որի առանցքում դարձյալ երիտասարդներն են: Նկատենք միաժամանակ, որ Հայաստանը դեռևս խորհրդային տարիներին, բնակչության համամասնությամբ հրատարակվող գրքերի քանակով, ամենաընթերցասեր հանրապետությունն էր համարվում: Նույնը կարելի է ասել նաև Արցախի մասին՝ մի վերապահությամբ սակայն, որ թեպետ ԼՂԻՄ-ում հրատարակչատուն չկար, այդուհանդերձ, Ստեփանակերտի (նաև շրջկենտրոնների) գրախանութներում երբեք գնորդների պակաս չէր զգացվում: Միջին և ավագ սերունդների ներկայացուցիչները դա կարող են հաստատել:

Դեմքով կրկին դեպի գիրքը շրջվելը պայմանավորված է առաջին հերթին ընթերցասիրական ավանդույթի վերականգնման անհրաժեշտությամբ, և արժանին պիտի հատուցել այն երիտասարդներին, ովքեր գնահատելով դրա կարևորությունը՝ հիմնադրել են Արցախի գրքասերների ակումբը (երբևէ Լեռնային Ղարաբաղում կար այդպիսի պետական կառույց): Հասարակական թե պետական՝ կարևորն այդ լավ ավանդույթի վերականգնումն է, որը, կարծում ենք՝ աստիճանաբար ավելի շատ հետևորդներ կունենա:

Այս նկատառմամբ հարց է առաջանում՝ իսկ ինչո՞ւ դպրոցներում նույնպես չստեղծել գրքասերների խմբակներ: Մատաղ սերունդն Արցախում, մեղմ ասած, աչքի չի ընկնում ընթերցասիրությամբ, բայց ճիշտ չի լինի մեղքը բարդել միայն ուսուցիչների վրա, քանզի խնդիրն առավելապես սոցիալ-հասարակական հենք ունի: Չխորանալով դրա իրական պատճառների մեջ, արձանագրենք միայն այն փաստը, որ հեռուստատեսությունը և մամուլը քիչ են պրոպագանդում գիրքը, նոր հրատարակությունների դեպքում էլ միշտ չէ, որ շնորհանդեսներ ու քննարկումներ են կազմակերպվում գրադարաններում ու դպրոցներում:

Համոզված ենք՝ ամեն կրթօջախում էլ կան ակտիվ ընթերցողներ, որոնց նախասիրությունը զարգացնելու և համակարգելու գործում նշանակալից դերակատարություն կարող են ունենալ գրքասերների խմբակները: Շուրջ երկու ամսից կսկսվեն ամառային արձակուրդները, և եթե դրանք հիմիկվանից ձևավորվեն, ապա հետաքրքիր քննարկումներով առավել հագեցած կդարձնեն ոչ միայն իրենց անդամների, այլև հասակակիցների արձակուրդային հանգիստը:

Մատաղ սերնդի մեջ ընթերցասիրություն սերմանելով՝ մենք նաև ապահովում ենք վաղվա քաղաքակիրթ հասարակությունը, որի առկայությունը ցանկացած երկրի զարգացած լինելու նախապայմանն է:

**«ԼՈՒՍԱՐԱՐ»**

## «Dasaran.am» ՑԱՆՑՈՒՄ ԵՆ ԱՐՑԱԽԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Ապրիլի 18-ին ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունում կարևոր իրադարձություն էր. նախարար Սլավա Ասրյանը և «Dasaran.am» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ Սուրեն Ալոյանը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր, որով տրվեց Արցախի դպրոցները կրթական ծրագրին միանալու մեկնարկը: Ինչպես տեղեկացրեց Ս. Ասրյանը, ՀՀ ԿԳՆ-ի հետ համագործակցության շրջանակներում հերթական համատեղ քայլն է արվում: Նա ողջունեց ծրագիրը և իր գոհունակությունը հայտնեց «Dasaran.am» թիմից, որի նախաձեռնությամբ ծրագրին Հայաստանի 1400 դպրոցների հետ այսօր միացան Արցախի 90 հանրակրթական դպրոցներ, ապագայում կմիանան մյուս հանրակրթական հաստատությունները: Նախարարը հույս հայտնեց, որ այն կդառնա համակարգի լիարժեք գործող ծրագրերից մեկը:




Ծրագրի հիմնադիր Սուրեն Ալոյանը մանրամասնեց նրա էությունը: Կրթական ծրագիրը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով հնարավորություն է տալիս բարձրացնել դպրոցների կառավարման արդյունավետությունն ու թափանցիկությունը: Մասնավորապես, այն հնարավորություն է տալիս կայքի միջոցով հետևել դպրոցականների հաճախելիության և առաջադիմության ցուցանիշներին, վերահսկել դպրոցի գործունեությունը: Ս. Ալոյանը հպարտությամբ հրապարակեց հետևյալ ցուցանիշները. երեքամսյա դիտարկումները 350 այն ծնողների շրջանում, որոնք «Dasaran.am»-ի միջոցով հետևում են իրենց երեխաների առաջադիմությանը և հաճախելիությանը, ցույց են տվել, որ դպրոցից երեխաների բացակայությունները նվազել են 22%-ով, առաջադիմությունը բարձրացել՝ 19%-ով:

Համակարգը ներդնելով՝ կրճատվեցին սահմանները Երևանի և մարզերի միջև, իսկ այսօր արդեն հնարավորություն է ստեղծվում սահմանները կրճատել ՀՀ-ի և ԼՂՀ-ի միջև: Ծրագիրը երկու հիմնական ուղղություն ունի: Մեկը էլեկտրոնային մատյանն է, որի շրջանակներում աշխատում են տնօրենները, ուսուցիչները, աշակերտները, ծնողները: Մյուսը երեխաներին նոր գիտելիքներ տալն է տարբեր առարկաներից: Այդ նպատակով կիրառվում են կրթելու նորարարական մեթոդներ՝ էլեկտրոնային ինտելեկտուալ և զարգացնող խաղեր: Բացի այդ, կազմակերպվում են տարաբնույթ օլիմպիադաներ և մրցույթներ, որոնք նույնպես խթանում են գիտելիք ստանալու երեխաների ձգտումը: Ծրագրի նպատակներից է՝ երեխաների մոտ կոտրել կարծրատիպը, որ կրթությունը ոչ թե պարտադիր, այլ անհրաժեշտ և հաճելի զբաղմունք է: Գործում է նաև հատուկ աշակերտների համար ստեղծված սոցիալական ցանց, որն օգնում է նրանց միջև կապերի ակտիվացմանը և զերծ է վնասակար տեղեկատվությունից: Ունեն առողջապահության էջ՝ համագործակցելով առողջապահության նախարարության հետ, որտեղ այցելուները կարող են իրենց հետաքրքրող տեղեկատվությունը ստանալ: Երեխաներին սովորեցնում են երթևեկության կանոնները: Ամեն օր թարմ տեղեկատվություն է տրվում աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների մասին: Մի խոսքով, աշակերտների ձեռքի տակ այն մի հանրագիտարան է:

Կրթական այս ծրագիրն աշխատում է մեծ ծանրաբեռնվածությամբ. ավելի քան 830 հազար օգտատեր ունի, որից 350 հազար՝ աշակերտներ, 36 հազար՝ ուսուցիչներ, ամեն օր 120-150 հազար մարդ է օգտվում դրանից:

Ծրագրի ներդրման շրջանակներում «Dasaran.am» կրթական ծրագրի աշխատանքային թիմը Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցում իրականացրեց Արցախի 90 դպրոցների ներկայացուցիչների վերապատրաստման գործընթացը:

Հավելենք, որ ծրագիրը գործում է անվճար հիմունքներով:

**Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

## ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ

ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունում հերթական անգամ հավաքվել էին հաճելի արարողության՝ առարկայական օլիմպիադայում հաղթած աշակերտների և նրանց ուսուցիչների պարգևատրությանը: Ողջույնի խոսք ասաց նախարար Սլավա Ասրյանը: Օլիմպիադայի արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ նախարարության կրթության և գիտության վարչության պետ Ռայա Մուսայելյանը: Ընթերցվեց նախարարի հրամանը մրցանակային տեղեր գրաված դպրոցականներին և նրանց ուսուցիչներին նախարարության դիպլոմով և դրամական պարգևով պարգևատրելու մասին: Ավանդույթի համաձայն, մրցանակակիր դպրոցականները պարգևատրվեցին նաև «Ճրագ» հիմնադրամի կողմից՝ յուրաքանչյուրն իր հաղթած առարկայի գծով գրքերով:



Պարգևատրումներն իրականացրին նախարար Ս. Ասրյանը, փոխնախարարներ Արմեն Սարգսյանը և Միքայել Համբարձումյանը:

Մրցանակակիրներին շնորհավորեց ԼՂՀ ԿԳ նախարար Ս. Ասրյանը: Նա ուրախությամբ փաստեց, որ ըստ առարկաների խորացված գիտելիքներ ցուցաբերած և հանրապետական փուլում մրցանակային տեղ գրաված աշակերտները կարողանում են պահպանել իրենց դիրքը նաև ՀՀ եզրափակիչ փուլում: Արդեն կան հաջողություններ:

Նախարարն ընդգծեց, որ նման ձեռքբերումները երկուստեք նվիրված ու քրտնաջան աշխատանքի արդյունք են: Տարիներ շարունակ ականատես ենք, որ հենց նմաններն են ամեն անգամ արժանանում մրցանակների: Անկասկած, այս երեխաները նաև իրենց նախընտրած բուհերում են լավ սովորելու և կյանքում իրենց արժանի տեղը գտնելու:

Նրանց այսօրվա հաջողությունները պայմանավորված են լավագույն ուսուցիչների աշխատանքով: ԿԳ նախարարն ուղղակի մի խնդրանք-պահանջով դիմեց մրցանակակիրներին և խորհուրդ տվեց այն փոխանցել ընկերներին. ընտրել մանկավարժի մասնագիտությունը՝ հաշվի առնելով, որ այսօրվա արդյունքներով նրանք պարտական են իրենց ուսուցիչներին: Բայց ինչ-որ ժամանակ հետո նրանց փոխարինողներ են հարկավոր: Եվ ցանկալի է, որ հենց նման երեխաները մանկավարժի մասնագիտությամբ փոխարինեն նրանց, իրենք էլ դառնան լավագույն մանկավարժներ և սերնդին հաղորդեն խոր գիտելիքներ: Այս գործընթացը եթե շարունակական լինի, հասարակությունը կզարգանա, որն էլ առաջընթացի հիմքն է: Ուրախալի է, որ փորձառու լավագույն ուսուցիչների կողքին նստած են նաև երիտասարդ մասնագետներ:

Պարգևատրվածների անունից ելույթ ունեցավ ֆիզմաթ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Սամվել Միրզախանյանը: Նա շնորհավորեց օլիմպիականներին՝ ստացած մրցանակների համար, շրջանավարտներին ցանկանալով բարեհաջող ընդունելություն, իսկ ցածր դասարանների աշակերտներին՝ նորանոր հաջողություններ հաջորդ օլիմպիադաներում, քանի որ օլիմպիադաները ոչ միայն հնարավորություն են տալիս ձեռք բերելու նոր գիտելիքներ, այլև ինքնահաստատման հրաշալի հնարավորություն են: Նաև շնորհակալություն հայտնեց իր դպրոցի՝ ֆիզմաթի տնօրինությանը, ուսուցիչներին՝ պարգևած խոր գիտլիքների համար և կրթության և գիտության նախարարությանը, որը խրախուսում է աշակերտների հաջողությունները:

***Սեփ. լրատվություն***

ՕԼԻՄՊԻԱԴԱ

# ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## *ԼՂՀ դպրոցականների 2013-2014-ուստարվա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքների*

ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 2013թ. դեկտեմբերի 28-ի N 257/Մ հրամանը` փետրվարի 24-ից մարտի 15-ն ընկած ժամանակահատվածում Ստեփանակերտի N 2 հիմնական դպրոցում 13 առարկաներից (հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն լեզու, պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա, հայոց եկեղեցու պատմություն, նախնական զինվորական պատրաստություն) անց է կացվել ԼՂՀ դպրոցականների 2013-2014 ուստարվա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը` Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլի ժամանակացույցին համապատասխան` յուրաքանչյուր առարկայի հատկացվելով առանձին օր: Շրջվարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժինները օլիմպիադայի շրջանային (քաղաքային) փուլի արդյունքների ամփոփման հիման վրա հանրապետական փուլին մասնակցելու իրավունք են տվել 349 դպրոցականների (անցած ուսումնական տարվա 337-ի փոխարեն), որից բացակայել է 3 աշակերտ: Ինչպես տեսնում ենք, մասնակիցների ընդհանուր քանակն աճել է, բայց Շահումյանի, Քաշաթաղի և Հադրութի շրջանների մասնակիցների քանակը նվազել է:

**Մասնակիցների քանակն ըստ շրջանների**

| | 2009-2010 | 2010-2011 | 2011-2012 | 2012-2013 | 2013-2014 |
|---|---|---|---|---|---|
| ք.Ստեփանակերտից | 77 մասն. | 82 մասն. | 85 մասն. | 85 մասն. | 108 մասն. |
| Ասկերանի շրջանից | 28 | 24 | 40 | 46 | 46 |
| Մարտակերտի շրջանից | 25 | 37 | 41 | 46 | 46 |
| Մարտունու շրջանից | 27 | 41 | 55 | 53 | 49 |
| Հադրութի շրջանից | 15 | 29 | 36 | 40 | 38 |
| Շուշիի շրջանից | 11 | 17 | 17 | 17 | 19 |
| Շահումյանի շրջանից | 5 | 12 | 15 | 17 | 14 |
| Քաշաթաղի շրջանից | 15 | 21 | 26 | 33 | 29 |
| **Ընդամենը** | 203 | 263 | 315 | 337 | 349 |

**Մասնակիցների քանակն ըստ առարկաների**

| ՀՀ | | 2009-2010 | 2010-2011 | 2011-2012 | 2012-2013 | 2013-2014 |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հայոց լեզու առարկայից | 45 | 58 | 82 | 63 | 69 |
| 2 | Հայ գրականությունից | 18 | 24 | 25 | 24 | 29 |
| 3 | Ռուսաց լեզվից | 37 | 36 | 39 | 45 | 41 |
| 4 | Անգլերեն լեզվից | 22 | 33 | 31 | 24 | 39 |
| 5 | Պատմությունից | 15 | 27 | 34 | 48 | 34 |
| 6 | Աշխարհագրությունից | 19 | 22 | 27 | 22 | 26 |
| 7 | Մաթեմատիկայից | 19 | 24 | 21 | 24 | 15 |
| 8 | Ֆիզիկայից | 4 | 5 | 4 | 8 | 12 |
| 9 | Քիմիայից | 11 | 12 | 18 | 22 | 17 |
| 10 | Կենսաբանությունից | 20 | 18 | 27 | 20 | 20 |
| 11 | Ինֆորմատիկայից | 1 | 4 | 7 | 4 | 1 |
| 12 | Հայոց եկեղեցու պատմություն | – | – | – | 9 | 14 |
| 13 | Նախնական զինվ. պատրաստ. | – | – | – | 24 | 32 |
| | Ընդամենը | 203 | 263 | 315 | 337 | 349 |

Անցյալ տարվա համեմատ մասնակիցների քանակն աճել է հայոց լեզու, հայ գրականություն, քիմիա, աշխարհագրություն, ֆիզիկա, հայոց եկեղեցու պատմություն և նախնական զինվորական պատրաստություն առարկաներից:

Օլիմպիադայի մասնակիցների գրավոր աշխատանքները ստուգելու նպատակով կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծվել են առարկայական ստուգող հանձնաժողովներ` ԱրՊՀ համապատասխան ամբիոնների վարիչների ղեկավարությամբ և Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների փորձառու ուսուցիչների մասնակցությամբ: Գրավոր աշխատանքների ստուգումները բոլոր առարկաներից սկսվել են նույն օրը, անհրաժեշտության դեպքում շարունակվել նաև հաջորդ օրը: Արդյունքները հանրապետական հանձնաժողովի կողմից ամփոփվել են, ներկայացվել նախարարին և նույն օրը տեղադրվել նախարարության www.edu.nkr.am կայքում: Բողոքարկման օրերին հանրապետական հանձնաժողովին դիմել են հայոց լեզու, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, ՆԶՊ, ռուսաց լեզու առարկաներից 23 մասնակիցներ, որոնց հնարավորություն է տրվել ծանոթանալու իրենց գրավոր աշխատանքներին: Հանրապետական առարկայական հանձնաժողովների նախագահների կողմից կատարվել է գրավոր աշխատանքների վերստուգում, և արդյունքում 19 գրավոր աշխատանքների միավորները փոխվել են հօգուտ աշակերտների: Փոփոխության մասին ևս տեղեկատվություն է տեղադրվել նախարարության վերոնշյալ կայքում: Օլիմպիադայի արդյունքների ամփոփումից հետո մրցանակային տեղերն ըստ առարկաների հետևյալն են.

| | | |
|---|---|---|
| Հայոց լեզվից | 1 աշակերտ | 1-ին տեղ |
| | 1 աշակերտ | 2-րդ տեղ |
| | 8 աշակերտ | 3-րդ տեղ |
| Հայ գրականությունից | 2 աշակերտ | 1-ին տեղ |
| | 1 աշակերտ | 2-րդ տեղ |
| | 1 աշակերտ | 3-րդ տեղ |
| Ռուսաց լեզվից | 1 աշակերտ | 1-ին տեղ |
| | 1 աշակերտ | 2-րդ տեղ |
| | 2 աշակերտ | 3-րդ տեղ |
| Անգլերենից | 1 աշակերտ | 1-ին տեղ |
| | 3 աշակերտ | 2-րդ տեղ |
| | 5 աշակերտ | 3-րդ տեղ |
| Պատմությունից | 2 աշակերտ | 1-ին տեղ |
| | 2 աշակերտ | 2-րդ տեղ |
| | 1 աշակերտ | 3-րդ տեղ |
| Աշխարհագրությունից | 2 աշակերտ | 3-րդ տեղ |
| Մաթեմատիկայից | 1 աշակերտ | 2-րդ տեղ |
| | 4 աշակերտ | 3-րդ տեղ |
| Կենսաբանությունից | 2 աշակերտ | 3-րդ տեղ |
| Քիմիայից | – | – |
| Ֆիզիկայից | 1 աշակերտ | 2-րդ տեղ |
| | 1 աշակերտ | 3-րդ տեղ |
| ինֆորմատիկայից | – | – |
| Հայոց եկեղեցու պատմությունից | 2 աշակերտ | 3-րդ տեղ |
| Նախնական զինվորական պատրաստությունից | – | 1-ին տեղ |
| | 1 աշակերտ | 2-րդ տեղ |
| | 6 աշակերտ | 3-րդ տեղ |

**Վերջին հինգ տարվա մրցանակային տեղերի քանակն ըստ առարկաների.**

| | 2009-2010 մրց.տեղ | 2010-2011 մրց.տեղ | 2011-2012 մրց.տեղ | 2012-2013 մրց.տեղ | 2013-2014 մրց.տեղ |
|---|---|---|---|---|---|
| Հայոց լեզվից | 5 | 9 | 6 | 4 | 10 |
| Հայ գրականությունից | 3 | 4 | 6 | 6 | 4 |
| Ռուսաց լ. և գրականությունից | 6 | 6 | 5 | 6 | 4 |
| Անգլերենից | 3 | 7 | 7 | 8 | 9 |
| Պատմությունից | 3 | 3 | 8 | 8 | 5 |
| Աշխարհագրությունից | 4 | 5 | 3 | 1 | 2 |
| Մաթեմատիկայից | 2 | 2 | 4 | 2 | 5 |
| Ֆիզիկայից | – | 1 | 3 | 3 | 2 |
| Քիմիայից | 3 | – | 3 | – | – |
| Կենսաբանությունից | 4 | 2 | 2 | 2 | 2 |
| Ինֆորմատիկայից | – | 1 | 2 | 1 | – |
| Հայոց եկեղեցու պատմություն | – | – | – | 2 | 2 |
| Նախնական զինվորական պատրաստությունից | – | – | – | 8 | 7 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 33 | 40 | 49 | 51 | 52 |

Ռուսաց լեզու, հայ գրականություն, պատմություն, ինֆորմատիկա, ֆիզիկա և ՆԶՊ առարկաներից նախորդ տարվա համեմատ մրցանակային տեղերի քանակը նվազել է, իսկ հայոց լեզու, անգլերեն, մաթեմատիկա և աշխարհագրություն առարկաներից մրցանակային տեղերն ավելացել են:

Այսպես, հանրապետական փուլի արդյունքներով`

| 2009-2010 ուստարում | 2010-2011 ուստարում | 2011-2012 ուստարում | 2012-2013 ուստարում | 2013-2014 ուստարում |
|---|---|---|---|---|
| 4 աշ.գրավել են 1-ին տեղ | 4 աշ.գրավել են 1-ին տեղ | 4 աշ.գրավել են 1-ին տեղ | 9 աշ.գրավել են 1-ին տեղ | 7 աշ.գրավել են 1-ին տեղ |
| 10 աշ.գրավել են 2-րդ տեղ | 10 աշ.գրավել են 2-րդ տեղ | 16 աշ.գրավել են 2-րդ տեղ | 15 աշ.գրավել են 2-րդ տեղ | 11 աշ.գրավել են 2-րդ տեղ |
| 19 աշ.գրավել են 3-րդ տեղ | 26 աշ.գրավել են 3-րդ տեղ | 29 աշ.գրավել են 3-րդ տեղ | 27 աշ.գրավել են 3-րդ տեղ | 34 աշ.գրավել են 3-րդ տեղ |
| **33 մրցանակային տեղ** | **40 մրցանակային տեղ** | **49 մրցանակային տեղ** | **51 մրցանակային տեղ** | **52 մրցանակային տեղ** |

Այս տարի մրցանակային տեղ չունեցանք քիմիա և ինֆորմատիկա առարկաներից. ի դեպ, քիմիա առարկայից մրցանակային տեղ չենք ունեցել նաև անցած ուսումնական տարում: Այս ուսումնականում մրցանակային տեղերի մեծ մասը բաժին հասավ հայոց լեզու (10 մրցանակային տեղ), անգլերեն (9 մրցանակային տեղ), մաթեմատիկա (5 մրցանակային տեղ), /պատմություն (5 մրցանակային տեղ) և ՆԶՊ (7 մրցանակային տեղ) առարկաներին:

Նախորդ ուսումնական տարվա համեմատ մրցանակային տեղերն աճել են Ստեփանակերտի, Մարտակերտի և Հադրութի շրջաններում:

**Ըստ շրջանների, մրցանակային տեղերի քանակն է.**

| | 1-ին տեղ | 2-րդ տեղ | 3-րդ տեղ | ակտիվ մասնակից | մրց.տ./ակտ մ. 2013-2014 |
|---|---|---|---|---|---|
| ք.Ստեփանակերտ | 3 | 8 | 16 | 34 | 27/34 |
| Ասկերանի շրջան | 1 | – | 4 | 12 | 5/12 |
| Մարտակերտի շրջան | 1 | 1 | 5 | 13 | 7/13 |
| Մարտունու շրջան | 2 | 2 | 5 | 19 | 9/19 |
| Հադրութի շրջան | – | – | 3 | 11 | 3/11 |
| Շուշիի շրջան | – | – | – | 2 | -/2 |
| Քաշաթաղի շրջան | – | – | – | 5 | -/5 |
| Շահումյանի շրջան | – | – | 1 | - | 1/- |
| **Ընդամենը** | 7 | 11 | 34 | 96 | 52/96 |

Այսպիսով` մրցանակային տեղերի քանակի առումով 1-ին տեղում է Ստեփանակերտի թիմը (27 մրցանակային տեղ` 25%), 2-րդ տեղում է Մարտունու թիմը (9 մրցանակային տեղ` 18%) և 3-րդ տեղում է Մարտակերտի թիմը (7 մրցանակային տեղ` 15%):

Այս գոհացուցիչ փաստերի կողքին ուզում եմ կանգ առնել բոլորիս հուզող մեկ այլ հարցի վրա: Ինչո՞վ բացատրել, որ աշխարհագրություն առարկայի 26 մասնակիցներից միայն երկուսին հաջողվեց գրավել 3-րդ տեղ, կենսաբանություն առարկայի 20 մասնակիցներից ընդամենը 2 հոգի գրավեցին 3-րդ մրցանակային տեղ, իսկ հայ գրականություն առարկայի 29 մասնակիցներից ընդամենը 4 հոգի գրավեցին մրցանակային տեղ: Ավելացնեմ նաև, որ այս տարի դրական` 8 միավորային շեմը չհաղթահարած մասնակիցների քանակն ըստ առարկաների հետևյալն է.

- հ. լեզու առարկայի 69 մասնակիցներից - 2 աշակերտ
- հայ գրականություն առարկայի 29 մասնակիցներից - 7 աշակերտ
- ռուսաց լեզու առարկայի 41 մասնակիցներից - 2 աշակերտ
- անգլերեն լեզու առարկայի 39 մասնակիցներից - 1 աշակերտ
- մաթեմատիկա առարկայի 15 մասնակիցներից - 11 աշակերտ
- ֆիզիկա առարկայի 12 մասնակիցներից - 8 աշակերտ
- կենսաբանություն առարկայի 20 մասնակիցներից - 7 աշակերտ
- պատմություն առարկայի 34 մասնակիցներից - 6 աշակերտ
- աշխարհագրություն առարկայի 26 մասնակիցներից - 8 աշակերտ
- ինֆորմատիկա առարկայի 1 մասնակցից - 1 աշակերտ
- քիմիա առարկայի 17 մասնակիցներից - 13 աշակերտ
- հայոց եկեղեցու պատմություն առարկայի 14 մասնակիցներից - 2 աշակերտ
- ՆԶՊ առարկայի 32 մասնակիցներից - 7 աշակերտ

Ինչպես տեսնում ենք, ոչ մի առարկայից լրիվ դրական միավորներ չեն գրանցվել: Այսինքն` դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի 349 մասնակիցներից 75-ի գրավոր աշխատանքները (22%-ը) առարկայական ստուգող հանձնաժողովների կողմից գնահատվել են «անբավարար» (8 միավորից ցածր): Չնայած անցած տարվա համեմատ 8-ից ցածր միավոր վաստակած մասնակիցների քանակը նվազել է, բայց արդյունքը դեռևս գոհացուցիչ չէ, քանի որ ուսումնասիրելով շրջանային փուլի արդյունքները, նկատվում է, որ մասնակիցների մի ստվար մասի միավորները օլիմպիադայի հանրապետական փուլում բավականին` 4-5 բալ, երբեմն էլ նույնիսկ ավելի, նվազում են: Չենք բացառում նաև այն դեպքերը, երբ հաճելիորեն նկատում ենք, որ մասնակիցների մի մասի միավորները շրջանային փուլի համեմատ աճել են:

## ՕԼԻՄՊԻԱԴԱ

Այժմ կանգ առնենք նաև հանրապետության տարածքում գործող 3 ավագ, 5 հոսքային և Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ ու ֆիզմաթ դպրոցների աշակերտների ինչպես մասնակցության, այնպես էլ ակտիվության հարցի վրա: Քանակական տեսանկյունից պատկերը հետևյալն է.

| ՀՀ | Դպրոցը | հ.լեզու | հայ գրակ. | ռուսաց լեզու | օտար լեզու | պատմ. | մաթեմատիկա | քիմիա | կենսաբանություն | ֆիզիկա | աշխարհ. | ինֆորմ. | ՀԵՊ | ՆԶՊ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ստեփ. հ.8 ավագ դպ. | – | 1 | 1 | 2 | 6 | – | 1 | – | – | 1 | – | – | – | 12 |
| 2 | Ստեփ. հ.11 ավագ դպ. | 8 | 3 | 2 | 8 | 1 | 1 | 3 | 7 | – | 1 | – | 2 | 3 | 39 |
| 3 | Շուշիի Մուրացանի անվան ավագ | 8 | – | 3 | 2 | – | – | – | – | – | – | – | – | – | 13 |
| 4 | Ասկերանի մ/դ | 1 | – | 1 | 1 | – | – | 1 | – | 3 | – | – | – | 1 | 8 |
| 5 | Մարտակերտի հ. 1 մ/դ | 5 | 3 | 2 | 3 | 2 | 3 | – | 2 | – | – | – | – | – | 20 |
| 6 | Մարտունու հ.1 մ/դ | 1 | – | 3 | – | 3 | – | 2 | 1 | – | – | – | – | 1 | 11 |
| 7 | Ճարտարի հ. 1 մ/դ | – | – | – | 3 | 3 | – | 1 | 3 | – | – | – | – | 1 | 11 |
| 8 | Հադրութի մ/դ | 5 | 1 | 6 | 4 | 1 | 1 | – | – | – | 2 | – | – | 2 | 22 |
| 9 | Ստեփ. հ. 3 մ/դ | – | – | 9 | 4 | 1 | – | 1 | – | – | 1 | – | – | – | 16 |
| 10 | Ֆիզմաթ | 6 | 1 | 1 | 3 | – | 6 | – | 1 | 5 | 2 | 1 | – | – | 26 |

Իսկ որակական առումով վերոնշյալ դպրոցներում պատկերը հետևյալն է.

հայոց լեզու առարկայի 10 մրցանակային տեղերից 3-ը բաժին հասավ Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի մասնակիցներին: Հայ գրականություն առարկայի 4 մրցանակային տեղերից 1-ական բաժին հասավ Ստեփանակերտի հ. 11 և հ. 8 ավագ դպրոցների սաներին: Ռուսաց լեզու առարկայի 4 մրցանակային տեղերը զբաղեցրին Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ և Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցների աշակերտները: Օտար լեզու առարկայի 9 մրցանակային տեղերից 8-ը բաժին հասավ Ստեփանակերտի ֆիզմաթ, հ. 11 ավագ, հ. 3 միջնակարգ, Մարտակերտի հ. 1 դպրոցների աշակերտներին: Պատմություն առարկայի 5 մրցանակային տեղերից 4-ը զբաղեցրին Ստեփանակերտի հ. 8 ավագ, Ճարտարի հ. 1 և Մարտակերտի հ. 1 միջնակարգ դպրոցների ներկայացուցիչները: Մաթեմատիկա և ֆիզիկա առարկաների մրցանակային 7 տեղերից 5-ը գրավեցին ֆիզմաթ դպրոցի սաները: Կենսաբանություն առարկայի մրցանակային 2 տեղերը բաժին հասան Ճարտարի հ. 1 դպրոցին, իսկ աշխարհագրություն /2/, հայոց եկեղեցու պատմություն /2/ և նախնական զինվորական պատրաստություն /6/ առարկաների 10 մրցանակային տեղերից ոչ մեկը ավագ և հոսքային դպրոցների մասնակիցներին բաժին չհասավ:

Ըստ արդյունքների՝ ավագ, հոսքային և 2 միջնակարգ (Ստեփանակերտի հ. 3 և ֆիզմաթ) դպրոցների մրցանակային տեղերի և ակտիվ մասնակցության համար պարգևատրվածների քանակն ունի այսպիսի պատկեր.

| հհ | Հոսանք | Առարկան | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հ.լեզու | Հ.գրակ. | Ռ.լեզու | Օտ.լեզու | Մաթեմ. | Ֆիզիկա | Քիմիա | Կենսա | Պատմ. | Աշխարհ | Ինֆորմ. | ՀԵՊ | ՆԶՊ | Մրցանակային տեղ/ գովասանագիր |
| 1 | Ստեփ. հ. 8 ավագ դ. | – | 1/- | -/1 | – | – | – | – | – | 1/- | – | – | – | – | 2/1 |
| 2 | Ստեփ. հ. 11 ավագ դ. | 3/5 | 1/- | 1/1 | 4/1 | – | – | – | -/1 | -/1 | -/1 | – | -/2 | – | 9/12 |
| 3 | Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոց | – | – | – | -/1 | – | – | – | – | – | – | – | – | – | -/1 |
| 4 | Ասկերանի մ/դ | – | – | – | – | – | – | -/1 | – | 1/- | – | – | – | -/1 | 1/2 |
| 5 | Մարտակերտի հ.1 մ/դ | -/2 | 1/1 | – | 1/- | 1/- | – | – | – | 1/- | – | – | – | – | 4/3 |
| 6 | Մարտունու հ.1 մ/դ | -/1 | – | – | – | – | – | -/2 | -/1 | – | – | – | – | – | -/4 |
| 7 | Ճարտարի հ. 1 մ/դ | – | – | – | -/2 | – | – | – | 2/- | 2/- | – | – | – | – | 4/2 |
| 8 | Հադրութի մ/դ | -/4 | – | 1/1 | -/2 | – | – | – | – | – | – | – | – | – | 1/7 |
| 9 | Ստեփ. հ. 3 մ/դ | – | – | 2/6 | 1/-2 | – | – | – | – | -/1 | – | – | – | – | 3/9 |
| 10 | Ֆիզմաթ | -/4 | – | – | 2/1 | 3/1 | 2/3 | – | – | – | – | – | – | – | 7/9 |

Երբ համեմատություն ենք անցկացնում հանրապետությունում գործող ավագ և հոսքային դպրոցների մասնակիցների օլիմպիադայի հանրապետական փուլում ցուցաբերած արդյունքների միջև՝ ակամայից խորհելու տեղիք են տալիս նաև այսպիսի փաստերը.

- Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցի 9-12-րդ դասարաններում սովորող 362 աշակերտներից օլիմպիադային մասնակցել են 12-ը, որից միայն մեկ աշակերտ 2 առարկայից արժանացել է մրցանակի:



- Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի 9-12-րդ դասարաններում ընդգրկված 563 աշակերտներից օլիմպիադային մասնակցել է 39 հոգի, որից մրցանակային տեղ գրավել է 9 աշակերտ:

- Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցի 9-12-րդ դասարաններում սովորող 86 աշակերտներից 13-ին հաջողվել է մասնակցել օլիմպիադայի հանրապետական փուլին: Բայց նրանցից ոչ մեկը մրցանակային տեղ չի գրավել:

- Ասկերանի միջնակարգ դպրոցի 9-12-րդ դասարաններում սովորում են 67 աշակերտ, որից 8-ը մասնակցել է օլիմպիադայի հանրապետական փուլին, բայց նրանցից միայն մեկն է արժանացել մրցանակի:

- Մարտակերտի հ. 1 միջնակարգ (հոսքային) դպրոցի 9-12-րդ դասարանների 190 աշակերտներից 20-ին է երաշխավորվել մասնակցելու օլիմպիադայի հանրապետական փուլին, իսկ նրանցից 4-ը գրավել են մրցանակային տեղեր:

- Մարտունու հ. 1 միջնակարգ (հոսքային) դպրոցի 9-12-րդ դասարանների 193 աշակերտներից օլիմպիադայի հանրապետական փուլի 11 մասնակիցներից ոչ մեկը մրցանակային տեղ չի գրավել:

- Ճարտարի հ. 1 միջնակարգ (հոսքային) դպրոցի 9-12-րդ դասարաններում ընդգրկված 147 աշակերտներից 11-ը մասնակցել են օլիմպիադայի հանրապետական փուլին և զբաղեցրել 4 մրցանակային տեղեր:

Հադրութի միջնակարգ (հոսքային) դպրոցի 9-12-րդ դասարանների 175 աշակերտներից 22-ին հաջողվել է մասնակցել օլիմպիադայի հանրապետական փուլին, որից միայն մեկ աշակերտ է գրավել մրցանակային տեղ:

Կամ ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցից օլիմպիադային մասնակցում էր ընդամենը 4 աշակերտ, հ. 5 հիմնական դպրոցից՝ 5, հ. 7-ից՝ 2, հ. 10-ից՝ 2 աշակերտ, իսկ հ. 2, հ. 4, հ. 6, հ. 9 և հ. 12 հիմնական դպրոցներն օլիմպիադայում ոչ մի մասնակից չունեցան:

Իսկ շրջաններում պատկերն այսպես է. Ասկերանի շրջանի 33 հանրակրթական դպրոցներից մասնակիցներ եղել են միայն 12 դպրոցից, Մարտունու շրջանի 36 դպրոցից՝ դարձյալ 12 դպրոցից, Մարտակերտի շրջանի 36 դպրոցից՝ 11 դպրոցից, Հադրութի 25 դպրոցներից՝ 8 դպրոցից, Շուշիի 9 դպրոցներից՝ 4 դպրոցից, Շահումյանի 16 դպրոցներից՝ 7 դպրոցից և Քաշաթաղի 53 դպրոցներից՝ 10 դպրոցից:

Եզրակացությունները թողնենք նախ՝ դպրոցների տնօրինությանը, ապա նաև՝ շրջվարչակազմերի աշխատակազմերի կրթության բաժիններին:

Այս փաստերի կողքին հարկ է նշել նաև հանրապետության հանրակրթական այն դպրոցների անունները, որոնք ամեն տարի մեծ պատասխանատվությամբ են պատրաստվում օլիմպիադային, և նրանց սաներն արդարացնում են ուսուցիչների հույսերը: Դրանք են՝ ֆիզմաթ դպրոցը, Ասկերանի շրջանի Խաչմաչի, Խնապատի, Նորագյուղի, Մարտակերտի շրջանի Հաթերքի, Ն. Սեյսուլանի, Թալիշի, Մարտունու շրջանի Բերդաշենի, Հերհերի, Գիշու և Թաղավարդի, Հադրութի շրջանի Մեծ Թաղերի, Մարիամաձորի միջնակարգ դպրոցները:

Այս տարի ևս օլիմպիադայի շրջանային (քաղաքային) փուլի ընթացքը տևեց 3 օր, իսկ հանրապետական փուլում յուրաքանչյուր առարկայի հատկացվեց առանձին օր, ինչը հնարավորություն տվեց աշակերտներին իրենց գիտելիքները ցուցադրելու 2 և ավելի առարկաներից. դրա շնորհիվ Ստեփանակերտ քաղաքի տարբեր դպրոցների 5 աշակերտների հաջողվեց օլիմպիադայի հանրապետական փուլում տարբեր առարկաներից գրավել մրցանակային տեղեր.

- Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի 12-րդ դասարանի աշակերտ Սամվել Միրզախանյանը ֆիզիկա և մաթեմատիկա առարկաներից գրավել է, համապատասխանաբար, 2-րդ և 3-րդ տեղերը:

- Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Արման Ասրյանը պատմություն և հայ գրականություն առարկաներից գրավել է 2-րդ և 3-րդ տեղերը:



- Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Լուսինե Մարտիրոսյանը հայոց լեզու և հայ գրականություն առարկաներից գրավել է, համապատասխանաբար, 1-ին և 2-րդ տեղերը, իսկ նույն դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Աննա Արզումանյանը անգլերեն և հայոց լեզու առարկաներից գրավել է 1-ին և 3-րդ տեղերը:

- Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Մերի Սողոմոնյանը հայ գրականություն և հայոց լեզու առարկաներից գրավել է 1-ին և 3-րդ տեղերը:

Շնորհավորենք բոլոր 5 աշակերտներին և շնորհակալություն հայտնենք նրանց՝ օլիմպիադայում մեկից ավել առարկաներից լավագույն արդյունքների հասնելու համար:

Ուրախությամբ նշենք, որ մրցանակային տեղերի բաշխումից հետո արձանագրվել է հետևյալ փաստը. հանրակրթական դպրոցների մի շարք ուսուցիչների մեկից ավել աշակերտներ մրցանակային տեղեր են գրավել: Այսպես՝

- Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի անգլերենի ուսուցչուհի Հասմիկ Սեյրանյանի չորս սաներից մեկը գրավել է 1-ին, 2-ը՝ 2-րդ և 1-ը՝ 3-րդ մրցանակային տեղ:

- Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Արմենուհի Խանումյանի երկու աշակերտներից մեկը գրավել է 1-ին և 2-րդ, իսկ մյուսը՝ 3-րդ մրցանակային տեղեր:

- Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Վարազդատ Գևորգյանի երկու աշակերտները գրավել են մրցանակային 3-րդ տեղ:

- Նույն դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ Աշոտ Ապրեսյանի 2 սաները գրավել են 2-րդ և 3-րդ մրցանակային տեղեր:

- Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Լուսինե Ավանեսյանի սան Մերի Սողոմոնյանը հայ գրականություն և հայոց լեզու առարկաներից գրավել է համապատասխանաբար 1-ին և 3-րդ մրցանակային տեղեր, իսկ Ճարտարի միջնակարգ դպրոցի կենսաբանության ուսուցիչ Ջավադ Հակոբյանի 2 սաները գրավել են 3-րդ մրցանակային տեղ:

Ոչ պակաս ուրախացնող փաստ է նաև այն, որ մրցանակային տեղեր գրաված աշակերտների ուսուցիչների շարքում հերթական անգամ հանդիպում ենք Ստեփանակերտի հ. 1 ավագ դպրոցի ուսուցչուհի Հասմիկ Սեյրանյանի, Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Զոյա Մարտիրոսյանի, Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի ուսուցիչներ Սուսաննա Ներսեսյանի, Աշոտ Ապրեսյանի, Ասկերանի շրջանի Խաչմաչի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Աննա Ջիվանշիրյանի, Մարտակերտի հ. 1 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Նատաշա Պողոսյանի, Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Լուսինե Ավանեսյանի, Ճարտարի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Լուսինե Սաֆարյանի անուններին և, համոզված եմ, որ դեռ էլի կհանդիպենք:

Ինչ խոսք, յուրաքանչյուր մանկավարժ հպարտանում է իր սաների ձեռքբերումներով, իսկ եթե այդ հաջողությունը կրկնվում է հաջորդ տարիներին, այդ ուրախությունը համակում է և մեզ: Ինչպե՜ս չհպարտանանք, երբ արդեն երրորդ տարին է, ինչ օլիմպիադայի հաղթողների անվանացանկում նկատվում և այս ամբիոնից հաճելիորեն հնչեցվում են Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի աշակերտուհի Անահիտ Բաբայանի, Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցի աշակերտ Սամվել Միրզախանյանի, Դավիթ Հարությունյանի, Սերգեյ Հայրապետյանի, Ստեփանակերտի հ. 8 ավագ դպրոցի աշակերտ Արման Ասրյանի և Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի աշակերտներ Աննա Արզումանյանի, Լարիսա Գևորգյանի, Լուսինե Մարտիրոսյանի, Ասկերանի շրջանի Խաչմաչի միջնակարգ դպրոցի աշակերտուհի Էլլադա Հայրապետյանի, Մարտակերտի հ. 1 միջնակարգ դպրոցի աշակերտուհի Լիլիթ Հարությունյանի, Մարտունու շրջանի Ճարտարի հ. 1 միջնակարգ դպրոցի աշակերտուհի Ժենյա Հարությունյանի, Բերդաշենի միջնակարգ դպրոցի աշակերտուհի Մերի Սողոմոնյանի, Մարտակերտի շրջանի Թալիշի միջնակարգ դպրոցի աշակերտուհի Լիանա Իսախանյանի անունները: Ահա այն աշակերտները, ովքեր առանձնացան ոչ միայն մրցանակային տեղեր գրավելու առումով, այլև նրանով, որ նրանց, ինչպես անցած տարի, այս տարի ևս իրավունք տրվեց մասնակցելու օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքներն ամփոփելով՝ հանրապետական հանձնաժողովի կազմկոմիտեի որոշմամբ 12 առարկաներից (բացի ինֆորմատիկայից) լավագույն արդյունք ցուցաբերած 60 աշակերտներ իրավունք ստացան մասնակցելու նաև Հայաստանի Հանրապետությունում մարտ, ապրիլ և մայիս ամիսներին կայանալիք օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

Շնորհավորենք և շնորհակալություն հայտնենք օլիմպիադայի մրցանակակիր բոլոր աշակերտներին և ցանկանանք, որ նրանք մշտապես հաղթող լինեն գիտելիք տանող ճանապարհի բոլոր խաչմերուկներում: Շնորհակալություն նաև իրենց սաների հաջողությամբ հպարտացող ուսուցիչներին, քանզի այսօրվա մեր ուրախությունը նրանց բարեխիղճ աշխատանքի ապացույցն է:

**Ռ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ**
**ԿԳ վարչության պետ**

ԳՈՐԾԸՆԹԱՑ

# ԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ, ՈՐՏԵՂ ԼՈՒՐՋ ՉԵՆ ՎԵՐԱԲԵՐՎԵԼ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆԸ



*ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնը մարտի 3-12-ը հանրապետության հանրակրթական բոլոր ուսումնական հաստատությունների 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում անց է կացրել սովորողների արտաքին ընթացիկ գնահատում: **«Լուսարար»**-ի խնդրանքով արդյունքներն ամփոփում է ԼՂՀ ԳԹԿ տնօրեն **Յուրի ՔԱՐԱՄՅԱՆԸ:***

- Արտաքին ընթացիկ գնահատումն անց է կացվել հետևյալ առարկաներից. 5-րդ դասարան՝ մայրենի, մաթեմատիկա, բնագիտություն, անգլերեն, 7-րդ դասարան՝ հայ գրականություն, երկրաչափություն, հայոց պատմություն, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, ռուսաց լեզու, ֆրանսերեն, 10-րդ դասարան (միջնակարգ դպրոց և ընդհանուր հոսքեր)՝ հայոց լեզու, հայոց պատմություն, կենսաբանություն, 10-րդ (խորացված)՝ հանրահաշիվ, հայոց պատմություն, ֆիզիկա, քիմիա, ռուսաց լեզու, անգլերեն: Նախորդ տարիների համեմատ առարկաների քանակն ավելացել է. 5-րդ դասարանում՝ բնագիտություն, 7-րդ դասարանում՝ հայ գրականություն, երկրաչափություն: Այս դասարաններում առարկաների ընտրությունը կատարվել է ուսումնական հաստատությունների կողմից, 10-րդ դասարաններինը՝ ԳԹԿ-ի կողմից: Ընդամենը գնահատվել է 5087 աշակերտ, պետք է գնահատվեին 5499-ը, մասնակցությունը՝ 93%: Ընդհանուր գնահատվել է 355 դասարան, բոլոր ուսումնական հաստատությունները իրենց մասնաճյուղերով՝ 230 դպրոց: Կազմակերպչական աշխատանքներում ոչ մի հարց, թերություն, խախտում չի եղել:

Նախօրոք, մեկ ամիս առաջ բոլոր անհրաժեշտ նյութերը, թեստերի ծրարները, օժանդակ նյութերն ուղարկվել են դպրոցներ: Դա արդեն ավանդույթ է, ուսումնական հաստատությունները ժամանակին ստանում են և ուսումնասիրում:

Գրավոր աշխատանքներն արդյունքների հետ միասին ուղարկվել են դպրոցներ (այս անգամվա նորույթը դա է), որպեսզի տեղերում ավելի արդյունավետ կատարեն վերլուծությունը: Ճիշտ է, մեթոդմիավորումներում և մանկխորհուրդներում քննարկվում են, բայց, կարծում ենք, մինչև երեխան չտեսնի իր գրավորը, չի կարող ճիշտ պատկերացում կազմել՝ որտեղ է ինքը սխալ կատարել: Անշուշտ, դպրոցի տնօրենները պետք է կազմակերպեն սխալների վերլուծությունը:

Վերջին տարիներին արտաքին ընթացիկ գնահատումը հիմնականում անց է կացվում ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների կողմից, իսկ թեստերն ու արձանագրություններն ուղարկվում են ԳԹԿ՝ ստուգման նպատակով: Այս անգամ 2407 գրավոր աշխատանքների կատարման ժամանակ ներկա են եղել ԳԹԿ ներկայացուցիչները՝ Ստեփանակերտի, շրջկենտրոնների և խոշոր բնակավայրերի դպրոցներում՝ ճիշտ վերլուծություն կատարելու համար. եթե կասկածում ես, պետք է ստուգես: Դա կազմում է ստուգման ենթարկված սովորողների 47%-ը:

Ինչպես նշեցինք, ընդհանուր գնահատվել է 5087 աշակերտ, որից ստացել են՝

0-3 միավոր - 24%

4-6 միավոր - 51%

7-8 միավոր - 22%

9-10 միավոր - 3%

Սակայն այս արդյունքները ոչ իրական են: Որոշ դասարաններում (ոչ թե ամբողջ դպրոցում) եղել են խախտումներ կարգի վերաբերյալ: Դա անմիջապես զգացվում է ստուգման ժամանակ: Կատարվել է վերլուծություն այն դպրոցների, որտեղ վերահսկել են ԳԹԿ ներկայացուցիչները, և որտեղ վերահսկողությունը թողնված է եղել միայն ուսումնական հաստատությունների վրա: Տարբերություններն ըստ շրջանների հետևյալն են.

Ասկերանի շրջանի այն դպրոցներում, որտեղ վերահսկողությունը կատարվել է ԳԹԿ-ի կողմից, «անբավարար» է ստացել 45%-ը, «լավ»՝ 14%-ը, «գերազանց»՝ 1%-ը: Իսկ դպրոցի ներկայացուցիչների կողմից կատարված վերահսկողության դեպքում 26%-ն է ստացել «անբավարար», 21%-ը՝ «լավ», 3%-ը՝ «գերազանց»: Մարտունու շրջանում «անբավարար»-ների քանակը նորմալ է, բայց «գերազանց»-ները և «լավ»-երը մեծ տարբերություն են տալիս: ԳԹԿ-ի վերահսկողությամբ «լավ»-ը 16 % է, «գերազանց» չկա (ընդ որում, հաշվի են առնվել նաև հոսքային դասարանները և խոշոր դպրոցները, որտեղ ավելի արդյունավետ է ուսուցումը), իսկ դպրոցի ներկայացուցիչների կողմից՝ 25% «լավ», 4% (24 հոգի)՝ «գերազանց», ինչը կասկածի տեղիք է տալիս: Նույն երևույթը նկատվում է Մարտակերտի շրջանում: 47% «անբավարար»՝ ԳԹԿ-ի կողմից վերահսկողությամբ, դպրոցի կողմից՝ 22%: Նման զգալի տարբերություններ են նկատվում նաև մյուս գնահատականների դեպքում:

Շուշիի շրջանում գործընթացը հիմնականում ԳԹԿ ներկայացուցիչների կողմից է իրականացվել: 40%-ը ստացել է «անբավարար», դպրոցի կողմից վերահսկվածները՝ 21%-ը:

Քաշաթաղի շրջանում «անբավարար»-ը կազմել է համապատասխանաբար՝ 47% և 20%: Բերձորի քննական կենտրոնում ստուգված աշակերտները՝ ԳԹԿ-ի վերահսկողությամբ, «գերազանց» չեն ստացել, բայց շրջանի մյուս քննական կենտրոնում՝ իրենց կողմից վերահսկված, արձանագրվել է 6 «գերազանց»:

Շահումյանի շրջանում գործընթացն իրականացվել է միայն իրենց ներկայացուցիչների կողմից:

Միայն Հադրութի շրջանում է, որ համընկել են ԳԹԿ-ի և իրենց՝ ուսումնական հաստատությունների կողմից վերահսկված ստուգումների գնահատականները:

Դա ցույց է տալիս, որ որոշ դպրոցներում ոչ լուրջ վերաբերմունք են ցուցաբերել արտաքին ընթացիկ գնահատմանը:

Ընդհանրապես, խորհրդակցությունների ժամանակ միշտ ասվում է, որ իմաստ չունի կեղծելը, դրանով մեզ ենք խաբում, աշակերտին, դրանով գիտելիք չի ավելանում: Չնայած պետք է ասել, որ նույն այդ շրջաններում կան դպրոցներ, որոնց տնօրենները ԳԹԿ ներկայացուցիչներից ավելի խիստ են և անաչառ: Իմ կողմից հատուկ շնորհակալություն է հայտնվել Սեյսուլանի, Բերդաշենի դպրոցների տնօրեններին, որոնք անց են կացնում նման ստուգումներ: Այդպիսի տնօրեններ էլի ունենք բոլոր շրջաններում:

Մեր կարծիքով, այսպես ասած, թաքնված կարգի խախտման երևույթը հետևանք է այն բանի, որ շրջվարչակազմերում քննադատության են արժանանում արտաքին ընթացիկ գնահատումից ցածր արդյունքներով դպրոցները, իսկ սա նաև այն բանի արդյունք է, որ նրանք դա անց են կացրել կարգի խիստ պահպանմամբ և իրական գնահատականներն են ցույց տվել, ասել է թե՝ լուրջ են մոտեցել արտաքին ընթացիկ գնահատմանը, քան մյուսները: Նման քննադատությունը արդարացի չէ: Դա միակողմանի գնահատական է: Ընդհանրապես, մեկ արդյունքով չի կարելի գնահատել: Այն պիտի համալիր լինի. նույն պահանջները, պայմանները պիտի դրվեն, ու նոր միայն համեմատություն անցկացվի:

Ասենք նաև, որ ինչքան էլ արտաքին ստուգում անցկացնենք, աշակերտի հետ աշխատողը ուսուցիչն է: ԳԹԿ-ն միայն օգնություն կարող է ցուցաբերել՝ թեստեր կազմել, գրավորներն ստուգել և այլն:

Արտաքին ընթացիկ գնահատումը միջոց է, օգնություն դպրոցների համար: Միայն ճիշտ գնահատումը կարող է բերել իրավիճակի ճիշտ ներկայացման, որի դեպքում է հնարավոր գտնել ճիշտ ուղիներ՝ այն բարելավելու:

# ԱՌԱՋԻՆ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ԴԱՍԸ ՖՐԱՆՍԵՐԵՆԻՑ

Այդ օրը Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի դասաժամերից մեկն աշակերտներին, ուսուցիչներին և հյուրերին «տեղափոխեց» Ֆրանսիա: Անցնելով «էյֆելյան աշտարակի» մոտով, ապա և «Հաղթական կամարի» տակով՝ նրանք մուտք գործեցին «Փարիզի» սիրտը ու անմիջապես ընկղմվեցին հանրաճանաչ շանսոնիեների երգերի ականապարար մեղեդիների մեջ, իսկ սիրված վալսի հնչյունների ներքո զույգերի թեթևասահ պտույտները գեղեցիկ պահեր ու հետաքրքիր տեսարաններ էին խոստանում:

«Բոնժուր, Փարիզ» ու երաժշտության պես հնչող էլի ֆրանսերեն խոսքեր, որոնցով հմայիչ ուսուցչուհին ու երեխաները ողջունելով՝ սկսեցին միջոցառումը:



Ֆրանսերենի դասի ցուցադրություն է: Առաջին անգամ: Երեք տարի է, ինչ ֆրանսերենն ու գերմաներենը մուտք են գործել Արցախի հանրակրթական դպրոց՝ որպես երրորդ օտար լեզու: Եվ առաջինը, որ համաքաղաքային դաս-միջոցառում կազմակերպեց, երիտասարդ ուսուցչուհի Դիանա Ասրյանն է: Եվ եթե քաղաքի մյուս դպրոցների երրորդ օտար լեզվի մասնագետներն ու մեթոդմիավորման նախագահները եկել էին ծանոթանալու գործընկերուհու փորձին, ապա կրթության համակարգի պատասխանատուներին՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանին և Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի պետ Կառլեն Մարգարյանին հետաքրքրում էր, թե աշակերտներն ինչպես են յուրացրել նոր օտար լեզուն, ճի՞շտ արեցին, որ դպրոցական առարկաների ցանկում նոր առարկա մտցրին:

Մի քիչ հուզված էր ուսուցչուհին: Եվ թեպետ աշակերտների հետ հավուր պատշաճի նախա-



պատրաստվել էր, ինչի մասին էին խոսում ֆրանսիական դասարանը, որն ինչպես ասացինք, սկսվել է մուտքից՝ գեղեցիկ փուչիկներով պատրաստված էյֆելյան աշտարակ, Հաղթական կամար, ներսում՝ նույն ձևով՝ Ֆրանսիայի դրոշը, ու նաև՝ ատլասի կտորից ու դրոշի գույներով՝ ծաղիկ-կրծքանշաններ աշակերտների և ուսուցչուհու կրծքին, նաև միատեսակ գեղեցիկ ու կոկիկ սանրվածքը ուսուցչուհու և աշակերտուհիների ու պաստառները և այլ դիտողական պարագաներ, որոնք դասը տոնական էին դարձրել, միևնույն է, քննություն հանձնելու պես էր՝ ուղեկցվող բնական, հաճելի հուզմունքով: Ու չնայած շատերին անհասկանալի էր ուսուցչուհու և աշակերտների միջև կայացած երկխոսության բովանդակությունը, բայց երեխաների աշխույժ արձագանքը, որի ընթացքում պաստառների վրա ցուցադրում էին, գրում, հանրահայտ անուններ հնչեցնում, և նույնը պրոյեկտորի օգնությամբ երևակվում էր՝ ըմբռնելի էր դարձնում դասը:

Դասն ավարտվեց: Նախ արտահայտվեց ուսուցչուհին: Երեք տարի է, ինչ ուսուցանվում է առարկան, և ցանկացել է ցույց տալ իր երեք տարվա աշխատանքը՝ ներգրավելով բոլոր՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ դասարաններից աշակերտների:

Ապա հետևում են գնահատականները:

Դպրոցի տնօրեն *Լաուրա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ.* - Իրոք որ ֆրանսերենի շատ լավ, ուսանելի, օրինակելի դասի ականատես եղանք: Լավ ներկայացրիք Ֆրանսիան, Փարիզը: Մեր ուսուցչուհին եռանդուն, բանիմաց ձևով ընդամենը երեք տարվա մեջ կարողացել է սեր առաջացնել երեխաների մեջ ֆրանսերենի նկատմամբ, այն երկրի, որը Հայաստան աշխարհի և հայ ժողովրդի համար 1 բարեկամ երկիրն է, որը թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես մեր բոլոր դժվար կացությունների ժամանակ նեցուկ է եղել մեզ: Դուք գովաբանեցիք Փարիզը, որի ամենակենտրոնական փողոցներում՝ Ելիսեյան դաշտերում և Ելիսեյան պողոտայում, Շանզելիզեում վեր են խոյանում Մեծ եղեռնին նվիրված խաչքարեր, Մեծն Կոմիտասի հուշարձանը: Այն երկիրը, որն ազատության, ժողովրդավարության դրոշակակիրն է աշխարհում: Շնորհակալություն, տիկին Ասրյան, որ Ձեր աշխատանքով եկաք ու համալրեցիք մեր աշխատասեր, կարգապահ կոլեկտիվը: Ձեզ մաղթում ենք հետագա հաջողություններ:

ԿՍ բաժնի գլխավոր մասնագետ *Գրետա ԳՐԻԳՈՐՅԱՆ.* - Օտար լեզուների առարկայական քաղաքային մեթոդմիավորումը բազմաթիվ միջոցառումներ է կազմակերպել ռուսերենով, անգլերենով, բայց առաջին անգամ երրորդ օտար լեզվով առաջին համարձակ ուսուցչուհին Դիանա Ասրյանը եղավ, որ նորամուտ օտար լեզվով այսպիսի բարձր մակարդակով դաս-միջոցառում ցուցադրեց: Եթե առաջնորդվենք այս սկզբունքով՝ ինչքան լեզու գիտես, այնքան մարդ ես, ուրեմն՝ մեր երեխաներից յուրաքանչյուրը 4 մարդ է, որովհետև արդեն 4 լեզվի է տիրապետում:

ԿՍ բաժնի պետ *Կառլեն ՄԱՐԳԱՐՅԱՆ.*- երեք տարի առաջ, երբ դպրոցներում մտցվեց ֆրանսերեն լեզուն, իրարամերժ էին կարծիքները: Երրորդ օտար լեզվի մուտքը դժվարությամբ, դժկամությամբ, իսկ մի մասի մոտ էլ ուրախությամբ ընդունվեց: Մեզ՝ որպես համակարգի պատասխանատուներ, մտահոգում էր այն, թե արդյոք մեր երեխաները կդիմանա՞ն այս ծանրաբեռնվածությանը: Եվ այսօր այդ կասկածանքները փարատվեցին: Նախ ուզում եմ առաջին հերթին շնորհակալություն ասել ուսուցչուհուն, որովհետև սա նրա երեք տարիների քրտնաջան աշխատանքն ի ցույց դնելն է: Առավել ևս շնորհակալություն մեր բալիկներին: Այսօր մենք նրանց օգնությամբ էքսկուրս կատարեցինք Փարիզում: Հայ մանուկի բերանում ֆրանսերենն այնքան գեղեցիկ է հնչում, և հուսով եմ, որ առավել գեղեցիկ հնչում է հայոց լեզուն;

ԼՂՀ կրթության և գիտության նախարար *Սլավա ԱՍՐՅԱՆ.* - Ես բարի նախանձով էի նայում ձեզ, սիրելի երեխաներ, որ դուք կարճ ժամանակամիջոցում տիրապետեցիք ֆրանսերենին և կարողանում եք հաղորդակցվել նրանով: Թեև մենք մասնագետներ չենք, որպեսզի մասնագիտորեն գնահատենք ձեզ, բայց արտաքին տպավորությամբ էլ՝ ձեր երգերով, վարժ խոսվածքով, դեմքի արտահայտությամբ վստահ կարող ենք ասել, որ ոչ թե սերտել, մեխանիկորեն անգիր եք արել դասը, այլ իրոք, հասկացել եք նրա իմաստը և արտահայտվում եք սրտի խորքից, այն նվիրումից, որ ունեք ֆրանսերենի նկատմամբ: Անկասկած, դա ձեր քրտնաջան աշխատանքի արդյունքն է: Ապրեք:

Հաճելի տպավորությամբ, գեղեցիկ հույզերով հեռացանք: Իսկապես, հայ երեխան ունակ է սովորելու շատ բան, երբ այն ճիշտ է մատուցվում: Դե իսկ, երիտասարդ ուսուցչուհի Դիանա Ասրյանն էլ գերազանց կատարեց վարպետության աստիճաններ տանող առաջին քայլը:

**Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՓՈԽԱԴՐԱԿԱՆ

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

## 1. Թեստի կառուցվածքը եւ առաջադրանքների գնահատման չափանիշները

### ՄԱՅՐԵՆԻ

Թեստը պարունակում է որևէ տեքստ՝ գեղարվեստական կամ գիտահանրամատչելի, որի հիման վրա ձևավորված են թեստի բոլոր առաջադրանքները՝ թե՛ տեքստի բովանդակությանը վերաբերող, թե՛ ուղղագրական, քերականական կամ կետադրական:

Տեքստերի ծավալները կախված են դրանց տեսակից. գեղարվեստական բովանդակությամբ տեքստերը պարունակում են շուրջ 350 բառ, գիտահանրամատչելիները՝ ավելի պակաս՝ շուրջ 280 բառ:

Թեստը բաղկացած է 15 առաջադրանքներից, որոնցից 3-ը ենթաառաջադրանքներով են:

Յուրաքանչյուր ենթաառաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավորով:

Ստուգվում են՝

*1. Գիտելիքներ ուղղագրությունից.*

Տեքստի բառերից չորսում տառեր են բաց թողած: Դրանց տեղում դատարկ վանդակ է: Աշակերտը պիտի արտագրի բառերը տրված տողերի վրա՝ լրացնելով բաց թողած տառերը:

Յուրաքանչյուր ճիշտ գրված բառի համար տրվում է 1 միավոր (ընդամենը՝ 4 միավոր):

*2. Գիտելիքներ բառագիտությունից.*

o Ստուգվում են՝

ա. բառի՝ ուղղակի կամ փոխաբերական իմաստով գործածված լինելը, տեքստում կամ բառակապակցության՝ դարձվածք կամ ոչ դարձվածք լինելը,

բ. տեքստում գործածված բառի իմաստը, հոմանիշությունը, հականիշությունը տեքստի այլ բառերի հետ:

o Տրվում են տեքստում հանդիպող 4 բառեր և դրանցից յուրաքանչյուրի դիմաց ճիշտ կամ սխալ գրվում է, թե ինչպիսի բառ է ըստ կազմության՝ պարզ, բարդ (հոդակապով, անհոդակապ), ածանցավոր (նախածանցավոր, վերջածանցավոր): Աշակերտը պիտի ընտրի ճիշտ կամ սխալ տարբերակը՝ պահանջին համապատասխան:

*3. Գիտելիքներ քերականությունից.*

o Տեքստից դուրս են բերված բառեր, որոնց դիմաց ճիշտ կամ սխալ գրված է տվյալ բառի խոսքիմասային պատկանելությունը՝ գոյական, ածական, թվական, շաղկապ: Պետք է գտնել ճիշտ կամ սխալ տարբերակը՝ պահանջին համապատասխան:

o Տեքստից դուրս են բերված գոյականներ. աշակերտը պետք է որոշի դրանց՝ հատուկ, թե հասարակ, անձ թե իր ցույց տվող կամ տեքստում եզակի, թե հոգնակի թվով գործածված լինելը, կամ ածականներ. աշակերտը պետք է որոշի դրանց համեմատության աստիճանները:

o Տեքստում բայերից 4-ը տրված են փակագծերում՝ ուղիղ ձևով՝ անորոշ դերբայով: Աշակերտը, ելնելով տեքստի բովանդակությունից, պետք է ընտրի այն տարբերակը, որում համապատասխան անորոշ դերբայի դիմաց ճիշտ կամ սխալ է տրված այն բայաձևը՝ ժամանակաձևը, դեմքը, թիվը, որով բայը պիտի հանդես գա տեքստում:

*4. Գիտելիքներ շարահյուսությունից.*

o Տրվում է նախադասություն. աշակերտը պետք է գտնի այդ նախադասության ենթական, ստորոգյալը կամ լրացումը՝ պահանջին համապատասխան:

o Աշակերտը պետք է տեքստից դուրս գրի համապատասխան երանգի՝ պատմողական, հարցական, հրամայական, բացականչական կամ համապատասխան կազմության՝ պարզ, բարդ, համառոտ, ընդարձակ, որևէ նախադասություն՝պահանջին համապատասխան:

*5. Գիտելիքներ կետադրությունից.*

Աշակերտը պետք է արտագրի տեքստի ընդգծված նախադասությունը և դնի բաց թողած կետադրական նշանը՝ բարդ նախադասության բաղադրիչների կամ բազմակի անդամների համար կամ նշանները՝ կոչականի համար:

Կետադրության վերաբերյալ առաջադրանքի ճիշտ կետադրման համար տրվում է 1 միավոր: Եթե տվյալ կետադրական կանոնը պահանջում է 2 կետադրական նշան (օրինակ՝ կոչականը՝ շեշտ և ստորակետ), ապա 1 միավոր է տրվում այն դեպքում, եթե 2 նշանն էլ ճիշտ են դրված: Ցանկացած այլ (ավելորդ կամ սխալ) կետադրական նշանի գործածության դեպքում այս առաջադրանքին միավոր չի տրվում, եթե անգամ ճիշտ նշանակված է պահանջվող կետադրությունը:

Որոշ կետադրական նշաններ (օրինակ՝ ուղղակի խոսքի անջատման գիծը, հարցական նշանը) դրված են այն պատճառով, որ աշակերտը դեռևս ծանոթ չէ կետադրական տվյալ կանոններին, իսկ առանց դրանց նախադասությունը կարող է անհասկանալի լինել: Այդ նշանների բացթողումը աշակերտի կողմից պետք է համարել անուշադրության սխալ: Այդպիսի սխալների համար միավոր չի հանվում:

*6. Տեքստի ընկալման կարողություններ.*

Տրվում է 7 հարց՝ տեքստի բովանդակության վերաբերյալ, որոնցից 2-ը ընտրովի պատասխանով են՝ պատասխանի 4-ական տարբերակներով, 5-ը՝ ընդարձակ, որոնց աշակերտը պետք է պատասխանի ինքնուրույն (1-ական նախադասությամբ):

Տեքստի վերաբերյալ տրվող հարցեր պարունակող ընդարձակ պատասխանով առաջադրանքներից (ենթաառաջադրանքներից) յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1-ական միավոր, եթե հարցի պատասխանը ըստ տեքստի ճիշտ է: Քերականական և ուղղագրական սխալները հաշվի չեն առնվում: Որոշ առաջադրանքներ կատարելու համար անհրաժեշտ է նշել 2 բան՝ պահանջին համապատասխան: Այս առաջադրանքի համար տրվում է 1 միավոր, եթե երկու նշումն էլ ճիշտ են:

### ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Թեստը բաղկացած է 17 առաջադրանքներից, որոնք երեք տեսակի են՝ ընտրովի պատասխանով, կարճ պատասխանով և ընդարձակ պատասխանով առաջադրանքներ:

Ընտրովի պատասխան են պահանջում 1-10-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Կարճ պատասխան են պահանջում թեստի 11-15-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Ընդարձակ պատասխան են պահանջում 16-րդ և 17-րդ առաջադրանքները, որոնք խնդիրներ են: Այդ խնդիրները լուծելիս աշակերտը պետք է ներկայացնի խնդրի լուծման ամբողջ ընթացքը և կատարի 2 քայլ: Յուրաքանչյուր ճիշտ քայլի համար տրվում է 1 միավոր:

17-րդ խնդիրը լուծելիս համառոտագրելը պարտադիր է:

Եթե 16-րդ խնդրի համար տրվում է առավելագույնը 2 միավոր, ապա 17-րդ առաջադրանքի համար՝ 3, որոնցից 1 միավորը տրվում է խնդրի ճիշտ համառոտագրման համար:

## 2. Գրավոր աշխատանքի գնահատում

Անփոփոխ վերջնական միավորը ստացվում է թեստի առաջադրանքների պատասխաններից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարից (առավելագույնը՝ 20 միավոր), որը բերվում է 10 միավորանոց համակարգի:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԸ

| Միավորը | Գնահատականը | Միավորը | Գնահատականը |
|---|---|---|---|
| 1 | 1 | 11-13 | 6 |
| 2-3 | 2 | 14-15 | 7 |
| 4-5 | 3 | 16-17 | 8 |
| 6-7 | 4 | 18-19 | 9 |
| 8-10 | 5 | 20 | 10 |

## 3. Թեստերի նմուշներ

### ՄԱՅՐԵՆԻ

Դավիթի կյանքը գրեթե հրաշալի էր. նա իրենց բակում շատ ընկերներ ուներ, որոնց հետ ամեն օր՝ դասերից հետո, գնում էր գնդակ խաղալու: Միայն թե Դավիթը մի մեծ **խն□իր** ուներ. դա նրա փոքր քույրն էր՝ Լիլին: Լիլին ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, որ Դավիթին ու նրա ընկերներին բոլորովին դուր չի գալիս, որ ինքը միշտ նրանց հետ **(լինել)**: Հենց տղաները դուրս էին գալիս բակ, Լիլին իր փոքրիկ ոտիկներով վազում էր նրանց մոտ և ուրախ-ուրախ ցատկոտելով՝ հայտնում.

- Ես եկա՜…

Բոլորը հոգոց էին հանում: Իրականում աղջիկը առանձնապես նեղություն չէր տալիս նրանց. շատախոս չէր, չէր նվնվում, չէր խառնվում նրանց խաղերին: Ճիշտն ասած, շատ բան չէր էլ կարող անել: Այնքան փոքրիկ էր, որ ո՛չ կարող էր գնդակ խաղալ, ո՛չ ծառերը մագլցել, միայն իր սև աչիկներով լուրջ նայում էր տղաներին, և ուր նրանք գնում էին, ինքն էլ նրանց հետևից գնում էր:

Դավիթը **փոր□ում էր** մորը համոզել, որ Լիլիին չթողնի իրենց հետևից գալ:

- Ինչո՞ւ պիտի իմ քույրը միշտ մեզ հետ լինի,- հարցնում էր նա,- ինչո՞ւ Արմենի քույրը չի գալիս, Հակոբի քույրը չի գալիս:

Մայրը ծիծաղում էր.

- Արմենի քույրը **ըն□ամենը** վեց ամսական է, Հակոբը ընդհանրապես քույր չունի… Քո **բա□տն** այդ հարցում չի բերել:

Մի օր Դավիթը ուզում էր տղաների հետ գնդակ խաղալ: Սկզբում նրանք մի ծանր գնդակ ունեին: Բայց մի անգամ այդ գնդակը Սարգիս քեռու պատուհանը կոտրեց: Ի՜նչ պատմության մեջ ընկան: Գնդակն էլ այլևս հետ **(չստանալ)**: Հիմա արդեն թեթև գնդակով էին խաղում: Այդ օրը տղաները դեռ նոր էին դուրս եկել, երբ Լիլին սովորականի պես վազեց նրանց մոտ ու ասաց.

- Ես եկա՜…

Տղաները, ինչպես միշտ, ձևացրին, թե նրան չեն նկատում: Նրանք սկսեցին խաղալ: Տղաներից մեկը այնպես ուժգին հարվածեց գնդակին, որ այն այս անգամ էլ **(ընկնել)** Սարգիս քեռու բակը: Նրանք վազելով մոտեցան ցանկապատին և տեսան գնդակը խոտերի մեջ՝ այնքան հեռու, որ ձեռք չէր հասնի: Հակոբը փորձեց անցնել ցանկապատի ճաղերի արանքով, բայց չկարողացավ:

- Ես չեմ կարող անցնել,- հուսահատ ասաց նա,- ցանկապատը շատ խիտ է: Եվ մեզանից ոչ մեկը չի կարող:

Իրավիճակն անելանելի էր: Բոլորից շատ Դավիթն էր տխրել:

- Այս ամենը Լիլիի պատճառով եղավ,- ասաց նա,- Տիգրանը այդքան ուժեղ խփեց գնդակին, որովհետև Լիլիի վրա էր բարկացել:

- Մի նայե՛ք Լիլիին, տեսեք, թե նա ինչ փոքրիկ է,- ասաց Արմենը,- Լիլի՛, այստե՛ղ արի:

Լիլին վազելով եկավ՝ ասելով.

- Ես եկա՜…

Հեշտությամբ մտնելով ճաղերի արանքից՝ Լիլին դուրս բերեց գնդակը ու հանձնեց հիացած տղաներին: Դավիթը հպարտությամբ նայում էր նրան, հետո ասաց.

- Ես քեզ գնդակ խաղալ **(սովորեցնել)**:

**1. Տեքստի բառերից 4-ում բաց թողած տառի փոխարեն դատարկ վանդակ է դրված: Դո՛ւրս գրիր այդ բառերը՝ լրացնելով բաց թողած տառերը:**

Պատասխան՝

____________________, ________________________,

____________________, ________________________,

**2. Ի՞նչ է նշանակում *մագլցել* բառը:**

1) արագ վազել
2) ծառեր տնկել
3) ճյուղերը կոտրել
4) բռնելով բարձրանալ

**3. Ո՞ր բառի հոմանիշը (իմաստով մոտ բառը) տեքստում չկա:**

1) հիանալի
2) զայրանալ
3) թռչկոտել
4) դժգոհ

**4. Տրված բառերից որի՞ դիմաց է սխալ նշված նրա տեսակը՝ ըստ կազմության:**

1) *պատմություն* - ածանցավոր
2) *շատախոս* - բարդ
3) *սովորական* - ածանցավոր
4) *փոքրիկ* - պարզ

**5. Տեքստում հանդիպող հետևյալ բառերից ո՞րն է գործածված եզակի թվով:**

1) խոտ
2) գնդակ
3) ծառ
4) ճաղ

☞6

## ՓՈԽԱԴՐԱԿԱՆ

# ԹԵՍՏԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ

6. Տրված բառերից յուրաքանչյուրի դիմաց նշված է, թե այն ինչ խոսքի մաս է: Ո՞ր տարբերակում է սխալ նշված:

1) *իրավիճակ* – ածական
2) *պատուհան* – գոյական
3) *որովհետև* – շաղկապ
4) *վեց* – թվական

7. Փակագծերում դրված բայերը տարբերակներում ներկայացված են որոշակի դեմքով, թվով և ժամանակով: Ըստ տեքստի՝ ո՞ր տարբերակի բայի ձևն է սխալ:

1) *լինել* – է լինում
2) *չստանալ* – չենք ստացել
3) *ընկնել*– ընկավ
4) *սովորեցնել* – կսովորեցնեմ

8. Ո՞րն է տրված նախադասության ենթական:

Բայց մի անգամ այդ գնդակը Սարգիս քեռու պատուհանը կոտրեց:

1) գնդակը
2) Սարգիս
3) քեռու
4) պատուհանը

9. Տեքստից դո՛ւրս գրիր մեկ հարցական նախադասություն:

Պատասխան՝ ________________________________
________________________________________

10. Տեքստում ընդգծված նախադասության մեջ բաց է թողնված մեկ կետադրական նշան:

Դո՛ւրս գրիր այդ նախադասությունը և դի՛ր բաց թողած կետադրական նշանը:

Պատասխան՝ ________________________________
________________________________________

11. Նշի՛ր երկու բան, որոնցով նկարագրվում է Լիլին:

Պատասխան՝ ______________ , _______________,

12. Ո՞րն էր Դավիթի հիմնական խնդիրը:

1) Հարևանը գնդակը հետ չէր տալիս:
2) Քույրն ամեն տեղ ուզում էր նրա հետ գնալ:
3) Ընկերը կորցրել էր Դավիթի միակ գնդակը:
4) Մայրը բարկանում էր, երբ ինքը քրոջ հետ կոպիտ էր վարվում:

13. Ուշադի՛ր կարդա տեքստի երկխոսությունները և պատասխանի՛ր տրված հարցերին:

*ա. Ի՞նչ է պատասխանում մայրը տղայի հարցին:*

1) Նրա ընկերներից ոչ մեկը քույր չունի:
2) Ընկերների մայրերը աղջիկներին թույլ չեն տալիս բակ դուրս գալ:
3) Նրանցից մեկը քույր չունի, իսկ մյուսինը դեռ շատ փոքրիկ է:
4) Լիլին իրենց բոլորովին չի խանգարում, չի նվնվում և խաղերին չի խառնվում:

*բ. Ըստ Դավիթի՝ ինչո՞վ էր մեղավոր Լիլին, որ գնդակը հարևանի բակն ընկավ:*

Պատասխան՝ ________________________________
________________________________________

14. Ինչո՞ւ տղաները չէին կարող հարևանին խնդրել, որ գնդակը վերադարձնի:

Պատասխան՝ ________________________________
________________________________________

15. ա. Ինչո՞վ օգնեց փոքրիկ աղջիկը տղաներին:

Պատասխան՝ ________________________________
________________________________________

բ. Ինչի՞ց ենք մենք իմանում, որ եղբոր վերաբերմունքը նրա հանդեպ փոխվեց:

Պատասխան՝________________________________
________________________________________

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

*Շրջանակի մեջ վերցրո՛ւ 1 - 10-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանները:*

1. Գտի՛ր այն թիվը, որը համապատասխանում է 4 հազար + 6 հարյուր + 5 միավոր կարգային գումարելիների գումարին:

1) 4065
2) 4605
3) 4650
4) 4056

2. Ընդգծի՛ր այն պատասխանը, որում գրված են 24 թվի բոլոր բաժանարարները:

1) 2, 4, 6, 8, 12, 24
2) 2, 4, 6, 8, 12, 10, 24
3) 1, 2, 3, 4, 6, 8, 12
4) 1, 2, 3, 4, 6, 8, 12, 24

3. Որքանո՞վ կփոքրանա 35481 թիվը, եթե նրա գրության հազարավորը փոխարինենք 0-ով:

1) 5-ով
2) 50-ով
3) 500-ով
4) 5000-ով

4. Գտի՛ր 3485 թիվը 100-ի բաժանելիս ստացված մնացորդը:

1) 5
2) 85
3) 58
4) 458

5. Ընտրի՛ր այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստանաս անհավասարություն.
4563 > 4 * 63

1) 4
2) 5
3) 6
4) 7

6. Ընդգծի՛ր այն շարքը, որտեղ թվերը դասավորված են նվազման կարգով:

1) 4626, 5319, 78427, 62436
2) 78427, 62436, 5319, 4626
3) 78427, 62436, 4626, 5319
4) 4626, 5319, 62436, 78427

7. Ընդգծի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է կիլոգրամներով 6 տ 7 ց 5 կգ-ը:

1) 6075 կգ
2) 6705 կգ
3) 6750 կգ
4) 6507 կգ

8. Ընդգծի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է րոպեներով $\frac{2}{5}$ ժամը:

1) 12 ր
2) 36 ր
3) 48 ր
4) 24 ր

9. Քառակուսու կողմի երկարությունը 18 սմ է: Գտի՛ր քառակուսու մակերեսը:

1) 36 սմ$^2$
2) 54սմ$^2$
3) 72 սմ$^{2a}$
4) 324 սմ$^2$

10. Ո՞ր գծապատկերում $\frac{1}{6}$ մասը ներկված:



1) 2) 3) 4)

*11-15-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը գրի՛ր յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում:*

11. AD հատվածի երկարությունը 19 սմ է, AB հատվածը՝ 4 սմ 4 մմ, CD հատվածը՝ 5 սմ 6 մմ: Գտի՛ր BC հատվածի երկարությունը:




Պատ.՝………………

12. Գտի՛ր բոլոր եռանիշ թվերի քանակը:

Պատ.՝………………

13. Դի՛ր փակագծերն այնպես, որ դառնա ճիշտ հավասարություն:

$$2400 : 60 + 20 \cdot 5 - 300 = 0$$

Պատ.՝………………

14. Տրված թվերից հետո գրի՛ր ևս մեկ թիվ ըստ օրինաչափության:

3, 7, 10, 17, 27, ...

Պատ.՝………………

15. Հաշվի՛ր $3154 + 55 \cdot (42240 : 60 - 699)$

արտահայտության արժեքը:

Պատ.՝………………

*16-17-րդ առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը մանրամասն ու հիմնավորված ներկայացրո՛ւ առաջադրանքներից հետո նշված տեղում:*

16. Բնակարանն ունի ննջասենյակ և հյուրասենյակ: Ննջասենյակի մակերեսը 20 մ$^2$ է, որը կազմում է հյուրասենյակի մակերեսի $\frac{2}{5}$ ը Որքա՞ն է այդ բնակարանի ննջասենյակի և հյուրասենյակի ընդհանուր մակերեսը:

Պատ.՝………………

17. A վայրից միևնույն ուղղությամբ շարժվեցին երկու ավտոմեքենաներ: Որքա՞ն կլինի նրանց միջև հեռավորությունը 3 ժամ հետո, եթե նրանցից մեկի արագությունը 60 կմ/ժ է, իսկ մյուսինը՝ 80 կմ/ժ:

Պատ.՝………………

**ԴԻՄՈՐԴ-2014**

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ու Մ

« 1 » ապրիլի 2014 թ. N 186-Ն

ք. Ստեփանակերտ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի ու «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *ո ր ո շ ու մ է*՝

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2014-2015 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վճարի չափը որոշում են պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» N 81 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված սոցիալական խմբերի ֆինանսավորումը կատարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:

4. Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2014-2015 ուսումնական տարվա անվճար տեղերի (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) 10 տոկոսը (առնվազն 1 տեղ) ըստ մասնագիտությունների հատկացնել պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված քաղաքացիներին:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

*ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

*Հավելված*
*Լեռնային Ղարաբաղի Հանրապետության*
*կառավարության*
*«1» ապրիլի 2014 թվականի*
*N 186-Ն որոշման*

# ՑԱՆԿ

*ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ*

## ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### 1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծած կագիրը | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը |
|---|---|---|---|
| 010300 | Մաթեմատիկա: Համակարգչային գիտություններ | 10 | 15 |
| 010400 | Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա | 6 | 19 |
| 010600 | Ֆիզիկա | 10 | 10 |
| 020100 | Քիմիա | 10 | 10 |
| 020200 | Կենսաբանություն | 7 | 18 |
| 020400 | Աշխարհագրություն | 6 | 14 |
| 021000 | Դեղագործական քիմիա | 5 | 15 |
| 030200 | Քաղաքագիտություն | 5 | 20 |
| 030300 | Հոգեբանություն | 5 | 20 |
| 030400 | Պատմություն | 6 | 19 |
| 030500 | Իրավագիտություն | 5 | 20 |
| 030600 | Լրագրություն | 5 | 15 |
| 031000 | Հայոց լեզու և գրականություն | 7 | 18 |
| 031300 | Անգլերեն լեզու և գրականություն | 8 | 22 |
| 032100 | Ֆիզիկական կուլտուրա և սպորտ | 5 | 20 |
| 032400 | Ռուսաց լեզու և գրականություն | 7 | 18 |
| 050400 | Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն | 5 | 20 |
| 050800 | Կերպարվեստ և գծագրություն | 4 | 7 |
| 051100 | Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | 6 | 19 |
| 080100 | Տնտեսագիտության տեսություն | 5 | 15 |
| 080300 | Ֆինանսներ | 5 | 20 |
| 081300 | Կառավարման տեղեկատվական համակարգեր | 6 | 19 |
| 081500 | Հաշվապահական հաշվառում | 5 | 15 |
| 130100 | Օգտակար հանածոների հետախուզում և մշակում | 6 | 14 |
| 140200 | Էլեկտրաէներգետիկա | 6 | 14 |
| 210400 | Հեռահաղորդակցություն | 6 | 14 |
| 270100 | Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն | 6 | 14 |
|  | Պահուստային տեղեր | 33 | 16 |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ | 200 | 460 |

### 1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)(ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծածկա գիրը | Մասնագիտության անվանումը | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը |
|---|---|---|
| 010300 | Մաթեմատիկա: Համակարգչային գիտություններ | 20 |
| 010600 | Ֆիզիկա | 20 |
| 020100<br>020200 | Քիմիա, կենսաբանություն | 25 |
| 020400 | Աշխարհագրություն | 20 |
| 030400 | Պատմություն | 25 |
| 030500 | Իրավագիտություն | 25 |
| 031000 | Հայոց լեզու և գրականություն | 25 |
| 032400 | Ռուսաց լեզու և գրականություն | 25 |
| 050400 | Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն | 30 |
| 051000 | Զինվորական մանկավարժություն և հոգեբանություն | 20 |
| 051100 | Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | 25 |
| 080100 | Տնտեսագիտության տեսություն | 30 |
| 140200 | Էլեկտրաէներգետիկա | 20 |
| 190200 | Տրանսպորտային ուղիների, միջոցների շինարարություն, կառավարում և դրանց շահագործում | 25 |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ | 335 |

## 2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

### 2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծածկա գիրը | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը |
|---|---|---|---|
| 190300 | Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում | 5 | 20 |
| 310102 | Ագրոնոմիա (լայն պրոֆիլի մասնագիտությունների հնարավորություններով) | 10 | 15 |
| 310201 | Անասնաբուծություն | 10 | 15 |
| 310302 | Անասնաբուժություն | 10 | 15 |
| 310506 | Ագրոէկոլոգիա | 5 | 20 |
| 310801 | Գյուղատնտեսության մեքենայացում | 10 | 15 |
| 310901 | Հողաշինարարություն և հողային կադաստր | 10 | 15 |
| 311101 | Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում | 5 | 20 |
| 311103 | Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ | 5 | 20 |
| 311112 | Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում | 5 | 20 |
|  | Պահուստային տեղեր | 15 | 15 |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ | 90 | 190 |

### 2.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծածկագի րը | Մասնագիտության անվանումը | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը |
|---|---|---|
| 190300 | Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում | 20 |
| 310102 | Ագրոնոմիա (լայն պրոֆիլի մասնագիտությունների հնարավորություններով) | 20 |
| 310201 | Անասնաբուծություն | 20 |
| 310301 | Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն | 20 |
| 310506 | Ագրոէկոլոգիա | 20 |
| 310801 | Գյուղատնտեսության մեքենայացում | 20 |
| 310901 | Հողաշինարարություն և հողային կադաստր | 20 |
| 311101 | Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում | 20 |
| 311103 | Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ | 20 |
| 311112 | Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում | 20 |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ | 200 |

### 2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

| N | Ծածկագիրը | Մասնագիտության անվանումը | Առկա | | Հեռակա |
|---|---|---|---|---|---|
| | | | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը |
| 1 | 190300 | Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում | – | 10 | 10 |
| 2 | 310102 | Ագրոնոմիա | 3 | 8 | 8 |
| 3 | 310302 | Անասնաբուժություն | 3 | 8 | – |
| 4 | 311101 | Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում | 3 | 10 | 10 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | *9* | *36* | *28* |

*ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ*

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«1» ապրիլի 2014 թ. N 187-Ն

ք. Ստեփանակերտ

*ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետի և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը

*ո ր ո շ ու մ  է՝*

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2014-2015 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վճարի չափը որոշում է տվյալ ուսումնական հաստատությունը՝ համաձայնեցնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ:

3. Թույլատրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը՝ պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումն իրականացնել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

*ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

*Հավելված*
*Լեռնային Ղարաբաղի*
*Հանրապետության կառավարության*
*«1» ապրիլի 2014 թվականի*
*N 187-Ն որոշման*

## Ց Ա Ն Կ

*ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ*

### 1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

| Ծածկագիրը | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը | |
|---|---|---|---|---|---|
| | | հիմնական կրթությամբ | միջնակարգ կրթությամբ | Հիմնական կրթությամբ | միջնակարգ կրթությամբ |
| 0402 | Սանկաբարձական գործ | 5 | 2 | 25 | 28 |
| 0405 | Ատամնաբուժություն | – | 2 | – | 28 |
| 0406 | Բուժքույրական գործ | 5 | 2 | 25 | 28 |
| 0418 | Բուժական գործ զինված ուժերում | 5 | – | 25 | – |
| | Պահուստային տեղեր | 6 | 3 | 5 | 5 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 21 | 9 | 80 | 89 |

### 2. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

| Ծածկագիրը | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը |
|---|---|---|---|
| 0501 | Գործիքային կատարողական արվեստ<br>այդ թվում<br>դաշնամուր<br>լարային գործիքներ /ջութակ/<br>փողային գործիքներ<br>ժողովրդական գործիքներ | 16<br><br>6<br>2<br>3<br>5 | 7<br><br>4<br>–<br>1<br>2 |
| 0502 | Երգեցողություն | 3 | 6 |
| 0503 | Երգչախմբավարություն | 2 | 1 |
| 0504 | Երաժշտության տեսություն | 1 | 1 |
| 0505 | Էստրադային երաժշտարվեստ | 2 | 5 |
| | Պահուստային տեղեր | 4 | – |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 28 | 20 |

### 3. ՇՈՒՇԻԻ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
### 3.1. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

| Ծածկագիրը | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը |
|---|---|---|---|
| | | հիմնական կրթությամբ | հիմնական կրթությամբ |
| 0207 | Թարգմանություն և գործավարություն | 5 | 15 |
| 0514 | Դիզայն ըստ ճյուղերի | 10 | 10 |
| 0515 | Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ ըստ ճյուղերի | 10 | 10 |
| 0518 | Սոցիալ-մշակութային գործունեություն և ժողովրդական գեղարվեստական ստեղծագործություն | 5 | 15 |
| 2307 | Զբոսաշրջություն | 5 | 15 |
| | Պահուստային տեղեր | 5 | 5 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 40 | 70 |

### 3.2. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

| Ծածկագիրը | Մասնագիտության անվանումը | Վճարովի ուսուցման տեղերը (միջնակարգ կրթությամբ) |
|---|---|---|
| 0207 | Թարգմանություն և գործավարություն | 20 |
| 0517 | Գրադարանային գործ | 20 |
| 0601 | Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ | 20 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 60 |

### 4. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋ

| Ծածկագիրը | Մասնագիտության անվանումը | Անվճար ուսուցման տեղերը |
|---|---|---|
| 0506 | Պարարվեստ՝<br>Այդ թվում՝<br>դասական պար<br>ժողովրդական պար | <br><br>10<br>10 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 20 |

### 5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծածկագիրը | Մասնագիտության անվանումը | Անվճար տեղերը հիմն. կրթությամբ | Վճարովի տեղերը միջնակարգ կրթությամբ |
|---|---|---|---|
| 0515 | Զարդակիրառական արվեստ | 20 | – |
| 1207 | Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա | – | 20 |
| 2203 | Համակարգիչների շահագործում | – | 20 |
| 2304 | Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում | 20 | 25 |
| 2311 | Հասարակական սնունդ | 20 | 25 |
| 2401 | Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) | 20 | 25 |
| 2809 | Կարի արտադրության տեխնոլոգիա | – | 25 |
| 2902 | Շինարարական մոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում (որմնադիր) | – | 20 |
| 2905 | Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատաքների տեխնիկական ապահովում (բուլդոզերավար, էքսկավատորավար, տրակտորիստ) | – | 20 |
| 2907 | Ատաղձագործություն, մանրահատակագործություն | 20 | 20 |
| 2908 | Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (երեսպատող, սալիկապատող, ծեփագործ, ներկարար) | 20 | – |
| | Պահուստային տեղեր | 10 | – |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 130 | 200 |

## ԴԻՄՈՐԴ - 2014

### 6. ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծածկագիրը | Մասնագիտության անվանումը | Անվճար տեղերը | Վճարովի տեղերը | |
|---|---|---|---|---|
| | | հիմնական կրթությամբ | հիմնական կրթությամբ | միջնակարգ կրթությամբ |
| 1002 | Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում | - | 20 | - |
| 1207 | Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա | - | 20 | - |
| 2203 | Համակարգիչների շահագործում | - | - | 20 |
| 2304 | Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում | 15 | 5 | 20 |
| 2401 | Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) | 15 | 5 | - |
| 2809 | Կարի արտադրության տեխնոլոգիա | 15 | 5 | 20 |
| 2905 | Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատաքների տեխնիկական ապահովում (տրակտորիստ) | 20 | - | - |
| 2907 | Ատաղձագործություն, մանրահատակագործություն | 15 | 5 | - |
| 2908 | Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (երեսպատող, սալիկապատող, ծեփագործ, ներկարար) | 15 | 5 | - |
| | Պահուստային տեղեր | 5 | - | - |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 100 | 65 | 60 |

### 7. ՇՈՒՇԻԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Ծածկագիրը | Մասնագիտության անվանումը | Անվճար տեղերը հիմն. կրթությամբ |
|---|---|---|
| 1006 | Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում (կաթսաների մեքենավար, կաթսայատան օպերատոր, կաթսայատներ սպասարկող փականագործ, ջերմային ցանցեր սպասարկող փականագործ, կաթսայատների սարքավորումներ նորոգող փականագործ, ջերմային ցանցերի սարքավորումներ նորոգող փականագործ) | 20 |
| 2908 | Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (երեսպատող-սալիկապատող, սինթետիկ նյութերով երեսպատող, երեսպատող-մարմարագործ, խճանկարիչ, ծեփագործ, ներկարար) | 20 |
| 2912 | Շենքերի և կառույցների սանիտարատեխնիկական սարքավորումներ (սանիտարատեխնիկական համակարգերի և սարքավորումների մոնտաժող, օդափոխման և պնևմատրանսպորտի մոնտաժում, սանիտարատեխնիկական համակարգերի հանգույցների և դետալների փականագործ, փականագործ-սանտեխնիկ) | 20 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 60 |

*ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ*

# ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

Հայ ժողովուրդը ճակատագրի բերումով սփռված է աշխարհով մեկ: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում սփյուռքահայությունը, գտնվելով հզոր պետությունների տիրապետության ներքո, մշտապես հայտնվել է բախումների կիզակետում:

Սիրիայի Քեսաբ քաղաքում ստեղծված բարդ քաղաքական իրավիճակում բանակի և իսլամիստների բախման արդյունքում դժվար կացության մեջ են հայտնվել մեր հայրենակից հայերը: Արաբական աշխարհում հայերի իրավունքների պաշտպանության հարցը միշտ էլ խնդիր է եղել: Մեր հայրենակիցներից յուրաքանչյուրն ավելի ապահով կլինի իր հայրենիքում, և ցանկալի է, որ առաջնորդվեն «դեպի երկիր» գաղափարով:

Այսօր Քեսաբում տիրող իրավիճակի և հայ համայնքի ճակատագրի համար անհանգստացած են մեր ողջ ժողովուրդն ու կառավարությունը: Մոտ 700 քեսաբահայ ընտանիք ապաստանել է Լաթաքիայում: Նրանք, ովքեր հարազատներ չունեին, ապաստանել են եկեղեցու բակում: Հայկական երկու հանրապետությունների կառավարությունները անում են հնարավորը՝ քեսաբահայությանը օժանդակելու համար՝ թե՛ նյութապես, թե՛ բարոյապես:

Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի աշակերտները դասղեկների, ուսուցիչների կողմից իրազեկված են միջազգային քաղաքական իրավիճակի մասին: Դպրոցի հումանիտար հոսքի 11-րդ «ա» դասարանի մի խումբ տղաներ (դասղեկ՝ Ի. Սարինյան) առաջարկեցին կազմակերպել հանգանակություն, որը քննարկվեց աշակերտական խորհրդի նիստում: Առաջարկը ողջունելի էր և ընդունվեց միաձայն: Ավագ դպրոցի աշակերտներն ըմբռնումով մոտեցան տեղի ունեցածին: Հիշողություններն ու պատմության էջերը նրանց տարան դեպի հարյուրամյա պատմության քառուղիները, դեպի ցեղասպանություն, երկրաշարժ, դեպի Արցախյան գոյամարտ: Բոլոր ժամանակներում էլ սփյուռքահայությունը սատար է կանգնել հայրենիքում ապրող հայրենակիցներին...

Աշակերտական խորհրդի որոշման մասին իրազեկեցին դպրոցի տնօրինությանն ու ԼՂՀ ԿԳ նախարարին: Առաջարկը ողջունվեց, և դպրոցում կարճ ժամանակահատվածում հավաքվեց 324.450 ՀՀ դրամ: Այդ գումարը դպրոցի անունից փոխանցվել է Արդշինինվեստբանկի՝ քեսաբահայերի համար հատկացված հաշվի համարին:

Մեր աշակերտների վերաբերմունքն արտացոլվել է նաև նրանց շարադրություններում: Ահա ինչ են գրում հումանիտար հոսքի 10-րդ «գ» դասարանի սովորողները:

«Հազարամյակների ճամփորդ է հայը, որն իր երկար ճանապարհին հրաշքներ է արարել, կերտել է ու կառուցել, բազմիցս դիմագրավել է թշնամուն, հայոց հավատն ու խոսքն է հասցրել դարերին ու խրոխտ քայլերով գնում է դեպի գալիք դարերը: Զարմանալի է մեր ազգի կենսունակությունը: Ես լիքն եմ այդ մեծ կենսունակության նկատմամբ անսասան հավատով: Եվ ոչ մի բռնակալ, ոչ մի բարբարոս երբեք չի կարողացել նվաճել ու ընկճել հայկական ցեղի հզոր ոգին: Եվ ամեն անգամ ամեն մի բռնակալի հայը կարող է կրկնել Վարդանանց խոսքը. «Կարող ես հայի մարմինը տանջել, բայց նրա հոգու հետ ի՞նչ ես անելու…»:

Այս անգամ թիրախը Սիրիայի տարածքում գտնվող Քեսաբն էր՝ իրեն շրջապատող գյուղերով ու բնակավայրերով: Ու այս անգամ եղեռնը նորից կրկնվեց: Բազմաթիվ ընտանիքներ մնացին անօթևան, երեխաներ որբացան, կանայք այրիացան: Արնաշաղախ արվեց մեր ազգի, սփյուռքահայության այդ հատվածի կյանքը, արարումն ու ստեղծածը:

Բայց միևնույն է, այս անգամ ևս հայ ժողովուրդը կցուցաբերի իր կենսունակությունը այն համոզմամբ, որ անհնարին է ջնջել այն ամենը, ինչ կապված է հայի, հայկականի, հայոց աշխարհի հետ» (Գալինա Մնացականյան):

«Մարդկության կողմից միշտ էլ դատապարտվել է ցանկացած վայրագություն: Սակայն, ցավոք, շարունակվում են կոտորածները: Այսօր քեսաբահայերը դիմակայում են բազում կտտանքների ու հալածանքների: Կարծես մեր հայրենակիցների համար կրկնվում է սպանդը, 1915 թվականի ցեղասպանությունը: Քեսաբի ճակատագիրն այս պահին անկանխատեսելի է: Նույն թուրքը, որ անպատիժ է մնացել 1915 թվականին, այսօր լկտիացել և իր արյունոտ ձեռագիրն է թողնում Քեսաբում: Ինչո՞ւ չեն կտրում այդ ձեռքը, ինչո՞ւ քաղաքակիրթ աշխարհը լուռ է մնում…» (Անգելինա Բաղրյան):

«Աշխարհում մի գետ կա, բայց այդ գետը չկա ոչ մի քարտեզի վրա: Դա Հայոց մեծ եղեռնի անմեղ զոհերի արյան գետն է, որի ակունքում թուրքն է… Թուրք խուժանը չի հանգստանում, նա առիթը բաց չի թողնում հային վնասելու համար: Այդ նույն աղետն իրագործվում է Քեսաբում՝ հայ համայնքի կյանքն այնտեղ մեծապես վտանգված է: Բայց թուրքը պիտի իմանա, որ ամեն մի կաթիլ արյան համար կյանքով է պատասխան տալու և զգուշանա, որ գալու է օրը հայերի միավորման, միասնության և հարատևության» (Կարոլինա Պետրոսյան):

Յուրովի մարդասիրական վերաբերմունք է ցուցաբերել դպրոցի հումանիտար հոսքի 12-րդ «գ» դասարանի աշակերտուհի Լուիզա Ներսեսյանը իր առաջարկով: Նա ռուսաց լեզվից առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի 2-րդ կարգի մրցանակակիր է, արժանացել է դիպլոմի և դրամական խրախուսանքի: Նրա իսկ ցանկությամբ ու առաջարկով ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից խրախուսական 21000 ՀՀ դրամ գումարը փոխանցվել է Ստեփանակերտի երեխաների խնամքի ու պաշտպանության հ. 1 գիշերօթիկ հաստատության հաշվի համարին: Լուիզա Ներսեսյանը անկեղծությամբ նշում է, որ թեկուզ փոքր է գումարը, բայց այն սրտանց է:

Դպրոցականների կողմից բարոյական ու մարդասիրական այս արարքները մեզ վստահեցնում են, որ մենք ճիշտ ուղու վրա ենք և ճիշտ դաստիարակություն ենք տանում մատաղ սերնդի հետ: Մեր երկրի ու ժողովրդի ապագան հուսալի ձեռքերում է, քանի որ աճող սերնդի մոտ ձևավորվում է բարոյական ու մարդասիրական արժեքային համակարգ:

**Ծովինար ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**«Ստեփ. Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ՄԿԱԳՏՏ**

*Դիմանկար*

# ՀԱՄԱԿ ՆՎԻՐՈՒՄ



Եթե ոմանց օրը տարի է թվում, ապա ուսուցչի համար օրերը թռչում են ասես… Ու այնպես աննկատ են անցնում, որ չես էլ զգում, թե ինչպես է տարին գումարվում տարվա վրա: Հասունանում ես՝ չնկատելով էլ, թե ինչպես անցան տարիներն, ու դարձար… կես դար ապրած:

Կես դար… Չէ, տարիներն այդպես հեշտ չանցան: Յուրաքանչյուր օր կապված էր քեզ հառած մանկական անմեղ, սպասումով լի աչքերի հետ, որոնք երբ ժպտում են, քեզ թվում է՝ աշխարհն ինքն էլ հրաշք է դառնում, քաղցր մի երեխա, իսկ երբ տխրությամբ են նայում, այս աշխարհի մեղավորն ես զգում քեզ, չնայած աշխատում ես արդարությամբ, անկեղծությամբ ու նվիրումով:

Եվ այստեղ՝ դպրոցում է, որ օրն աննկատ է, ամիսը՝ կարճ: Տարին ե՞րբ անցավ, այս երեխաները ե՞րբ մեծացան, ինչպե՞ս… Կարծես երեկ էր սեպտեմբերի 1-ը, բայց տարին արդեն ավարտվում է:

Տարիները… և երբ կեսդարյա հեռավորությունից ետ է նայում, անցած ուղին է ուզում հիշել, շատ բաներ պարզ է հիշում, շատ բաներ՝ մղձավանջի պես, որոնց վրայով միտքը սահել է ուզում, վերապրել նորից չի ուզում: Կեսդարյա կյանք: Երբ կյանքդ դարով ես չափում, մեծ ես ուրեմն, հասուն: Փառք Աստծո, որ կեսդարյա ճանապարհդ անցել ես պատվով, մարդ ես դաստիարակել, մարդ, որի ձևավորումը մեկ օրով ու մեկ տարով չէ, այլ 10-12: Դպրոց են գալիս անմեղ, աշխարհի բարուն ու չարին անտեղյակ, և դու պարտավոր ես նրա միտքն ու հոգին կրթել, կռել, կոփել, դարձնել բարի, վսեմ, անկեղծ, և ամենակարևորը՝ նա, այս գյուղի մանուկը, պետք է դառնա իր նախնիների արժանի հետնորդը, սիրի իր գյուղը, հողը, հայրենիքը, որն ամենաթանկն է քարինտակեցու համար:

Քարինտակեցին ոչ միայն լավ կռվող է, այլև լավ հողվոր: Աշխատանքի գնալուց առաջ, արշալույսին բահը ձեռքներին մտնում են հողամաս, գալիս են աշխատանքից, հողն սպասում է՝ քրտնիր, որ վաստակես հացդ:

Արամայիս Հովհաննիսյանն իսկական խորհրդանիշն է գյուղի: Կարդացել է աշխարհի գիրքը, բայց հավատամքը մեկն է՝ ինձ բահ տվեք: Բնակարանում ամենուր գրքեր են, սիրում է համաշխարհային հսկաների ստեղծագործությունները, իսկ իր ստեղծագործությունները իր զավակներն ու դպրոցի հարյուրավոր շրջանավարտներն են, որոնք սիրով ու ակնածանքով են սիրում մարդ-ուսուցչին, տնօրենին. ուրեմն՝ արդար է վաստակդ: Հովհաննիսյանն իր երկրի ազնիվ քաղաքացին է, մարդ, որի ոտքերն ամուր մխրճվել են հողի մեջ, իսկ գլուխն ամպերում է, ասես ոչ թե հիսունամյա, այլ 17-ամյա պատանի է, երազուն, հավատով, հույսով լի: Հավատում է լավին, վսեմին, մարդուն, ընկերոջը ամենակարևորը՝ իր հայրենիքի լավ ապագային, հայրենիք, որին ծառայել է ողջ գիտակցական կյանքում:

Արցախյան գոյամարտի առաջին օրերից «միացում» բառը հենց այնպես, որպես բառ չէր արտաբերվում: Եվ որպես գաղափարական, քաղաքական թշնամու՝ ազերիները տոթակեզ ամռան մի ամբողջ տարի տանջում էին նրան Շուշիի բանտում: Երբ խոսք է բացվում բանտային դժոխքի մասին, Արամայիսը կատակում է. «Շոգ ամառ էր, իսկ բանտում հով էր, տարան, որ այլևս «Վելիկայա Արմենիա» չասեմ» (ազերիներն ամեն ծեծելուց առաջ այդ էին ասում. «Վելիկայա Արմենիա՞ ես ուզում...»):

Բայց շատ էին սխալվում: Հովհաննիսյան մարդն ավելի ամուր կապվեց իր հող ու ջրին, և երբ որևէ մեկը հեռանում է Արցախից, նա քիչ է մնում գոռա. «Յո՞ երթաս...» և Հորացիոյի պես՝ «Ո՞ւր, ո՞ւր, խելագա՛ր...»:

Հնարավորություն ուներ ապրել Մոսկվայում, այլուր, բայց չէ, նրանն իր գյուղն է, իր դպրոցը, աշակերտները:

1985 թվականին, երբ գերազանցության դիպլոմով ավարտել էր Արցախի պետական համալսարանը, եկել գյուղ, պետք է աշխատեր մի դպրոցում, որտեղ մանկավարժների մեծ մասն իր ուսուցիչներն էին, փորձառու մանկավարժներ, որոնց հետ աշխատելը հաճելի էր, բայց միաժամանակ քննությունը հանձնողի պես աշխատում էր արդարացնել իր ուսուցիչների հույսերը:

Սիրում էր իր առարկան, սիրում էր աշակերտներին, գյուղը, նրա մարդկանց: Պատմության դասերը քիչ էին, և երբ որևէ ուսուցիչ բացակայում էր կամ մասնագետ չէր լինում, փոխարինում էր: Գյուղում նա՝ «քայլող հանրագիտարանը», յոթ տարի կենսաբանություն դասավանդեց, երբեմն՝ ֆիզկուլտուրա (հիմա էլ ֆուտբոլ է խաղում երեխաների և ուսուցիչների հետ), ռուսաց լեզու, բնագիտություն: Զարմանալի է թերևս…

Քսան տարի է՝ ինչ տնօրեն է Շուշիի շրջանի Քարին տակ գյուղում: Դպրոցը նրա կյանքի մի մասն է, նրա էությունը, ձուլվել են ինքն ու դպրոցն ասես, և երբ նորեկ երիտասարդ ուսուցիչ է ոտք դնում դպրոցի շեմին, տնօրենին մտահոգում է ոչ միայն նրան իսկական մանկավարժ դարձնելը, այլև կյանքի պայմանները՝ օգնել, ինչով կարող է: Մարդասեր է, բարյացակամ տնօրենի հետ հեշտ է կիսվելը, խորհուրդ հարցնելը:

Ասում են՝ անփոխարինելի մարդ չկա, բայց նրա մասին ասում են՝ «Անփոխարինելի մասնագետ է»: Դրա համար էլ դպրոցի շրջանավարտների մեծ մասն ընդունվում է պետհամալսարանի պատմության ֆակուլտետը:

«Անփոխարինելի» բառն իր արդարացումն ունի. տնօրեն դարձավ ետպատերազմյան ամենածանր տարիներին: Գյուղը, կորուստների բեռից կքած, հայրակորույս, կիսաքաղց, կիսամերկ…

Տնօրենը դպրոցամերձ հողամասի եկամուտներով հոգում էր դպրոցի ուսումնական և տնտեսական հարցերը:

Տարբեր ամբիոններից հաճախակի է հնչում նրա ձայնը դպրոցի առջև հրատապ հիմնախնդիրների շուրջ:

Իր անբասիր աշխատանքի համար արժանացել է կառավարական բազում պատվոգրերի:

2000-2001 ուստարում շրջանի լավագույն դպրոցի տնօրեն է ճանաչվել: Իսկ 2013թ. պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով: Ամուսնացած է, ունի երեք երեխա:

Սիրելի Արամայիս Հովհաննիսյան, Քարին տակի միջնակարգ դպրոցի ուսուցչական կազմն ու Ձեր բոլոր սաները շնորհավորում եմ Ձեզ՝ ծննդյան 50-ամյակի և մանկավարժական գործունեության 30-ամյակի կապակցությամբ, ցանկանում ուժ ու եռանդ, մշտարթուն միտք, ծերության դեմ հաղթանակող դպրոցական ծաղկուն ճամփա:

**Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**
**Թոշակառու ուսուցիչ**

ՀՈԳԵՎՈՐ

# ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

Հոգևոր արժեքների պահպանումը եղել ու մնում է ազգային անվտանգության կարևորագույն բաղկացուցիչը: Օրերս Շ. Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում կազմակերպված քննարկումը նպատակ ուներ անդրադառնալ մեզանում հոգևոր անվտանգության խնդիրներին: Բանախոսները շահագրգիռ մարմինների, մասնակիցները՝ երիտասարդական կազմակերպությունների ու գերատեսչությունների ներկայացուցիչներ էին:

Առաջին հարցադրումը հետևյալն էր՝ ինչո՞ւ Արցախի Սահմանադրության մեջ ամրագրված չէ, որ Արցախը քրիստոնեական պետություն է, և Հայ Առաքելական եկեղեցու դավանանքը հանդիսանում է ԼՂՀ պետական կրոնը: Մասնավորապես, Սահմանադրության մեջ ամրագրված «ԼՂՀ-ն ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի կյանքում նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում» արտահայտության մեջ հոգևոր գործունեության ի՞նչ սահմաններ է նախատեսում «բացառիկ նշանակություն»-ը:

ԼՂՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի բաժնի վարիչ Աշոտ Սարգսյանի պարզաբանմամբ՝ «Խղճի և կրոնական ազատությունների մասին» ԼՂՀ օրենքն ընդունվել է՝ հիմք ընդունելով ՀՀ համանման օրենքը (1993թ.), որի համար էլ հիմք է հանդիսացել Ֆրանսիայի համապատասխան օրենքը, ըստ որի, քրիստոնությունը որպես պետական կրոն չի սահմանված: «Եվ դա հիմք է հանդիսացել, որ հետագայում մենք էլ այդ նույն սխալը կրկնենք»,- ասաց Ա. Սարգսյանը: Այն տարիներին ինքը ԼՂՀ Աժ մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահն էր, և մի խումբ պատգամավորներով օրենքի նախագիծ են ներկայացրել՝ այն կարծիքն ունենալով, որ Հայաստանը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո պետք է հռչակվեր որպես քրիստոնեական երկիր, քանի որ աշխարհում առաջինն է քրիստոնեություն ընդունել որպես պետական կրոն: Ի դեպ, աշխարհի 8 երկրներ իրենց սահմանադրության մեջ հռչակվում են որպես քրիստոնեական երկիր:

Ա. Սարգսյանը մեկ ուրիշ անհամապատասխանության մասին էլ խոսեց. օրենքով արգելվում է հոգեորսությունը, սակայն ո՛չ քրեական, ո՛չ էլ վարչական օրենսգրքում համապատասխան հոդված չկա: Բացի այդ, համաձայն օրենքի՝ կրոնական կազմակերպություններին արգելվում է ֆինանսավորել դրսից, սակայն չի նշվում, թե ֆինանսավորվելու դեպքում ինչ պատիժ է սահմանվում: Քրեական և վարչական օրենսգրքերով նախատեսված սանկցիաների մեջ նախատեսվում է 300-1000 դրամ տուգանք հոգեորսության համար, և Ա. Սարգսյանի խոսքով՝ նման ձևով հնարավոր չէ իրագործել «Խղճի և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը:

1997-ից առայսօր հոգևոր ոլորտում իրավապահների կողմից գրանցվել է ընդամենը 25 արձանագրություն: Այնինչ, հենց միայն Ստեփանակերտում երևի տուն չլինի, որի դռները աղանդավորները ծեծած չլինեն, ինչը օրենքի կոպիտ խախտում է, և ինչի համար պետք է պատասխան տան: Դա ոստիկանության տեղամասային տեսուչների պարտականությունների մեջ է մտնում: Նրանց արդարացումն այն է, որ չարչարվում են, հայտնաբերում, համապատասխան եզրակացություն գրում, բայց վերջում ստացվում է 1000 դրամ տուգանք:

Ա. Սարգսյանը տեղեկացրեց, որ այսօր ՀՀ խորհրդարանում շրջանառվում է «Խղճի և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի մի նոր նախագիծ, որում համապատասխան պետական լիազոր մարմինը դուրս է մղվում ասպարեզից: ՀՀ-ում, ի տարբերություն աշխարհի մյուս երկրների, կրոնի հարցերով զբաղվում է կառավարության համապատասխան բաժինը, նախկինում՝ վարչությունը: Աշխարհի և մեր հարևան երկրներում այդ հարցերով նախարարություններն են զբաղվում, նվազագույնը՝ դեպարտամենտը կամ գլխավոր վարչությունը:

Նրա մյուս դիտարկումն ուղղակի ահազանգի նման էր. նոր օրենքով Հայ Առաքելական եկեղեցուն «բացառիկ նշանակություն» չի տրվում: Ա. Սարգսյանի կարծիքով, հետևելով դրսի խորհուրդներին, հիմքեր են ստեղծվում օրենքների մեղմացման համար, որպեսզի այն համապատասխանի միջազգային չափանիշներին: Բայց միջազգային չափանիշներով է առաջնորդվում նաև Ֆրանսիան, որը վերջին 2 տարում հոգևոր օրենքները խստացրել է:

Ա. Սարգսյանն ասում է, որ հոգևոր անվտանգությունն Արցախում և Հայաստանում մշակութային անվտանգության մեջ է ներառված, ինչը գաղափարական տեսանկյունից կոպիտ սխալ է, որովհետև մշակույթը ստեղծվում է հոգևոր արժեքի վրա: Այսօր ՀՀ-ում «հոգևոր անվտանգություն» հասկացությունը չի սահմանվում: Նրա ձևակերպմամբ, հոգևոր անվտանգությունը հայկական կենսատարածքում նշանակում



*Նկարում.- Շուշեցի փոքրիկ Մարիան ծնողների՝ բժիշկներ Գրիգորի և Անուշ Առստամյանների և Մարո տատիկի հետ հաճախ է լինում եկեղեցում:*

է, որ միայն ՀԱԵ-ն պետք է լինի կարևորագույն եկեղեցին, իսկ մյուս կրոնական կազմակերպությունները պետք է նպաստեն նրա գործունեությանը: «Կարող եմ հայտարարել, որ այսօր արաբական գարունը չէր լինի, եթե այնտեղ հոգևոր անվտանգության խնդիրները լուծեին: Այդ նույն վտանգը սպառնում է մեզ: ՀՀ բնակչության 10%-ը ոչ ՀԱԵ զավակներ են: Այդ տոկոսը միտում ունի աճելու: Եթե այն կազմի 40%, վստահ եմ, որ հայկական գարուն այդ ճանապարհով կլինի: Դրսի ուժերը փորձեցին քաղաքական ճանապարհով հեղափոխություն անել, չկարողացան, մնացին աղանդները: Եվ դրա համար ահռելի ֆինանսական միջոցներ են տրամադրում նրանց: Մեծ մասը ֆինանսավորվում է Թուրքիայի կողմից: Նրանք ՀՀ-ում և Արցախում ծաղկում են, իսկ ՀՀ-ում օրենքները մեղմացնելով՝ էլ ավելի մեծ տեղ են տալիս աղանդավորներին: Նրանց նպատակն է ազգը բաժանել իրար հակամարտող կրոնական համայնքների»,- ասաց Աշոտ Սարգսյանը:

ԼՂՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչության պետ Արտակ Ղուլյանի կարծիքով, մեր ազգը, որ դարեր շարունակ ոչ պետականություն է ունեցել, ոչ էլ սահմանադրություն, ավելի հավատացյալ է եղել: Նա կասկածում է, որ օրենքները խստացնելով, կարելի է բեկում մտցնել: «Մենք այսօր ավելի շատ քննարկում ենք հետևանքը՝ առանց խորանալու պատճառների մեջ. ինչո՞ւ այսպես եղավ, ի՞նչ անենք, որ չունենանք պոտենցիալ աղանդավորներ: Աղանդները սկսվում են այնտեղ, երբ թուլանում է արժեհամակարգը»: Նրա կարծիքով, սխալ է, երբ հոգևոր անվտանգության հարցը քննարկելիս շեշտը դրվում է աղանդների վրա: Հոգևոր ավտանգությունը միայն աղանդը չէ, մարդը հեռացել է Աստծուց, հավատից, իսկ հավատը չի կարելի դնել ազգային արժեքից առանձին: Հետևաբար, սա միայն եկեղեցու խնդիրը չէ, սա բոլորի խնդիրն է, գտնում է Ա.Ղուլյանը:

ԼՂՀ ԿԳ փոխնախարար Միքայել Համբարձումյանը հոգեորսության դեմ պայքարի լավագույն միջոցը համարում է գրագետ և լավ տեղեկացված լինելը: Նրա խոսքով, հոգեորսների համար ավելի խոցելի խավը ոչ գրագետներն են, որոնք հեշտ են ենթարկվում հոգեբանական գրոհի:

Հայ եկեղեցասիրաց եղբայրակցության ներկայացուցիչ Արմեն Մաղաքելյանը հարցի լուծումը տեսնում է Հայ Առաքելական եկեղեցու շուրջ ժողովրդի համախմբմամբ և Աստծո խոսքը մարդկանց տանելու մեջ: «Եթե դաշտը մշակված չէ, ինչքան էլ խոսենք՝ մոլախոտ պիտի բուսնի, պետք է մշակել դաշտը, Աստծո խոսքը ցանել»,- ասում է նա:

ՊԲ ԱՀՏԱ գծով հոգեբանական աշխատանքների բաժանմունքի պետ, մայոր Արթուր Ավետիսյանի տեսանկյունով՝ սոսկ Աստվածաշնչի պատվիրանները քարոզելով, հազիվ կարողանանք ունենալ շոշափելի հաջողություններ: Սկսած դպրոցական հասակից, երեխայի կյանքն անհրաժեշտ է ուղղորդել այնպես, որ նա դառնա այդ ամեն լավագույնի կրողը: Իհարկե, ամեն ինչի հիմքը գիտելիքների բավարար պաշար ունենալու, արյան գեների մեջ ազգային լավագույն որակներ կրելու և տեսական մտածողություն ունենալու պատրաստակամությունը պիտի լինի: Այս դեպքում և՛ ապահովված կլինի հոգևոր անվտանգությունը, և՛ առհասարակ անվտանգությունը բոլոր առումներով: Մանավանդ որ, նաև այդ են պահանջում աշխարհաքաղաքական զարգացումները:

ԼՂՀ արդարադատության նախարարի օգնական Էլինա Մնացականյանը, չհերքելով հանդերձ այն տեսակետը, որ պետք է օրենքով խիստ պատժամիջոցներ սահմանվեն հոգևոր ոլորտի խախտումների համար, համոզված չէ, որ դա հարցի լավագույն լուծումն է: «Այդ ամենը սկսվում է մեզնից, մեր ընտանիքից, և միայն պատասխանատվության միջոցներ սահմանելով, առանց հոգեբանական լուրջ աշխատանքի հնարավոր չի լինի ակնկալվող նպատակի հասնել: Խնդիրը նաև մեր մեջ է, և դա նաև յուրաքանչյուրիս աշխատանքն է»,- ասաց նա՝ հավելելով, որ իրավական համակարգը կատարելագործման կարիք ունի:

Բժշկուհի Լյուդմիլա Գրիգորյանն իր հիասթափությունն արտահայտեց քննարկումների ձևաչափից. դա այն ամբիոնը չէ, որտեղ պետք է նման հարցեր արծարծվեն:

Երիտասարդական կազմակերպության ղեկավար, իրավաբան Գոռ Գրիգորյանը նույնպես կարծում է, որ օրենքը պետք է խստացվի, բայց առաջնահերթը դա չի համարում: Ժամանակին, երբ ինքը աշակերտ էր, շատերի պես կրոնի դասերին չէր հաճախում՝ այն համարելով ծիծաղելի առարկա, իսկ մեծանալով՝ ամաչում է իրեն դրսևորել որպես քրիստոնյա:

Նրա խոսքերն առիթ դարձան, որպեսզի ԼՂՀ ԿԳՆ արտադպրոցական և նախադպրոցական բաժնի պետ Աննա Այվազյանը իր աշխատանքից բխող եզրահանգումը ներկայացնի՝ կրոնը պետք է քարոզվի մանկապարտեզից: Եթե երեխան փոքր ժամանակից սնվի քրիստոնեական խոսքով, հասուն տարիքում չի ծիծաղի կրոնի վրա: Ապա հնչեցրեց հարցադրումների շարան. ինչո՞ւ քննարկումներին ներկա չեն հոգևոր հայրերը, ինչո՞ւ պետական համալսարանում, որտեղ սովորում են հազարավոր երիտասարդներ, չկա հոգևոր հովիվ, ինչո՞ւ մեր հոգևոր թեմը ակտիվ քարոզչական աշխատանք չի տանում: Ինչո՞ւ մենք նրանց նկատում ենք միայն կրոնական տոների ժամանակ: Եթե մարդ գնում է եկեղեցի, հոգևոր հայրը աշխատում է նրա հետ, եթե չի գնում, մարդը մնում է մեկուսացված: Ինչո՞ւ չունենք ծխական քահանաներ գյուղերում, ծխական համայնքներ: Ապա և եզրակացությունը՝ նման վիճակի համար մեղքի բաժին ունեն բոլորը:

Միջոցառման կազմակերպիչ՝ Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի տնօրեն Արմեն Հովսեփյանը տեղեկացրեց, որ քննարկումները շարունակական են լինելու, և նախատեսվում է ՀԱԵ ներկայացուցիչների հետ նույնպես հանդիպում: Նա ցավով արձանագրեց, որ թեպետ իրենք հրավիրել են շատերին, սակայն քչերն են բարեհաճել ներկայանալ միջոցառմանը:

**Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# ԻՄԱՍՏՈՎ Է ԱՊՐՈՒՄ, ԻՄԱՍՏՈՎ ԱՆՑՆՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԻՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ...



Հավատն ու հավատքը միասին՝ ձեռք ձեռքի տված, կարող են տեղաշարժել չարության և դժվարության լեռները:

2014 թվականի գարնան առաջին ամսվա՝ մարտի 20-ին լրացավ Արցախի թեմի առաջնորդ՝ գերաշնորհ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի ծննդյան 60-ամյակը:

Շուշիի Խ.Աբովյանի անվան հիմնական դպրոցի ողջ անձնակազմի և անձամբ իմ անունից ի սրտե ու ջերմորեն շնորհավորում եմ Պարգև սրբազանին՝ հոբելյանի առիթով և մաղթում քաջառողջություն, երկար տարիների խաղաղ կյանք, ամենայն բարիք:

Մարդիկ բոլորն էլ Աստծո ծնունդ են, բայց քչերն են Աստծո պարգև: Այդ քչերից է նաև Պարգև սրբազանը: Իրապես նա Աստծո պարգև է մեր ժողովրդին ու հայրենիքին, քանզի անգնահատելի են նրա ծառայությունները մեր նորագույն պատմության գոյապայքարին և արցախահայության հոգևոր վերածննդի գործում:

Այո՛, Պարգև սրբազանն այն վառ անհատականություններից է, որոնց կյանքը, գործն ու փորձը որպես օրինակ ունենալու անհրաժեշտություն կա բոլոր ժամանակներում:

Անշուշտ, ազգասիրությունն ու հայրենասիրությունը վեհացնում, զորացնում են մարդուն...

Նա ոչ միայն կարեկցում, այլ նաև ամեն կերպ ջանում է ինչ-որ տեղ ինչ-որ չափով դարմանել իրեն դիմած մարդկանց ցավը…

Նա ոչ միայն հարազատ ժողովրդի զավակն է, այլև նրա հրաշունչ ու նվիրյալ զինվորը: Բառի բուն իմաստով նա բացառիկ առաքելությամբ զինվորագրվեց մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին, նրա հոգևոր վերածննդի ճակատին…

Այո՛, իմաստով է ապրում Պարգև սրբազանը, իմաստով անցնում կյանքի իր ճանապարհը…

Շնորհիվ Արցախի թեմի ու նրա առաջնորդ Պարգև սրբազանի՝ հերթով հարություն են առնում մեր հայակերտ սրբավայրերը, մեր խոնարհված եկեղեցիները: Մի քանի տասնյակ տարիներ շարունակ լռած մեր եկեղեցիների հայախոս զանգերը կրկին սկսեցին ղողանջել: Փա՛ռք տիրոջը.

Դարձել ենք դեպի ակունքները մեր,
Մեր հարցի համար Սուրբ Հոգով օծվել,
Որ ազգի ոգին սավառնի միշտ վեր
Եվ զորու լինի արարչագործել…

Հավատքը մաքրում է մարդուն, զորացնում, զարմանահրաշ հաղթանակներ պարգևում: Հավատքը ազգը համախմբելու զորություն ունի: Հավատքով է ամրապնդվում ազգի միասնությունը…

Մեր մի ձեռքում գիրն է, մյուս ձեռքում՝ սուր և սրտում՝ հավատք, որոնց շնորհիվ է, որ մաքառել ենք բազում թշնամիների դեմ ու նորից ապրել: Եվ պետք է ապրենք ու գործենք այնպես, որ ոչ թե գոյատևենք, այլ ծաղկենք ու հարատևենք…

Այո՛, հայոց համազգային ոգին պահող-պահպանող, հայ ժողովուրդը պահող, պահպանող մեր եկեղեցին դարեր շարունակ առաջնորդել է պետականություն չունեցող մեր ժողովրդին դեպի հավերժը…

Եկեղեցու, մեր հոգևոր դասի շնորհիվ են նշվել ու պահպանվել մեր հոգևոր ու ազգային ավանդույթները, տոները և հիշատակի օրերը, որոնք այսօր ազգովի ենք նշում: Միշտ պետք է հիշել՝ մենք հոգևոր մշակույթ ունեցող ժողովուրդ ենք և այդ ամենի համար երախտապարտ ենք նրանց…

Տե՛ր կանգնենք մեր հայրենի հավատին, մեր եկեղեցուն, քանզի երկրային կյանքի փարոսն իր լույսը առնում է երկնային կյանքի փարոսից…

Փա՛ռք Բարձրյալին, Պարգև սրբազանը այսօր էլ իր արժանի տեղն ու դերն ունի մեր ժողովրդի պատվավոր զավակների շարքում: Այո, փա՛ռք Տիրոջը, քանզի ուշացած գնահատական չէ. սովորաբար մենք մեր մեծերին մեր մեջ ուժ ենք գտնում գնահատել ժամանակի ավելի հեռու տարածքից և երախտագիտության խոսք ասում շատ հաճախ, երբ երախտավորը այդ ամենը չի լսում…

Շնորհավոր ծնունդդ և Սուրբ Զատիկ, Գերաշնորհ սրբազան հայր:

Լավագույն մաղթանքներով՝

**Ն. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**
**ԼՂՀ վաստակավոր մանկավարժ,**
**Շուշիի Խ. Աբովյանի անվան**
**հիմնական դպրոցի**
**տնօրեն**

ՍԵՐՈՒՆԴ

# ՀՈՂԻ ՏԵՐԸ ՎԱԿՈՒՆԻՍԻ ԵՐԵԽԱՆԵՐՆ ԵՆ

*Սա Հայաստան է և, վերջ…*

**Լեոնիդ Ազգալդյան**

21 տարի առաջ այս օրերին ամբողջությամբ ազատագրվեց Քաշաթաղի շրջանի հյուսիսային տարածքը՝ Պատմական Մեծ Հայքի Սյունիք և Արցախ աշխարհների Աղահեճք (Քաշաթաղ-Խոժոռաբերդ), Վայկունիք, Բերձոր, Հաբանդ և այլ գավառներ՝ Հակարի գետի վերին հոսանքի հովիտները: Հայրենի երկրի ազատագրման համար իրենց կյանքը տվեցին շատ ազատամարտիկներ, ովքեր այսօր էլ հոգով մեզ հետ են և դեռ թելադրում են: Արցախյան գոյամարտը հաղթական ավարտվեց հայոց աշխարհի տարբեր շրջաններում կազմված ազատագրական ջոկատների միջոցով:

Հերոսական մարտական ուղի անցավ նաև Սիսիանի գումարտակը: 1993 թվականի մարտի 31-ին Սիսիանի գումարտակի մի ջոկատ՝ կազմված մոտ 30 ազատամարտիկներից, հրամանատար Վուրգ Ոսկանյանի գլխավորությամբ Լաչինից շարժվում է դեպի հյուսիս՝ մոտ 40 կմ հեռու գտնվող Վակունիս գյուղը, որը, ըստ տեղեկությունների, պետք է ազատագրված լիներ, և տղաները պետք է ամրանային այնտեղ: Թեքվելով մայրուղուց դեպի աջ՝ ջոկատի ամենագնաց մեքենան բարձրանում է վեր, որտեղ սարերի փեշին՝ հարթության վրա փռված է Վակունիսը: Մինչև գյուղ մտնելը՝ մնացել էր մոտ 300 մետր, երբ թշնամին սկսում է հրթիռակոծել ու գնդակոծել անակնկալի եկած մեր տղաների մեքենան: Բոլորովին հարթ տարածքում հայ զինվորի համար միակ պատսպարանը մնում է մեքենան, սակայն հերթական հրթիռը պայթեցնում ու վառում է այն, զոհվում ու վիրավորվում են տղաներից: Սկսվում է անհավասար մարտը: Մինչև մութն ընկնելը ողջ ու վիրավոր մնացած տղաները պայքարում են, մարտնչում, նահանջում: Այդ մարտում զոհվում են ջոկատի 11 ազատամարտիկներ. հրամանատար, մայոր Վուրգ Ոսկանյան, լեյտենանտ Վոլոդյա Կարապետյան, Մելսիկ Աթանեսյան, Գևորգ Ավետիսյան, Վահան Սիմոնյան, Վարդան Բաբայան, Ալբերտ Ազարյան, Հրայր Եղիազարյան, Վալերիկ Ավետիսյան, Լավրենտ Նազարյան, Ջոհրակ Գևորգյան:



1994 թվականին վերաբնակեցվեց Վակունիսը, որտեղ պահպանվել է հայոց միջնադարյան եկեղեցու ավերակը: Գյուղում 1996 թվականից գործում է դպրոցը, որը կրում է Վուրգ Ոսկանյանի անունը և այժմ ունի 17 աշակերտ: Ամեն տարի՝ մարտի 31-ին Վակունիս են այցելում նահատակ տղաների մարտական ընկերներ, հարազատներ, հայտնի երգիչներ: Այս տարի այցելությունը եղավ ապրիլի 2-ին՝ կապված եղանակի կտրուկ փոփոխման հետ: Եկել էին տղաների մարտական ընկերները և ՀՀ ԵԿՄ Սիսիանի տարածաշրջանի փոխնախագահ Արսեն Ավագյանը՝ պատանի երկրապահների հետ: Մինչև գյուղ մտնելը՝ պատանի երկրապահներն անցան այն ճանապարհով, որտեղով 21 տարի առաջ անցել էին նրանց պապերն ու հայրերը: Ջոկատի մարտիկ Մկրտիչ Ջավադյանը, ով այդ օրը եղել էր տղաների հետ, պատանիներին պատմեց, որ իրենք այստեղ հասել են երեկոյան ժամը 6-ի մոտերքը: Նկարագրեց, թե ինչպես ընկան հրթիռակոծման տակ, ինչպես պայքարեցին՝ մինչև մութն ընկնելը: Այստեղ 10 տարուց ավելի է, ինչ կանգուն է նահատակներին նվիրված խաչքարհուշակոթողը: Որպես հուշարձան մնացել է նաև վառված ամենագնաց մեքենայի կմախքը: Պատանի երկրապահները ծաղիկներ խոնարհեցին մարտիրոսների հուշակոթողին: Վուրգ Ոսկանյանի անվան կրթօջախում բոլոր աշակերտների մասնակցությամբ կայացավ միջոցառում, որը կազմակերպել էր ուսուցչուհի Հեղինե Բախշյանը: Մինչև աշակերտների ելույթ ունենալը՝ ներկաներին ողջունեց դպրոցի տնօրեն Վարդան Հարությունյանը՝ շնորհակալություն հայտնելով այցի առթիվ և կարևորելով նման միջոցառումները հատկապես երեխաների համար: Նա վստահեցրեց, որ այս դպրոցի աշակերտներն են ազատագրված հողի վաղվա տերն ու պահապանը: Արցախի օրհներգը կատարելուց հետո դպրոցականներն սկզբում ներկայացրին փոքր սյուժե՝ դատապարտելով պատերազմը՝ թե ինչպես իրենց խաղաղ կյանքը խեղվեց պայթող ռումբի պատճառով: Ներկայացրին պատերազմական գործողություններ, սպասումի հավերժական պահեր: Այնուհետև հնչեցին երգ ու ասմունք: Դպրոցի շրջանավարտ, այժմ ուսուցչուհի Դիանա Ալեքսանյանի ղեկավարությամբ աշակերտները հանդես եկան նաև ազգագրական պարերով: Մոտ մեկ ժամ տևած ելույթները ոգևորեցին ու հուզեցին ներկաներին՝ նախկին ազատամարտիկներին, ուսուցիչներին, ծնողներին, հարևան համայնքների բնակիչներին, շրջվարչակազմի ներկայացուցիչներին: Գեղարվեստական մասով հանդես եկան նաև պատանի երկրապահները: Նրանց Դիանա Ալեքսանյանը սովորեցրեց պարել «Սասնո քոչարի»-ին: Ուսուցչուհի Հ. Բախշյանը երեխաների ելույթից հետո իր գոհունակությունը հայտնեց հանդիպման համար, շնորհակալություն հայտնեց հատկապես պատանի երկրապահներին, իր սաներին: Այցի կազմակերպիչ, պահեստի փոխգնդապետ Ժորա Դիլանյանն իր խոսքում ասաց. «Այստեղ պարզություն ու մաքրություն տեսա. ամեն ինչ ոգի է՝ սկսած ուսուցիչներից, աշակերտներից, բնակիչներից: Այստեղի երեխաներն արդեն սահմանապահ ու զինվոր են. հնարավոր չէ առանց հուզմունքի լսել նրանց ելույթը, դիտել պարը, ներկայացումը»: Սիսիանի ԵԿՄ փոխնախագահ Արսեն Ավագյանն ասաց, որ պատանիների հետ աշխատելու նպատակն է նրանց դաստիարակել ռազմահայրենասիրական ոգով: Դիմելով վակունիսցի երեխաներին՝ ասաց. «Սահման պահողը դուք եք. աշխարհից կտրված այս երկրում ավելի մաքուր ու պարզ եք մնացել: Եկել ենք՝ ոգեկոչելու տղաների հիշատակը: Առանց ձեզ, ձեր ծնողների անիմաստ կլիներ մեր այցը: Շնորհակալություն, որ այստեղ եք»: Ելույթներից հետո զրուցեցի պատանի երկրապահների ու ազատամարտիկների հետ: Վլադիմիր Պետրոսյանը սովորում է 6-րդ դասարանում: Դեռ չի որոշել՝ ապագայում ինչ մասնագիտություն է ընտրելու, բայց մի բան լավ գիտի՝ հայրենիքի զինվոր դառնալը պարտավորություն է: Դպրոցական առարկաներից սիրում է աշխարհագրությունը և բնագիտությունը:

- Ուրախ եմ ու հպարտ, որ անցա մեր քաջ զինվորների ճանապարհով, եթե ստացվի՝ նորից կգամ Վակունիս,- ասաց Վլադիմիրը:

Գագիկ Ստեփանյանը Սիսիանի հ. 1 դպրոցի 4-րդ դասարանում է սովորում: Նույնպես առաջին անգամ է այստեղ: Նա հաստատ է որոշել՝ աշխատել զորամասում: Հպարտ է, որ իր պապը՝ Գագիկ Ստեփանյանը նույնպես ազատամարտիկ է: Սիսիանի հ. 5 դպրոցի 8-րդ դասարանցի Ժենյա Մարտիրոսյանն ասաց, որ երևի զինվորական դառնա, ցանկանում է՝ նորից այցելել Վակունիս. արդեն բարեկամացել է այստեղի աշակերտների հետ: 9-րդ դասարանցիներ Մարիամ Գրիգորյանը ցանկանում է ռազմական ոստիկան դառնալ, իսկ Սաթենիկը՝ ռազմական բժիշկ: Առստամյան Սաթենիկը չի որոշել հետագա անելիքը, իսկ նրա եղբայրը՝ 6-րդ դասարանցի Արթուրը, ով պատանի երկրապահների ջոկատում հետախույզ (կրտսեր սերժանտ) է, արդեն որոշել է՝ հետախույզ էլ կմնա: Երեխաները սիրով են խոսում նաև իրենց հրամանատարի՝ Արսեն Ավագյանի մասին, ով նույնպես անցել է մարտական ուղի: Ազատամարտիկ Սեյրան Հարությունյանը նշեց, որ հոգու պարտք է՝ այցելել տղաների հուշարձան, հիշել նրանց և նրանց ոգով դաստիարակել մատաղ սերնդին: Նրա զինակից Ֆրունզ Բարսեղյանը տպավորված էր Վակունիսի դպրոցի աշակերտների ելույթով, հատկապես, որ պարեցին «Քոչարի»: Ուրախությամբ նշեց, որ անցած տարիների համեմատ շատ բան է փոխվել: Ամենակարևորը՝ որ գյուղում էլեկտրական հոսանք կա: Փոխգնդապետ Մկրտիչ Դիլանյանը, որ այսօր իր ռազմական հմտությունները սովորեցնում է Հայոց բանակի զինվորներին, ամեն տարի եղբոր՝ Ժորայի հետ կազմակերպում է Վակունիս այցելությունը: «1997 թվականից սկսած, ամեն տարի գալիս ենք այստեղ: Սկզբում մի քանի ընտանիք կար. այժմ այլ է: Դպրոցում 17 աշակերտ կա, հուսով եմ, ՝մոտակայում ավելի շատ երեխաներ կսովորեն հերոսի անվան դպրոցում»,- ասաց նա: Տղաները տեղեկացրին, որ իրենց ջոկատից առաջին անգամ 7 հոգի զոհվել են դարձյալ Քաշաթաղի շրջանում՝ Սուվարասի գյուղում: Կարևորեցին, որ տղաները, տարածքի բնակչությունը չհուսահատվեցին, ընդհակառակը՝ ազատամարտիկները վրեժխնդիր եղան թշնամուց:

Վուրգի և նրա տղաների կորուստը մեծ հարված էր սիսիանցիների համար, բայց հետագա մարտական գործողություններին տղաներն ավելին արեցին: Ազատամարտիկ Արմեն Գրիգորյանը, որ 1992 թվականի սեպտեմբերի 12-ին եղել էր Սուվարասիում, որտեղ նահատակվեցին նրա մարտական ընկերները, ասաց, որ թշնամու հետախուզական ջոկատն էր անցել թիկունք, և դիրքերում անհավասար մարտում ընկել էին տղաները: Արմենի եղբայր Արշակն էլ զոհվել է Կապանի տարածքում:

Հանդիսավոր մասից հետո պատանի երկրապահներն ու Վակունիսի երեխաները մրցեցին մարզական խաղերով, ծանոթացան ու բարեկամացան իրար հետ: Մայրամուտին հյուրերը հրաժեշտ տվեցին Վակունիսի բնակչությանը, մարտական ընկերների հուշարձանին՝ հավատով, որ մյուս տարի նույն օրը դարձյալ կգան, և Վակունիսն ավելի կշենանա: Պատանի երկրապահները, որ իրենց հասակակիցներին նվերներ էին բերել, ցանկություն հայտնեցին նորից այցելել իրենց նոր ընկերներին, նորից անցնել Ազատամարտի հերոսների ճանապարհով:

**Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ**

# ԹՈՂ ԼԻՆԵՆ ՄԻՇՏ ՄԱՅՐԵՐԸ…

Օրերս Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի մի խումբ ուսուցիչներ և շնորհաշատ աշակերտներ այցելեցին քաղաքի «Երեխաների խնամքի և պաշտպանության հ. 1 գիշերօթիկ հաստատություն» (տնօրեն՝ Նոնա Մուսայելյան): Հիանալի նախաձեռնությունը դպրոցի ՄԿԱԳՏՏ Նաիրա Աբրահամյանինն էր, ով ՍՀԴԳ կազմակերպիչ Ն. Սիմոնյանի և երգ-երաժշտության ուսուցչուհի Ն. Ավանեսյանի անմիջական օժանդակությամբ պատրաստել էր գրական-երաժշտական ծրագիր՝ բավական հագեցած ու բովանդակալից: Այցի նպատակն էր գիշերօթիկ հաստատության սաներին պարգևել հաճելի րոպեներ, հնարավորություն ընձեռնել նրանց՝ մի քանի ժամ շփվելու ճակատագրով տարբեր, բայց նույն տարիքի իրենց հասակակից երեխաների հետ: Դպրոցի աշակերտական կոլեկտիվի անունից Ն. Աբրահամյանը գիշերօթիկի երեխաների համար մեծ սիրով համեղ քաղցրավենիք էր բերել: Անկեղծ ասած՝ դժվար էինք պատկերացնում հանդիպումն այն երեխաների հետ, ովքեր տարբեր պատճառներով հայտնվել էին հաստատությունում և, ավա՜ղ, զրկված էին ընտանեկան ջերմությունից ու մայրական փաղաքշանքից:

Ծով հուզմունք, թախծախառն ժպիտներ, լցված հոգիներ, զսպված լաց, մանկական անմեղ և անօգնական աչքեր… Հուզվել էինք բոլորս, չնայած այդ երեխաները շրջապատված էին անսահման հոգատարությամբ և ուշադրությամբ, ինչին ականատես եղանք ինքներս (հավելեմ, որ հաստատությունն ունի երեսուն աշխատող, և այնտեղ կան բոլոր անհրաժեշտ կենսապայմաններն ու հարմարությունները): Այնուհանդերձ («Ճշտի համար աքսոր չկա»), նորություն ասած չեմ լինի, եթե ասեմ, որ ոչ ոք և ոչինչ չեն կարող փոխարինել մայրական գրկին, քնքշանքին, ընտանեկան ջերմությանն ու ծնողական հոգատարությանը:

Տնօրենից տեղեկացա, որ «Երեխաների խնամքի և պաշտպանության հ. 1 գիշերօթիկ հաստատությունը» (երանի՜ դրա կարիքը չլիներ) գործում է 2008թ. հունիսի 2-ից (նախկին «Զանգակ» մանկատան հիմքի վրա), ուր ապաստան են գտել տարբեր տարիքային խմբերի՝ մինչև 18 տարեկան 23 աղջիկ ու տղա: Նրանց՝ այդտեղ հայտնվելու հիմնական պատճառը սոցիալապես անապահով ընտանեկան կարգավիճակն է (իսկ 23-ից 1-ը երկկողմանի ծնողազուրկ է): Այդ երեխաները դպրոցահասակ են և սովորում են քաղաքի տարբեր ուսումնական հաստատություններում (հ. 9 հիմնական դպրոց, ֆիզմաթ դպրոց, պարարվեստի ուսումնարան, արհեստագործական ուսումնարան, բժշկական քոլեջ):



Հանդիպումը կայացավ ջերմ ու փոխադարձ հաճելի մթնոլորտում: Մեր այցելության օրը երջանիկ պատահականությամբ համընկել էր հաստատության աղջիկներից մեկի ծննդյան օրվան: Կարծում եմ, ավելի լավ անակնկալ վախվորած ու տխուրաչյա աղջնակի համար լինել չէր կարող, հատկապես որ, նրան շնորհավորելու էին եկել նաև Հայ Ավետարանչական եկեղեցու ներկայացուցիչները՝ տոնական տորթով և սպասված նվերներով: Պարզվում է, որ Հայ Ավետարանչականը գեղեցիկ ավանդույթ է դարձրել հաստատության բոլոր աղջիկներին ու տղաներին ծննդյան օրվա (և ոչ միայն) առիթով ուրախություն պարգևելը: Պահն, իսկապես, անչափ հուզիչ էր ու տպավորիչ: Մինչ մենք կսկսեինք մեր ծրագիրը, դաշնակահար Իրինա Փիրումյանը (ով, ի դեպ, կենսախինդ, կենսուրախ, անմիջական ու կյանքով լեցուն հաճելի մի անձնավորություն է) գիշերօթիկի սաների հետ միասին երաժշտական մի քանի համարով հիացրեց մեզ: Ի զարմանս մեզ՝ բոլոր երեխաներն էլ գիտեն շատ երգեր ու երգում են լավ՝ սրտաբուխ ու հոգեպարար: Քիչ ավելի ուշ հիացանք նաև նրանց պարով՝ դյուրաթեք մարմնի գեղեցիկ շարժումներով: Նրանք ուղղակի զգում ու ապրում էին երաժշտությունն ու մեղեդին: Վերջիններիս երգ ու պարին հետևեց մեր աշակերտների ելույթը, որն սկսվեց Մարիա և Ալվինա Աթանեսյան քույրերի՝ «Մանկություն» քնքուշ ու հեզանազ պարով: Կրկին զարմացանք, երբ թևածեց գիշերօթիկի սաների երգը և միախառնվեց աղջիկների ուրախ պարի նուրբ ելևէջներին ու շարժումներին, որ խորհրդանիշն էր բարի մանկության մասին հեքիաթային հիշողությունների: Իսկ իններորդ դասարանի աշակերտուհի Ալիսա Հայրապետյանը (ով արդեն քանի՜ տարի ասմունքի քաղաքային ու հանրապետական մրցույթներում գրավում է մրցանակային հորիզոնականներ) իր հաճելի ձայնով և գրագետ ասմունքով (Պ. Սևակ, «Որդուս») ասես ծնողի իրավունքով խրատեց հաստատության սաներին.

*Ինձ հետ լինի, թե առանց ինձ, իմ բալի՜կս, կմեծանաս,*

*Իմ օգնությամբ, թե առանց ինձ, դու երբևէ կհասկանաս,*

*Թե ոնց պիտի ապրել կյանքում, թե ոնց պիտի նայել կյանքին…*

Ապա նրանց հուսադրեց, որ դժվարությունը ժամանակավոր է, անցողիկ, կարևորն այն է, որ մարդ չտրտնջա, լինի շիտակ, ազնիվ, ճշմարտախոս ու առաքինի.

Մի՜ տրտնջա: Դու հիշո՞ւմ ես. «Ձախորդ օրերը… Կուգան ու կերթան»…

Ամենամեծ վիշտը մահն է, վիշտը դառնում է հույսի օթևան, իր տառապանքների հաղթահարմամբ իմաստնանալով, մարդն սկսում է ցավերը հեշտ տանել, մաքառելով ապրել ու գոյատևել, ու… խաթարված կյանքը բնականոն հունի մեջ է մտնում: Օրհնյա՜լ լինես դու, կյա՜նք…

Միջոցառման մյուս մասնակիցների շնորհիվ ևս հնչեցին գեղեցիկ բանաստեղծություններ մայրենի լեզվի, հայրենիքի և գարնան մասին, և շուրջբոլորը տարածվեց գարնան շունչը, գարնանային արևի շողերը ջերմացրին բոլորի սրտերը:

Միջոցառմանը մի առանձին շուք հաղորդեցին 7-րդ դասարանի աշակերտուհի Էլեն Հովհաննիսյանի ջազային գեղեցիկ պարերգը, երկրորդցիներ Հայկի և Վարդանի «Գայլն ու գառը»: Աշակերտները ջանք ու եռանդ չէին խնայում դահլիճում բարձր տրամադրություն և առավել ջերմ մթնոլորտ ստեղծելու համար: Եվ ստեղծվե՛ց բաղձալի տրամադրությունը. աղջիկների խումբը ոգևորված երգում էր «Ես եմ, դու ես», «Բանակում», «Կաքավիկ», որոնց հետևեց խմբային մի քանի ուրախ պար: Ծրագիրը եզրափակեց «Թող լինի միշտ արևը» երգը, որը մաղթեց բոլորին սեր ու գորով, խաղաղ ու անամպ երկինք: Աշակերտներն իրենց ձեռքով թղթից մի մեծ արև էին պատրաստել ու գլխավերևում բարձր բռնած՝ բարձրաձայն երգում էին.

*Թող լինի միշտ արևը,*
*Թող լինեն միշտ մայրերը,*
*Թող լինի հայրենիքը*
*Եվ թող միշտ լինենք մենք:*

**Ռիմա ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**
**Ստեփ. հ. 6 հիմն. դպրոցի**
**հայոց լեզվի եւ գրակ.**
**մասնախմբի ղեկավար**

## ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ - 100

# ՆԱԻՐԱԿԱՆ ԲՆԱՇԽԱՐՀԻ ՄԵԾ ՔՆԱՐԵՐԳՈՒՆ



*Քարափների գլխին՝ Որոտնաբերդ,*
*Քարափների ծունկին՝ Ծիծեռնակավանք,*
*Քարափների շուրթին՝ երկնքի շերտ,*
*Քարափների շուքին՝ ջրվեժի զանգ…*

Համո Սահյան

Այնտեղ, ուր սարեր կան սարերի վրա և ուր գետերը՝ Լորագետը, Որոտանը, շաչյունով իրենց հավերժական ընթացքն են գլորում, ծնվել է հայոց բնաշխարհի մեծ քնարերգուն՝ Համո Սահյանը (Հմայակ Սահակի Գրիգորյան): Ծնվել է ու բերել զանգեզուրյան զուլալություն և անպաճույճ երգերի շարքեր՝ «Հայաստանը երգերի մեջ», «Ես այն եմ եղել», «Ծիծեռնակները ուշացան», «Ես ձեզ եմ թողնում», «Կանաչ-կարմիր աշուն», «Ես չեմ կարող», «Ժայռից մասուր է կաթում», «Ծիածանը տափաստանում», «Դաղձի ծաղիկ», «Մայրամուտից առաջ», «Իրիկնահաց», «Սեզամ, բացվիր»…

Համո Սահյանը իր զգայնիկ խոսքն ասաց մեծ Մայրամուտից առաջ մեր հող ու ջրի, քարապառաժի, մասրի ու փշատի, նազանքով օրորվող նաիրյան դալար բարդու և այն ոտնահետքերի մասին, որոնց նշմարանքները մեր ապուպապերի կածաններն են պեղում…

Բանաստեղծի ինքնաբացահայտումը ևս անպաճույճ է, ինչպես ինքը բանաստեղծը՝ հողոտ, հողածին. «Ես այն եմ եղել, ինչ որ եղել եմ…»:

Համո Սահյանի՝ 1914թ. ապրիլի 14-ին Զանգեզուր աշխարհի Լոր գյուղում ծնված բանաստեղծի ծննդավայրն ու հարազատ բնաշխարհը հարուստ նյութ են տվել բանաստեղծին և ակունք դարձել նրա բանաստեղծական աշխարհի համար՝ միշտ պահելով մանկության արահետների ու հայրենական տան կարոտը.

Զանգեզուրում կա մի գետ,
Որ խոսում է ափի հետ,
Հոսում օրնիբուն...
Գետի ափին այն վճիտ
Կա անպաճույճ մի խրճիթ -
Գեղջկական մի տուն:

Այն իմ տունն է հեռավոր,
Օտարն անգամ գիտե, որ
Կապված է հավետ
Մի հուշ, մի սեր, մի երազ,
Մի թրթռուն սրտի մաս
Ամեն քարի հետ:

Երբ հիշում եմ, ամեն քար
Դառնում է ողջ մի աշխարհ,
Մի ողջ մանկություն...
Ա՜խ, տեսնես ի՞նչ է անում,
Ով որ չունի աշխարհում
Հայրենական տուն:

Հենց այդտեղ, ուր ժայռից մասուր է կաթում, կածանը արևկող է անում գետակի զոլավոր քարերի վրա, բանաստեղծը տեսավ և մամուռը դնչին փախչող եղնիկին, արևոտ մի սար, ժայռից բխած ջրվեժ, մասրենու վարսաթափ մի թուփ: Տեսավ, որ հողը, հասկը, ջուրը, ծաղիկը, հույսը, խիղճը, կամքը, սերը զորության այն ակունքներն են, որ հիացնում, վեհացնում ու բարձրացնում են մարդուն, որը բանաստեղծի ու մարդու կապի նպատակն է՝ մարդուն տեսնել բարձր ու վերածնված: Բանաստեղծն իմաստնացավ բնության պարգևներով և այդ ամենը բաշխելով՝ սովորեց գոհացնել մարդկանց.

Հողից սովորեմ՝ գոհացնել մարդուն,
Հովից սովորեմ՝ հովացնել մարդուն:
Ծովից սովորեմ՝ խորացնել մարդուն,
Հասկից սովորեմ՝ զորացնել նրան...

Սահյանի բնաշխարհը բացում է քարափների, ջրվեժների, աշնան, տերևաթափի, ձմեռնամուտի, գարնան ու արևի, լեռների, միրհավի, հայի ու հայ արարողի մաճկալի մի գողտրիկ աշխարհ, ուր գարունն ու հողը կանչում են նրան ու նոր շունչ առնում նրա հաղթ բազկից: Նրա գրչի տակ դողում է մի տերև, խշխշում ու տարուբերվում է հինավուրց կաղնին, քամու համբույրն է անտառով անցնում: Բանաստեղծի պատկերավորությունը բացում է անձնավորման ու փոխաբերության նորանոր շերտեր, որով շնչավորվում է սահյանական պոեզիան. «Երկինքն առվի մեջ սաղմոս էր կարդում, սարը մատյանն էր կարդում երկնքի», «Ամպը լեզուն կուլ է տվել, Հնար չունի որոտալու», «Կտուրի վրա կակաչներն իրար արյուն են խմում», «Լորագետը»՝ բխում է նա երակ-երակ ժայռերի բաց երախներից», «Սարալանջեր որբ և այրի, հորդ ու վայրի սարալանջեր», «Այս քարանձավները՝ անկոպ ու անբիբ Աչքերն են անգին հավիտենության», «Հազար շապիկ մաշած սարեր», «Օրը հոգնած է շատ և քրտնած է մի քիչ»…

Սահյանը սիրում է բնության ոչ թե մեկուսի անդորրը, այլ հորդումը՝ աղբյուրների, ջրվեժների, հորդ ջրերի. «Քարափների բաշից կախված ջրվեժներն եմ սիրում վայրի… Որ ցնցում են բաշերն իրենց, բախվում հազար ժայռ ու քարի»:

Սահյանի գարնանամուտը նշենիների արթնացման, ձնծաղիկների ծիծաղի, եղինջի ծիլի, լեզուն բացված առվակի երգ է, որից խայտում է հողը, խայտում են քնքուշ ծիլերը, որի հրճվանքից է պայթում բնության տրոփով ապրող ամեն սիրտ: Բնության զարթոնքը հոգու զարթոնքն է, ու բանաստեղծը «վրձնում է» այդ ամենը հիկույն նեթ. իրար ողջունում են ծիլերը դաշտում, աղբյուրներն ուրախ իրար են կանչում, մեղուն քանդում է ակնամոմը թաց, լեռներն իրարու ողջույն են տալիս, հողն է մայրության հրճվանքից դողում, որ ոչ մի ծիլ չխամրի հողում, ոչ մի հավքի բույն թափուր չմնա… Ողջ բնությունն է ձայնում աշխարհին.

- Դռները բացեք, գարուն է գալիս…

Շնչում է հողը, արթնանում նիրհից, ու տերը նրա մայր հողի գրկում արբունք է բերում ակոսված հողին…

Սահյանը ստեղծում է բնության քնարերգությունը անկրկնելի պատկերներով: Խոսում է տարերքի հետ, դառնում նրա զրուցակիցը, հարստանում նրանով: Նրա գրիչը թաթախված է շառաչուն առվակի, ամպրոպ-կայծակի, մայրամուտի ստվերների գույներից, ճախրող ծիծառի հրճվանքից ու անտառի կարոտի թախծից: Նա հիշում է այն լորենին, որ պատմում է պատանեկան զգացմունքների հեքիաթը, որ «ծաղկում էր այն օրերին Գետի ափին հայրենական…»: Հավերժող բնության վկան նույն ծառերն են, քարերն ու սարերը, ուրիշ ամպեր են նստում սարերին, ուրիշ մամուռ է ծաղկել քարերին, միայն սարերն են նույնը մնացել, միայն քարերն են նույնը մնացել, որոնք իրենց հետ նույնանալու կանչով են դիմում մարդուն՝ գալ ու հավերժել իրենց հետ, իրենց կողքին, որ հիշատակները երբեք չկորչեն…

Սահյանի պոեզիայում մի տեղ ծիածաններն են գուներանգվում, մի այլ տեղ հանգստանում է հողմը բացատում, ու բնության խորին խորհուրդներն են բացահայտվում, լսվում են խորհրդավոր շշուկներ, որ խառնվում են հայրենների ու հորովելների ձայնին ու հյուսում հայրենի երգը, որ ուրիշ տեղ, ուրիշ կերպ փնտրել ու գտնել չի լինի: Սա բանաստեղծի հավատամքն է, առանց որի ո՛չ հայ մարդը կարող էր ապրել և ո՛չ բնաշխարհի մարդու կապի վերածնողը՝ Մարդ-պոետը.

- Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց ինձ...

Հայերենյան շնչին, նաիրական աշխարհի ոգուն ու մարդուն գրիչը նվիրաբերած բանաստեղծի հոգին տրոփում է Հայաստանով, որի անունը տալիս շրթունքն է ճաքում, հասակն է ծաղկում, թևերն են բացվում… Այսպես՝ նա սովորեցրեց սիրել Հայաստանը՝ հողոտ-մղեղոտ ակունքներին փարված մեր ժողովրդին: Իսկ երբ իջնում էր իրիկնաժամի վարագույրը, և բանաստեղծը դարձյալ մնում էր իր եզերքի բնապատկերների հետ, ուր երկնքոտ կատարներին անփորձ քամին էր քսվում, իր խոհերի մեջ բացահայտում էր միշտ իրեն՝ հավատարիմ իր ինքնությանը.

Ես իմ շիկացած ժամանակների
Բովերի վրա
Աղանձ չեմ արել իմ ոսկեղենիկ
Լեզվի սերմացուն…

…Հոսում է ժամանակը, անցնում են մարդիկ, բայց մնում են բանաստեղծի երգած երգերն ու քարափները, որ պատմել են ու պիտի պատմեն այն դող ու սարսուռի մասին, որ զգում էր բանաստեղծը հայրենի եզերքի սիրուց, այն փաթիլ ձյունի ու կաթիլ ցողի մասին, որ նստում է քարափներին… Ու պիտի պատմեն, որ կանգուն են հավետ ու արթուն պիտի հսկեն 1993-ին մի բուռ հող դարձած մեծ բանաստեղծին.

Քարափներ իմ, քարափներ,
Ձեր շուրթերի վրա ես
Սարսուռ ու դող եմ:
Ձեր հոնքերի վրա ես
Ձյունի փափուկ մի փաթիլ,
Մի կաթիլ ցող եմ:
Ձեր մեջքն ամուր է այնքան,
Դուք կանգուն եք հավիտյան,
Ես կռացող եմ:
Ձեզ ժամանակն է դարբնել,
Դուք մնացեք, քարափներ,
Ես գնացող եմ...
Բայց գնալուց հետո էլ,
Երբ որ կանչեք, կարթնանամ,
Ձեր ոտքերի տակ՝ մի բուռ
Խոր քնած հող եմ:

Աշխարհից անցավ մեծ բանաստեղծը, բայց մնաց նրա տողերի համը, մնացին նրա երգած ծիածանները ու ձյուների միջից շողացող արևները, որ անկրկնելի են և միայն մեր երկրում կան…

Այս ամենը վկայում են, որ Սահյանի պես բանաստեղծ լինելու համար պարզապես պիտի օժտված լինել սահյանական ձիրքով, պիտի ունկնդիր լինել բնության ձայնին, քանզի բանաստեղծությունը ինքը բնության արձագանքն է, շառաչը, որ միախառնում է հողեղենն ու մարդկայինը, դառնում արտացոլանք, որ բացահայտում է մարդկային հոգին ու հանգրվանում բնության խորքերում:

Եվ բանաստեղծները հավերժանում են հավերժ նորոգ բնության մեջ, ինչպես ինքը՝ Համո Սահյանը, որ իր սիրելի երկրի ու մարդկանց «Հայաստանոտ շրթունքներով» երգեց երգերը Մայր Հայաստանի, որի բոլոր էջերն ու ելևէջները, ժպիտներն ու արտասուքները, տենչանքներն ու երազանքները, անցած բոլոր ճանապարհները «Հայաստանոտ» են… Ուր մի փոշոտված փշատենի, մի հոշոտված խաղողի որթ, Նորքի վրա մի հին բարդի, մի տարագիր հոգու բաղձանք, մի մենավոր ծիրանի ծառ, մի ջրվեժի տխուր շառաչ… երգ են հյուսում, և հայ մարդը՝ ամուր ու պինդ, «Նստած դաշտում Արարատյան, մեջքը հենած Արագածին», կռելով բախտն ու ապագան, բորբոքում է օջախն իր հին՝ «վառած աստղերն իր նոր փառքերի մեջ…»:

Ու հավերժող Հայոց երկրում հավերժ նազում է նաիրյան բարդին, որի սիրուց էր մեծ բանաստեղծը դարձել մարտիկ, դարձել երգիչ հրի, սրի, երգիչ սիրո հայրենիքի ու հարազատ բնաշխարհի:

**Վարդիթեր ՀԱԿՈԲՅԱՆ**
**Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմն. դպրոցի հայոց լեզվի եւ գրակ. ուսուցչուհի**

# «ՊՈԵԶԻԱՆ ԻՄ ԱՄԲՈՂՋ ԿՅԱՆՔՆ Է»

Ապրիլի 14-ին լրացավ մեր մեծագույն քնարերգուներից մեկի՝ Համո Սահյանի ծննդյան 100-ամյակը: Զանգեզուրի Լոր գյուղում է աչք բացել բանաստեղծը, որը նրա մանկության տարիներին այնպիսին էր, ինչպիսին եղել է երկար դարերի ընթացքում. «Մենք աղքատ էինք: …Ամբողջ գյուղի հագուստը տնայնագործական էր, տնտեսությունը՝ նախնական: Մենք անհուսալիորեն կտրված էինք աշխարհից: Դրա պատճառը հիմնականում մեր անանցանելի լեռներն էին, որոնց կիրճերում բույն էին դրել մեր գյուղերը»: Սակայն այդ դաժան ու չարքաշ կյանքով ապրող մարդիկ բարձր բարոյականության տեր էին, ազնիվ ու աշխատասեր: «Չլիներ այդ դժվար և դժվարության մեջ գեղեցիկ մանկությունը, հնարավոր է, որ ես բանաստեղծ չդառնայի»,- մի հարցազրույցի ժամանակ ասել է Սահյանը: Ինքնապեղումներից ծնված նրա քնարերգությունը առաջին հայացքից կարող է թվալ, թե իր մասին է, իր հույժ անձնական ապրումների մասին, բայց նրա մեջ ուրիշները գտնում և ճանաչում են իրենց: Սրանում է նա տեսնում բանաստեղծի կոչումը և հավելում, որ մարդկային ցավը բանաստեղծի և՛ ճակատագիրն է, և՛ խնդիրը: Ուստի զարմանալի չէ, որ բանաստեղծը գրում է պարզապես ոչ այն մասին, ինչն անհայտ է ընթերցողին, այլ այն մասին, ինչ անհայտ է հենց իրեն: «Պոեզիան իմ ամբողջ կյանքն է»,- ասում էր բանաստեղծը և զարմանում, որ «մարդիկ կան, որոնք բանաստեղծություն չեն կարդում ու ապրում են»: Նա համոզված էր, որ պոեզիան օգնում է մարդուն՝ տեսնելու աշխարհը, տեսնելու ինքն իրեն: «Իմ մասին գրում են, որ ես բնության երգիչ եմ, իսկ ես մարդկանց ավելի լավ եմ ճանաչում: Փոխվում է կյանքը, փոխվում են մարդիկ, բայց սերը կյանքի նկատմամբ, սերը հողի նկատմամբ տարեցտարի ավելանում, ուժեղանում է»,- ասում է Սահյանը: Նրա հավաստմամբ՝ բանաստեղծը միշտ հավասար է ժողովրդին և իր սրտի մեջ պետք է կրի ժողովրդի հավիտենական պատմությունը: Որպես ճշմարիտ բանաստեղծ՝ նա ստեղծել է արվեստի իր լեզուն, իր անշփոթելի, ուրույն ոճն ու ձեռագիրը: Նրան հաջողվել է արվեստում հասնել իր երազած պարզությանը («…որ դժվար լինի գրածդ բանաստեղծություն անվանել, ոչ թե բանաստեղծություն, այլ ինչ-որ պարզ ու հասարակ բան, որ վեր է բանաստեղծությունից»/ և մեծությանը /« Մեծ է այն բանաստեղծը, որին կարդալով, ուրիշ բանաստեղծի չես մտաբերում»): Հենց այսպիսի բանաստեղծ է Համո Սահյանը:

Տարին սահյանական է, և մեծ քնարերգուի 100-ամյակն Արցախում նշանավորվում է տարբեր միջոցառումներով: Օրերս ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը նախաձեռնել էր ասմունքի մրցույթ, որին մասնակցում էին հանրապետության բոլոր շրջանները: Մրցույթի քաղաքային (շրջանային) փուլի հաղթողները իրավունք ստացան մասնակցելու հանրապետական փուլին: Ապրիլի 2-ին Ստեփանակերտում անցկացված մրցութային առաջին փուլին մասնակցել են մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների աշակերտները և քոլեջների ու բուհերի ուսանողները: Մրցույթը կազմակերպել էին Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության, սպորտի ու մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության բաժինները համատեղ:

Ըստ կանոնակարգի՝ մրցույթն անցկացվեց 3 տարիքային խմբով. կրտսեր՝ 11-14, միջին՝ 15-17 և ավագ՝ 17 տարեկանից բարձր մասնակիցների միջև: Տարիքային առաջին խմբում ընդգրկված էին 25, իսկ 2-րդ և 3-րդ խմբերում՝ 13-ական մասնակիցներ: Յուրաքանչյուր մասնակից ներկայացնում էր 2 բանաստեղծություն 2 րոպե տևողությամբ: Իրոք, դժվար էր մրցույթի հանձնախմբի համար ընտրություն կատարել, քանի որ շնորհալի ասմունքողներ շատ կային: Որքան էլ զարմանալի հնչի, սակայն չեմ կարող չառանձնացնել ուշագրավ մի հանգամանք. պարզվեց՝ կրտսեր և միջին տարիքային խմբերին Սահյանի պոեզիան ավելի հասու է, քան ավագների՝ ուսանողների համար: Նրանց հաջողվեց ունկնդրին փոխանցել բանաստեղծի ասելիքը սեփական մեկնաբանությամբ: Ամփոփելով մրցույթի արդյունքները՝ հանձնախմբի նախագահ, վաստակավոր լրագրող Դավիթ Միքայելյանը հայտարարեց հանրապետական փուլ անցած մասնակիցների անունները և հաջողություն մաղթեց նրանց:

Անշուշտ, գեղեցիկ նախաձեռնություն էր՝ բանաստեղծի հոբելյանը նշել ասմունքի մրցույթով, քանի որ հարյուրավոր սովորողներ նորից առնչվեցին սիրված բանաստեղծի ստեղծագործությանը, բայց կուզենայինք նրանց և ուսուցիչների ուշադրությունը հրավիրել մի քանի հարցի վրա, որոնք հատկանշական են նման մրցույթների համար: Նախ՝ Սահյանի ծով պոեզիայից ընտրությունը կանգ էր առել բանաստեղծությունների հանրածանոթ մի շրջանակի վրա, ինչի հետևանքով նույն ստեղծագործությունները բազմիցս հնչեցին: Ընտրելիս հաշվի չէին առել կանոնակարգի պահանջը, որ յուրաքանչյուր մասնակցի ելույթի համար հատկացվում էր 2 րոպե, ինչի պատճառով հանձնախմբի անդամները ստիպված էին ընդհատել շատերին, ինչը, բնականաբար, անվստահություն ու շփոթմունք էր առաջացնում երեխայի մոտ: Ոմանց մոտ նկատելի էր ոչ միայն որոշ բառերի սխալ արտասանություն և շեշտադրություն, այլև մտքի իմաստային-տրամաբանական ոչ ճիշտ ընկալում: Հուսանք՝ հանրապետական փուլում ավելի հաջող արդյունքներ կունենանք:

Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը բանաստեղծի ծննդյան օրը՝ ապրիլի 14-ը, նշանավորեց ևս մի հետաքրքիր միջոցառմամբ՝ մայրաքաղաքի Ստ. Շահումյանի անվան պուրակում մեկտեղելով Սահյանի պոեզիայի սիրահարներին: ՀՀ վաստակավոր արտիստներ Սարգիս Նաջարյանի և Սիլվա Յուզբաշյանի ասմունքը հրավեր-կանչ էր անցորդներին՝ միանալու երեկոյի մասնակիցներին: Միջոցառման մեկնարկն ազդարարեցին Շուշիի Մ. Խանդամիրյանի անվան թատրոնի դերասանները, ապա ելույթ ունեցան ասմունքի մրցույթի քաղաքային փուլի՝ մրցանակային տեղեր գրաված աշակերտները: Երեկոն ավելի ջերմ ու անմիջական դարձավ հանդիսատեսների խոսք ու ասմունքի շնորհիվ: Շուրջն ամեն ինչ տրամադրում էր քնարականության ու խոհականության: Բնապաշտ պոետի ստեղծագործությունները բաց երկնքի ներքո, պուրակի ծառ ու ծաղկի մտերմիկ հարևանությամբ մի այլ հնչողություն էին ստանում՝ գերելով ներկաներին: Իսկ ամենաուրախալին այն էր, որ հավաքվածների գերակշիռ մասը երիտասարդ սերունդն էր, ում առջև մեծ քնարերգուի բանաստեղծական աշխարհը նորովի բացվեց: Ամբողջ երեկոյի ընթացքում ասմունքն ընդմիջվում էր Սահյանի խոսքերով գրված երգերով, էկրանին բանաստեղծն էր, իսկ պուրակում թևածում էր նրա ձայնը… Մութը դանդաղ շաղում էր պուրակի վրա, պարուրում քաղաքը աղջամուղջի ստվերներով, իսկ բանաստեղծի կենդանի ձայնը՝ «Ինձ բացակա չդնեք…», նրա անտես ներկայությունը ավելի զգալի ու մերձ էր դարձնում յուրաքանչյուրիս:

**Մելանյա ՄԻԼՈՆՅԱՆ**

## ՄԵԾ ԵՂԵՌՆ - 99

# ԵՂԵՌՆԱԶԱՐԿ ԳՐՈՂՆԵՐ. ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ



*Բաղձանքս է ապագային մարդերուն նվիրել այնպիսի հզոր երգ մը՝ որ հայրենիքը ինծի պես արարած մը ծընած ըլլալու գոնե չզղջա:*

**Դանիել Վարուժան**

Ծնվեցիր աշխարհին անհայտ մի փոքրիկ գյուղում, մատյանում գրանցեցին Դանիել Ճպուկքարյան. Բրգնիկ, 1884 ապրիլի 20: Մանկությունդ անցավ ուռենիների տխուր հովանու ներքո: Թիթեռների ետևից վազվզող մանուկ էիր, հայրդ պանդուխտ դարձավ: Գյուղի դպրոցում էլ հազիվ էիր սկսել կարդալ սովորել, մայրդ հանեց դպրոցից ու այդ խառն օրերին (95-96-ի կոտորած) տարավ Պոլիս, պանդուխտ հորդ մոտ: Կոտորածի արյան սարսափի մեջ հուսահատ փնտրում էիր նրան՝ գտար բանտում: Բանտից երբ ազատվեց, մնացիր մոտը, պանդուխտների գրկում, ունկնդիր լինելով նրանց հառաչանքներին ու սրտի վերքերին:

Վարժարան մտար սովորելու, որտեղ սրտակից ընկեր դարձավ ապագա անվանի դերասան Վահրամ Փափազյանը:

Համեստ, հնազանդ, լռակյաց ու հեզ պատանի էիր, նիհար, դեղնած դեմքով, կապույտ աչքերով: Ցրտից մատներիդ փչելով, անշարժ ու լարված լսում էիր Գարեգին վարժապետին, հայոց լեզվի և գրաբարի ուսուցիչ Արիստակես Քասգանտիլյանին, որոնք էլ շատ հոգատար էին քո նկատմամբ: Գրում էիր բանաստեղծություններ, և Քասգանտիլյանը ընդառաջեց ու քեզ ուղարկեց Վենետիկի Ս. Ղազար կղզում Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում շարունակելու ուսումդ: Այստեղ էլ գրում էիր և երազանքդ էր ավարտելուց հետո ընդունվել Լոզանի համալսարան: Սիրելի էիր ուսուցիչներիդ համար: Մտերիմ ընկերներդ էին Դերենիկ Ճիզմեճյանը և Գարեգին Տյուրգերյանը: Ճիզմեճյանը հոգեկից ընկեր էր, նրա առաջ բացում էիր քո սրտի և մտքի բոլոր գաղտնիքները:

Վարժարանում Քասգանտիլյանի խմբագրությամբ լույս տեսավ բանաստեղծություններիդ առաջին գիրքը՝ «Սարսուռներ»: Դանիել Ճպուկքարյան էիր, դարձար բանաստեղծ Դանիել Վարուժան: Ուսուցիչ և քո բարերար Սիմոն Երեմյանը, մեծ ջանքեր գործադրելով, համոզում էր վարժարանի տնօրինությանը նշանակել թոշակ և ուղարկել ուսումդ շարունակելու համար: Այլ կերպ որոշել էիր կոչկակար դառնալ: Սակայն Լոզանի փոխարեն հայտնվեցիր Բելգիայի Կանտի համալսարանում:

* * *

Իր բարերար ուսուցչին Կանտից գրում է. «Կզարմանաս, երբ ասեմ, թե հրաշալի քննություններ տված եմ»: Մի այլ նամակում հայտնում է. «Վարժապետներս կը համակրին ինծի՝ կարծեմ հայ ըլլալուս պատճառով»:

Համեստությունը թույլ չի տվել ավելացնելու, որ ուսուցիչների հարգանքը պայմանավորված էր նաև նրա լավ սովորելով. եղել է ուսման գերազանցիկ:

Կանտի համալսարանում է գրում «Ցեղին սիրտը» բանաստեղծությունների շարքը: Ավարտելով համալսարանը՝ գրում է. «Մտավոր կարողություններս վարժարանեն հազարապատիկ զորեղացած կզգամ»: Այդ զորեղացած գիտելիքներով վերադառնում է հայրենիք՝ «հայրենի տունը շենացնելու»:

Նշանակվում է ուսուցիչ, սիրում է մի հայ աղջկա և հոգու ամբողջ թափով նվիրվում նրան: Այդ աղջիկն էլ դարձավ նրա օգնականը, բանաստեղծի քնարին ուժ տվողը: «Օրիորդը, որուն հետ ամուսնացա,- ասում է բանաստեղծը,- կը կոչվի Արաքսի: Գավառի կնոջ բարոյական համեստության հատկություններուն վրա՝ գտած եմ քերթողի ճաշակս և մտքի պահանջներս գոհացնող առավելություններ անոր մեջ»:

Շուտով նորապսակ ամուսիններն ունենում են գեղեցկադեմ մի աղջիկ, որին կոչում են Վերոնիկ: Ահա այս դստերն է, որ նվիրում է Վարուժանը ծնողական անբասիր սիրո զգացմունքներից բխած «Վարուժնակիս» բանաստեղծությունը:

Մտածում է տեղափոխվել Պոլիս, որը արևմտյան հայության մտավոր ու գրական կյանքի կենտրոնն էր: Այնտեղ էին ապրում ու ստեղծագործում Զոհրապը, Սիամանթոն, Զարգարյանը, Կոմիտասը, Թերլեմեզյանը և շատ ուրիշ գրողներ ու արվեստագետներ: Այստեղ անքուն գիշերներին էր, որ ստեղծվում էր նրա «Հացին երգը» շարքը:

Նա նվիրվում էր ոչ միայն ստեղծագործական աշխատանքին, այլև իր ընտանիքին: «Ընտանեկան հարկին տակ,- գրում է նրա այրին,- Վարուժանը անհուն սեր ու խանդաղատանք կտածեր իր զավակներու հանդեպ»: Ի՜նչ իմանային բանաստեղծի անմեղ զավակները, որ շուտով պետք է զրկվեին հորից: Մոտալուտ վտանգը շատ մտավորականների հետ կանխազգում էր նաև Վարուժանը: 24-ին, երեկոյան դուռը զարկեցին: Քանի որ Վարուժանը կիսահիվան վիճակում էր, դուռը քիչ բացում է կինը. երեք հոգի կանգնած էին դռան առջև: Դուռը հրելով բացին և ներս խուժեցին.

- Էֆենտին ո՞ւր է,- ասին ու մտան Վարուժանի աշխատասենյակը, խուզարկեցին, վերցրին ձեռագրերը: Զավթիաներից մեկը, դիմելով բանաստեղծի շվարած կնոջը, ասում է. «Էֆենտին մեզ հետ պիտի գա, որպեսզի ստորագրե, թե ասոնք իր թղթերն են»: Ի՜նչ իմանար խեղճ կինը, թե Վարուժանին տանում են աքսորելու. սպասեց ողջ գիշեր վերադարձին, բայց չեկավ:

Չեմ կարող նկարագրել, թե աքսորի ճանապարհին մարդակերպ թուրք բորենիները ինչպես խոշտանգեցին այդ մեծ մտավորականին: Հանճարի և վայրենու, քաղաքակրթության և բարբարոսության ընդհարումն էր այդ սպանությունը, որ կատարվեց նախամարդու գործիքով՝ քարով:

Ապրիլի 20-ին, նրա ծննդյան օրը, ցանկանանք գարնան այս օրերին մեզ մոտ եկող կռունկների երամները Դեյր էզ Զորով անցնելիս դափնեպսակ կամ մի սպիտակ կակաչ դնեն բանաստեղծի գերեզմանին: Բանաստեղծ, որ անմահ է իր ստեղծագործություններով, մեզ է նայում Բելգիայի Կանտի համալսարանի հուշատախտակից: Նա երգում էր.

Արևելյան կողմն աշխարհի
Խաղաղությո՜ւն թող ըլլա...
.........................................
Արևմտյան կողմն աշխարհի
Բերրիությո՜ւն թող ըլլա...
..............................
Հյուսիսային կողմն աշխարհի
Առատությո՜ւն թող ըլլա.
..............................
Հարավային կողմն աշխարհի
Պտղաբերո՜ւմ թող ըլլա...
...................................
Ու երբ թխեն հարսերը հացը բարի՝
Սիրերգությո՜ւն թող ըլլա:

## ՄՏՔԵՐ

«Կուզեմ համբուրել այն բոլոր տեղերը, ուր նահատակ մը ինկավ կամ հերոս մը կոխեց»:

«Ըստ իս և տակավին ինծի համար՝ ահա օրենքս՝ մեր գրականության մեջ արվեստը հայ պետք է ըլլա, իսկ անոր հատակը կամ հիմը կազմող գաղափարը՝ համամարդկային»:

*Դանիել Վարուժան*

«Դանիել Վարուժանի ....«Ցեղին սիրտը» ժողովածուն աղոթագիրք էր ամեն մի ապստամբի համար այնտեղ՝ Թուրքահայաստանում, որտեղ գոյության իրավունքը թաթախված էր արյան մեջ՝ Եվրոպայի բարեմաղթությամբ: Նրա երգերը բազում հերոսներ ծնեցին, նրա խոսքը գործի վերածվեց»:

*Սերգեյ Գորոդեցկի*
*Ռուս բանաստեղծ, թարգմանիչ*

«Վարուժանի հայերենը բազմակողմանի հարստություն ունի և ճկուն է, կարող՝ արտահայտելու ամեն գաղափար ու զգացում և պատկերացնելու ամեն տեսարան. ինչուն է ու զորավոր և իր արտահայտության կերպին պես բազմազան ու գունեղ»:

*Մեսրոպ Ճանաշյան*
*Գրականագետ*

«Դանիել Վարուժան մեծագույն փառքերեն մեկն է մեր քնարերգության, եթե ոչ մեծագույնը»:

*Հակոբ Օշական*
*Գրող*

«Ես հիացած եմ հայ նոր բանաստեղծներով...

Դանիել Վարուժանը... ի՜նչ մեծ բանաստեղծ է, հատկապես նրա իրապաշտ հատվածները, սիրային բանաստեղծությունները գլուխգործոցներ են...»:

*Սեն Ժոն Պերս*
*Ֆրանսիացի բանաստեղծ*

# ՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ՍԽԱԼՎԵՑ

Հայերին ոչնչացնելու քաղաքականությունը Թուրքիայի կողմից վաղուց էր ծրագրված: 1894-96թթ. կազմակերպվեց 300 հազ. հայերի կոտորածը. 1909թ. Ադանայում և նրա շրջակայքում սպանվեցին 30 հազ. հայեր: Իսկ առաջին համաշխարհային պատերազմը արձակեց Թուրքիայի ձեռքերը՝ այն լրիվ իրագործելու:

1915թ. նահանգապետներին ուղղված հրահանգներից մեկում գրված է. «Հանգամանքները թույլ չեն տվել իրականացնելու այդ սրբազան գործը: Ներկայումս, երբ բոլոր խոչընդոտները վերացված են, ոչնչացնել բոլորին և ամեն կերպ ձգտել վերացնել «Հայաստան» իսկ անունը Թուրքիայում»:

Երիտթուրքերի պարագլուխները 1915թ. սկզբին գումարեցին գաղտնի խորհրդակցություն, որտեղ քննարկեցին հայերի ոչնչացման հարցը: Խորհրդակցության ղեկավար, Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթը կատաղի ատելությամբ ազդարարեց, որ «պետք է մաքրել հայերի հաշիվը» և խոստացավ դրա համար ոչինչ չխնայել: Ապրիլի 24-ին բանտ նետվեց հայ մտավորականների առաջին խումբը: Այնուհետև շարունակվեցին ձերբակալությունները. բոլորին քշեցին Անատոլիայի խորքերը և գազանաբար սպանեցին: Զոհվածների մեջ էին Գրիգոր Զոհրապը, Սիամանթոն, Դանիել Վարուժանը, Ռուբեն Սևակը, Ռուբեն Զարգարյանը, Երուխանը, Թլկատինցին. անուն առ անուն հնարավոր չէ թվել բոլորին:

Մեծ ոճիրը հասավ զանգվածային տեղահանության ու կոտորածին: 1915թ. սեպտեմբերի 9-ին Թալեաթը կարգադրել էր.

«Թուրքական հողի վրա հայերի ապրելու և աշխատելու իրավունքը լիովին վերացված է: Կառավարությունն իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է չխնայել նույնիսկ օրորոցի երեխաներին:

Հայերի բնաջնջումը տեղի ունեցավ ամենաբազմազան ու բիրտ եղանակներով: Այն իրականացվեց թե՛ տեղերում, թե՛ բռնագաղթի ճանապարհներին և թե՛ աքսորավայրերում՝ հատկապես Դեյր էզ Զորում: Ապրիլի 24-ը դարձավ հայոց անմեղ զոհերի հիշատակի օր:

Մինչ ձերբակալվելը՝ մայիսի 19-ին Զոհրապը գնում է Թալեաթի և Իթթիհատի գլխավոր քարտուղար Շյուքրիի մոտ, զայրույթով նրանցից բացատրություն պահանջում հայերի նկատմամբ կիրառվող այդ նախճիրի համար:

- Օր մը հաշիվ պիտի պահանջվի ձեզմե, և դուք պիտի կարենաք արդարացնել ձեր արարքները,- ասում է նա:

- Ո՛վ պիտի պահանջի այդ հաշիվը,- հեգնանքով պատասխանում է Թալեաթը:

- Ես՝ խորհրդարանի մեջ իբրև հայ մեբուս (պատգամավոր), ձեզմէ հաշիվ պիտի պահանջեմ:

Հենց հաջորդ օրը՝ մայիսի 20-ին ձերբակալում են Զոհրապին և ուղարկում աքսոր: Հուզիչ են աքսորի ճանապարհից նրա գրած նամակները կնոջը. «Մի հուզվիր, քաջ եղիր, ես քաջ եմ, բայց հիվանդ. պիտի ջանամ ապրելու...»:

Մի այլ նամակում գրում է. «Հիմակ սեփական կինս, ալ վերջին վարագույրը կսկսի մեզի համար... Ավելի գրելու ուժ չունիմ, թե որ ողջ չի մնամ, զավակներուս վերջին պատվերս ու կտակս է, որ միշտ սիրով ըլլան իրարու հետ, զքեզ պաշտեն և սիրտդ չի ցավցնեն ու զիս ալ հիշեն: Ահա միակ հարստությունս՝ անոնց գրկին մեջ հոգիս տալ. ի՜նչ ուրախություն. չեմ գիտեր, թե Աստված այս բաղձանքս պիտի կատարի՞»:

Աստված բաղձանքդ չկատարեց, սիրելի գրող, բայց վրեժդ առան զոհվածների հայ քաջորդիները... Թալեաթը շատ սխավեց իր հաշիվներում, թե ոչ մի հայ կենդանի չի մնա, որ իրենից հաշիվ պահանջի:

1921թ. մարտի 16-ին Բեռլինում Սողոմոն Թեհլերյանը շանսատակ արեց Թալեաթին՝ ատրճանակով դիմացից ուղիղ ճակատին խփելով, ոչ թե թիկունքից:

Բացվեց հանցագործներին արժանի պատիժ տալու ճանապարհը:

Նույն թվի հուլիսի 19-ին Պոլսում վրիժառու Միսաք Թորլաքյանը վերջ դրեց հայակեր Ջիվանշիրի կյանքին: 1922թ. ապրիլի 17-ին Բեռլինում, վայրկյանների ճշգրտությամբ գործելով՝ Արամ Երկանյանի ու Արշավիր Շիրակյանի կողմից իրենց արդար պատիժը ստացան Բեհաեդդին Շաքիրը և Ջեմալ Ազմին՝ թավալվելով գետնին: Նույն թվի հուլիսի 21-ին Թիֆլիսում Ստեփան Ծաղիկյանի, Պետրոս Տեր-Պողոսյանի, Արտաշես Գևորգյանի կողմից իր պատիժն ստացավ նախարար Ջեմալը:

1922թ. օգոստոսի 4-ին մեր հայրենակից, Մարտունու Խնուշինակ գյուղից սպա Հակոբ Մելքումովի ձեռքով սպանվեց ճիվաղը՝ ռազմական նախարար Էնվերը, Աֆղանստան փախչելիս՝ հենց սահմանագլխին:

Քաջ հայորդի Հակոբ Մելքումովին որոշվեց գնդակահարություն: Նա ավարտել էր ռազմական ակադեմիան: Զինվորական գերազանց ծառայությունների համար արժանացել մի շարք բարձր պարգևների: Դրա համար գնդակահարությունը փոխարինվեց բանտարկությամբ: Նա 20 տարի անցկացրեց խորհրդային բանտերում: Այնպես որ, Թալեաթը շատ սխալվեց իր հաշիվներում:

**ՆՈՒՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**
**Հադրութի շրջ.**
**գ. Առաջամուղ**

## ԴԱՐԻ ԿՆԻՔԸ
(եղեռնի զոհերի անմեղ հիշատակին)

Ակոսներ են գոյացել ճաք տված պատմությունից.
Երևույթը հարյուր տարեկան չի կարող դառնալ...
Նրա արյան հոտը թարմ է, խիստ թարմ՝
　　գրեթե նոր ճենճահոտ,
Այնտեղ դեռ նորածնի սովալլուկ
ճիչն է արձագանքում,
　　որ նվաղելու մասին չի էլ մտածում...
Պահն զգացեք թեկուզ մի վայրկյան,
Եվ որոտը ուժեղ կայծակից հետո
　　չի ցնցվի:
Մեր արյունոտ հետքերը գարուն
　　չեն ավետում,
Եվ տարերքն այդ օրից է, երևի,
　　գազազել՝
Վկա՝ Աստծո լացը
　　Ապրիլի 24-ին:
Դա մեկ օր չէր...
Ձահերն Աստծունն են, որ մի օր կտեսնեն
　　Տիրոջից,
Եվ աղոթքը մոլլայի կդառնա
　　իր մեծ մեղքի փշրված պատրանքը...
Մորթված ազգի առջև ի՞նչը կարող է պատասխան
　　լինել,
Եթե ոչ խիղճը
　　սրբություն չունեցող անասունի:
Հարյուրամյակը թերևս նոր սկիզբն է գենոցիդի:
Մենք խղճահարվող չենք, մեր սկիզբն առջևում է:

**ԶԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ**
**Ղուզե Ճարփարի հիմն.**
**դպրոցի հայոց լեզվի եւ**
**գրակ. ուսուցչուհի**

ԿԵՆՍԱԴԻՐՔ

# ՄԻՇՏ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ



Բանասիրության ոլորտում երկար տարիների գործունեություն ծավալած և ուսանելի կյանքի ուղի անցած շատ մարդիկ նվաճում են շրջապատի հարգանքն ու համակրանքը, ովքեր իրենց ստեղծագործական աշխատանքով թափանցում են ընտրած մասնագիտության խորքերը, գնահատում մարդկայինն ու վեհը, ձեռք բերելով աշխատասիրություն, ուժեղ կամք, պարուրվելով ջերմ զգացումով հայրենի եզերքի ու ժողովրդի հանդեպ: Նրանցից է Արցախի պետական համալսարանի գրականության և լրագրության ամբիոնի դոցենտ Զինաիդա Բալայանը, որի ծննդյան 60 տարին լրացավ մարտի 19-ին:

Մի հետադարձ հայացք՝ անցած տարիներին:

Բանաստեղծուհի, գրող, բանասեր, մանկավարժ Զինաիդա Առաքելյան-Բալայանը (Ու Յոն Իկ) ծնվել է Վարանդական աշխարհի Ավետարանոց մելիքանիստում (ԼՂՀ, Ասկերանի շրջան, գյուղ Չանախչի):

Առաջին պարը՝ «Ծաղկեփունջը», մենակատարել է 5-6 տարեկանում (դեռևս դպրոց չհաճախած) աշակերտական համերգի ժամանակ՝ գյուղի ակումբում՝ խմբակի աղջիկների հետ: Առաջին ասմունքը բեմային՝ Վ. Փափազյանի «Լուր-դա-լուրը», կատարել է 10 տարեկանում: Առաջին բանաստեղծությունը գրել է 12-13 տարեկանում՝ Պապունց Խութի ստորոտում: Հաջորդիվ՝ ակրոստիքոսներով (շարեր): Առաջին լավագույն դերակատարումը լեհուհի Լարիսայի դերն էր Ն. Զարյանի «Վրեժ» դրամայում:

1970-71թթ. ավարտել է Ավետարանոցի միջնակարգ դպրոցը:

1978-79թթ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը:

Սկսած 1987թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներից և շարունակաբար՝ Արցախյան ազգային-ազատագրական շարժման ընթացքում հետապնդվել է ՊԱԿ-ի գործակալների կողմից:

Շարժման ակտիվ նախանձախնդիրներից, նախաձեռնողներից ու մասնակիցներից է (արգելված ցուցահանդեսի կազմակերպում, փաստաթղթերի ստորագրում, համաժողովրդական հանրահավաքներին ու ցույցերին մասնակցում, հաճախ՝ ղեկավարում, հանրահավաքներում՝ հրապարակային ելույթներ):

1989թ. մասնակցել է «Ամարաս» բարեգործական միության ստեղծմանը, ընտրվել է քաղաքային միության անդամ:

1991թ. ԱրՊՀ դասախոս է:

Անչափահասությամբ հանդերձ, երեք զավակներից (Հովիկ (16 տարեկան), Մարիա, Մխիթար (14 տարեկան) ուստրերը կամավոր կերպով, ակտիվորեն մասնակցել են Արցախի ազգային-ազատագրական պայքարի թեժ մարտերին, հանուն հող հայրենյաց՝ վիրավորվել:

1994թ. ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ «Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը և նրա պատմական աղբյուրները» թեմայով և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1995թ. «Նաիրի» հրատարակչությունը լույս է ընծայել «Շառավիղեալն» քերթվածների ու պոեմների անդրանիկ ժողովածուն:

ԼՂՀ ԳՄ անդամ է 1994-ից: 1999թ. Ստեփանակերտի «Սոնա» հրատարակչությունը լույս է ընծայել «Արցախ. դաժան սեր» տարեգիրքը, որում կան Զինաիդա Բալայանի քերթվածներից ևս:

Մանկական տարիներից սիրահար է եղել երգի, պարի, ասմունքի, սպորտային խաղատեսակների, թատրոնի և դրանց անզուգական կատարումների ու մենակատարումների: Դպրոցական տարիներից եղել է մարզային և հանրապետական մրցույթների, օլիմպիադաների հաղթող՝ գրականության, ասմունքի, պարի, սպորտի տարբեր ասպարեզներում:

«Դպրատուն» գրական, մշակութային, ուսանողական խմբակը՝ գեղարվեստի թատրոնը, որն արձանագրել է գեղագիտորեն հարուստ և իմաստալից, նպատակաուղղված երկար տարիների գործունեություն, հիմնադրել և ղեկավարում է 1980 թվականից ցայսօր: Խմբակի ծրագիր-նպատակ-խորհուրդը մեկն է՝ բացահայտել և զարգացնել ուսանողության ստեղծագործական շնորհները, գեղարվեստական ասացումները, անդրադառնալ հայ և համաշխարհային քաղաքական, գրական, գրականագիտական, պատմական, մշակութային գործիչների ստեղծագործությունների գեղարվեստականացված-բեմականացված կատարումներին՝ դարձնելով դրանք անկրկնելի արվեստատոներ, գեղարվեստի ցոլանքները արժևորելով որպես վեհորեն ապրելու, պայքարելու, արարելու, հարատևելու խոհ և խորհուրդ, ոգեղեն նիրվանա, ստեղծելով ուսանողական-երիտասարդական գեղարվեստի հիշողության դաշտ:

Լույս է տեսել «Վիրակապ չհանդուրժող թևը» պատմվածքների ժողովածուն, «Արցախը XIX դարի գրականության մեջ և մշակույթում» ընդհանուր խորագիր կրող ուսումնասիրությունը՝ «Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպը» և «Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի»-ին ժամանակի հոլովույթում» ենթավերնագրերով, «Մեսրոպ Մաշտոց երևույթը և հայոց ազգային գաղափարաբանության բարդույթը» քննական, գիտամեթոդական ուսումնասիրությունը:

ՀՀ ԳՄ անդամ է 2007 թվականից:

Զինաիդա Բալայանը հեղինակել է տասնյակ գիտահետազոտական հոդվածներ, ուսումնասիրություններ, մեթոդական ձեռնարկներ, արձակ և չափածո երկեր: Հանդես է եկել ՀՀ և ԼՂՀ ռադիոյով, հեռուստատեսությամբ և պարբերական մամուլով:

Գրականագետն իր ակտիվ մասնակցությունն է բերում Արցախի գրական, հասարակական, մշակութային, գիտական, մանկավարժական կյանքին՝ ԼՂՀ ԳՄ միջոցառումներում հանդես գալով ելույթներով, պատմվածքներով, գեղարվեստի թատրոնի միջոցառումներով, ցուցահանդեսներով, «Նարեկ»-ի հերթական համարների լույս ընծայմամբ:

Ստեղծագործաբար աշխատող, որոնումներ կատարող ու հետաքրքրասեր մեր սիրելի հոբելյարը, միշտ ցանկանում է լսել նաև ուսանողների կարծիքը:

Զ. Բալայանը 60 տարեկան է: Մանկավարժի կեցվածքով ու պահվածքով այսօր նա նոր նպատակադրումների խաչուղիներում է:

Հոբելյարին մաղթենք արևշատություն, ուժ ու ստեղծագործական եռանդի կրկնապատկում շնորհակալ աշխատանքում, քանզի ամեն մի բովանդակալից կենսագրություն իր տեղն ունի արցախահայ պատմության էջերում.

Մի հուր հավատ բիբլիական սարերին,
Վանա ծովին ու Սևանին, Մասիսին...
Մի լույս խորհուրդ առած սրտիվ սրբածին՝
Սուրբ Մեսրոպը փռեց հայոց աշխարհին:
Ու երգն անուշ հայահնչուն ու հնամյա,
Ու խոսքն հայոց փոշեթափ ու դարավոր,
Ու բառերն՝ թառած նրա շուրթերին,
Վառ գոհարներ տվին քննիչ դարերին...
Մի հինավուրց հայոց կապույտ երկնքում,
Մի հին ոգի ելած ճամփի դարերից,
Մի սուրբ Մաշտոց՝ կպած հայի շուրթերին,
Հավերժում է հայոց հողում հնամյա...

**ՆԻՆԵԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

***«Լուսարար»-ը շնորհավորում է բանաստեղծուհի, գրականագետ, ԱրՊՀ դասախոս Զինաիդա Բալայանին՝ հոբելյանի առթիվ, մաղթում ստեղծագործական նորանոր հաջողություններ:***

*Մարզական*

# ԼՂՀ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 5-ՐԴ ՍՊԱՐՏԱԿԻԱԴԱՅՈՒՄ

ԱրՊՀ մարզադահլիճում կայացան ԼՂՀ դպրոցականների 5-րդ սպարտակիադայի ծրագրով աղջիկների և տղաների միջև հանդբոլի հանրապետական մրցումներ: Մասնակցում էին Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ շրջանների հավաքական թիմերը:

Ուրախությամբ կարելի է փաստել, որ գնալով հանդբոլ մարզաձևը մեծ մասսայականություն է վայելում դպրոցականների շրջանում, ինչի ապացույցը նախորդ տարիների համեմատ թե՛ աղջիկների և թե՛ տղաների կողմից ցուցադրած ավելի լավ խաղերն էին:

Նման մրցումների կազմակերպումը նպատակ ունի բացահայտել լավագույն աղջիկների և տղաների հավաքականները, որոնք կմասնակցեն ՀՀ դպրոցականների միջև անցկացվող մարզական խաղերի միջմարզային փուլին, իսկ այդ փուլում հաջողության հասնելու դեպքում՝ եզրափակիչ փուլին, որտեղ հաղթող թիմերը կմասնակցեն համաշխարհային մարզական խաղերին:

Աղջիկների մրցումներն անցկացվեցին շրջանաձև, իսկ տղաներինը՝ վիճակահանությամբ կազմված երկու ենթախմբերում, այնուհետև, ըստ գրաված տեղերի, միմյանց հետ հանդիպելով, որոշում էին վերջնական տեղերը:

Ծավալված համառ և անզիջում մրցակցության արդյունքներով մրցավարական հանձնախումբը որոշեց հաղթողներին:

Աղջիկների մրցապայքարում մրցանակային տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ.

1-ին տեղ՝ Ստեփանակերտ քաղաքի հավաքական թիմ:
2-րդ տեղ՝ Մարտունու շրջանի հավաքական թիմ:
3-րդ տեղ՝ Ասկերանի շրջանի հավաքական թիմ:

Իսկ տղաների մրցապայքարում մրցանակային տեղեր գրավեցին՝

1-ին տեղ՝ Մարտունու շրջանի հավաքական թիմ:
2-րդ տեղ՝ Շուշիի շրջանի հավաքական թիմ:
3-րդ տեղ՝ Ասկերանի շրջանի հավաքական թիմ:

Մրցանակային տեղեր գրաված թիմերը պարգևատրվեցին ԼՂՀ կրթության և գիտության նախարարության դիպլոմներով և հուշանվերներով, իսկ թիմերի բոլոր 10-ական անդամները՝ համապատասխան կարգի մեդալներով:

Ձեռքի ժամացույցներով և պատվոգրերով պարգևատրվեցին լավագույն խաղացողներ ճանաչված դպրոցականները. աղջիկներից՝ Դիանա Հակոբյանը, իսկ տղաներից՝ Գոռ Ավագյանը (երկուսն էլ Մարտունու շրջանի Ճարտարի հ. 1 միջնակարգ դպրոցից):

Պարգևատրումները կատարեց և հաղթողներին շնորհավորեց ու հետագա անձնական և մարզական հաջողություններ մաղթեց կրթության և գիտության փոխնախարար Մ. Համբարձումյանը:

# ՇԱԽՄԱՏԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՄ

ՀՀ դպրոցականների շախմատի 8-րդ օլիմպիադայի շրջանակներում Ստեփանակերտի շախմատի մանկապատանեկան դպրոցում ապրիլի 8-10-ը տեղի ունեցան ԼՂՀ դպրոցականների հանրապետական մրցումներ:

Մասնակցում էին ԼՂՀ բոլոր շրջանների՝ շրջանային մրցումներում հաղթող ճանաչված և Ստեփանակերտ քաղաքի առաջնությունում առաջին ու երկրորդ տեղեր գրաված դպրոցների թիմերը:

Յուրաքանչյուր թիմում ընդգրկված էին երեք տղա, մեկ աղջիկ:

Մրցումներն անց էին կացվում շրջանաձև կարգով, արագ շախմատի կանոններով. յուրաքանչյուր պարտիայի համար տրվում էր 15-ական րոպե ժամանակ:

Երկօրյա պայքարից հետո որոշվեցին մրցանակային տեղեր գրաված թիմերը:

Առաջին տեղը երկրորդ տարին անընդմեջ գրավեց Ստեփանակերտ քաղաքի հ. 8 ավագ դպրոցի թիմը: Երկրորդ տեղը գրավեց Մարտակերտի շրջանի Հաթերքի, իսկ երրորդ տեղը՝ Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցների թիմերը:

Մրցանակային 1-3-րդ տեղեր գրաված թիմերը ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից պարգևատրվեցին դիպլոմներով, գավաթներով, իսկ թիմերի բոլոր անդամները համապատասխանաբար՝ 10.000, 7000 ու 5000-ական դրամ գումարով:

Պարգևատրումները կատարեց ու հաղթողներին շնորհավորեց ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար Մ. Համբարձումյանը:

Հաղթող թիմերն ու անհատական հաշվարկով լավագույն արդյունքներ ցույց տված շախմատիստները գավաթներով ու արժեքավոր նվերներով պարգևատրվեցին նաև ԼՂՀ շախմատի ֆեդերացիայի կողմից:

Պարգևատրումները կատարեց ու հաղթողներին հետագա հաջողություններ մաղթեց ԼՂՀ շախմատի ֆեդերացիայի նախագահ Ա. Մկրտումյանը:

Մրցումների հանդիսավոր փակման արարողությանը ներկա էր Հայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ՝ գրոսմայստեր Ս. Լպուտյանը, որը նշելով, որ շախմատը գնալով մեծ մասսայականություն է վայելում Արցախի դպրոցականների շրջանում, արժեքավոր նվերներ հանձնեց բոլոր մասնակից դպրոցականներին ու հայտնեց, որ մայիս ամսում առաջին անգամ ՀՀ դպրոցականների օլիմպիադայի եզրափակիչ փուլը կանցկացվի Ստեփանակերտ քաղաքում, որին կմասնակցեն Ստեփանակերտի հ. 8 ավագ և Մարտակերտի շրջանի Հաթերքի միջնակարգ դպրոցների թիմերը:

Հուսանք, որ մեր շախմատիստները պատվով հանդես կգան այդ մրցումներում ու բարձր կպահեն մեր հանրապետության պատիվը:

***Մուրադ ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

✉ Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorctert@mail.ru; www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 19.04.2014թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: